10

[illegible] Ձ Հ

699

Printed in Turkey

2320

Չէքէն Պաղտասար՝ Դպիր
Քօթգոլեան. Կոստանդնուպօլսեցւոց
կատարեալ (. տպեալ 91/59)

2004

1219-Ch4

Printed in Turkey

# Օրինակք Բարեւագրաց Նորայես Շարադրեցեալ։

## Օրինակ Կաթողիկոսին։

ԱՄԵՆԱՐ ՊՐ ՏՈՒԵԱԼԻ

և գերափայլականացայտ արփիա_
դիտակ լերինն բարձու՝
բազմեալդ գերաշուք փա_
ռօք՚ի ծոց և՚ի գիրկ արա_
րատեանն դաշտի · յանդիման մասնայ
հրաշալոյ Նաւահանգստի Նոյեանն տա_
պանի · և արդեամբք ՚ի վեր քան զնոյն՝
իսկապէս վերինն կամարի սրբէաձեմ և
քրոբէական գահոյն Տրունեաց և տանն
ա̃յ սրբոյնդ Էջմիածնի՝ ա̃մ Հայոցս ա_
թոռոյ · ամենապայծառ քարանցն և հո_

ղոյ և որ այդր կան սրբութեանց՝ աւա-
սիկ շրթամբք հոգւոյ որոց արդէն իսկ
անկեալ առաջի երկիրպագանեմ։ Ընդ որս
և ամենամաքուր այդր հարսինդ սրբոյ՝ ար-
ժանաւոր վեհայի և ծայրագոյն քահա-
նայապետի՝ գերամեծար երիցս երանեալ
մեծի Տեառնդ սրբազան ինքնագլուխ
կաթողիկոսի ամ̃ Հայոց, և փոխանորդի
երանեալ հայրապետին մերոյ սրբոյն գրի-
գորի։ Հաստատակաց հօրդ սրբոյ և բոլոր
ագինս արթուն դիտապետի՝ զհետս
գարշապարացն համբուրելով մեղաւմած
շրթամբք ամենանուաստս և յետնեալ ծա-
ռայս 'ի յիղձ անպատմելի. հարցանեմ
զվեհափառեալ անձինդ սրբոյ զմաքուրն կե-
ցութէ իբր 'ի բերանոյ յոյժ նուաստ
ծառայի. (այնր ևս թէ արժանացայց)
թէ որպիսի արդեօք գերափայլէ քոյին
տէրութենդ իբր զճրագ գերանշոյլ 'ի նսեմ
երեկորեալ ժամանակիս. Օ որ պահա-
պանն իսկ հաստահիմն արարեալ 'ի վր̃
հայրախնամ առաքելական աթոռեդ՝
անփորձ և անսասան պահեսցէ զարհիա-
կան գլուխդ մեր՝ համայն ուխտիւքդ
քոյայնովք. որք պար առեալ կան 'ի ծոց
մայրախնամ գերահռչակ սքանչելի քա-

էջ որ մենաստանիդ ամէն։

Իսկ զչնչինս ողոքսութի թէ հարցանել կամիցի գերավքսեմ քո հայրութիդ , բիւրիցս բիւր անթիւ գոհութի մշտախընամ բարերարին . որ մինչև 'ի կէտ համբուրման անարժան բերանոյս զխոշիս ոտից՝ պահեալ է զանպահելիս ած ազգութ խնամոյն իւրով և հօրդ սրբոյ մաքուր մաղթանօքն ։ Որոյ դարձեալ քաղցր գթութն յուսամք պահիլ յետ հօրդ մերոյ պահեալ լինելոյ իբր ըղգլուխ կենդանական քեզ կեցեալ անդամոցս ամէն։

Նաև յայտ լիցի քոյին սրբութեդ և յարահոգ հայրութեդ որ իմ հայր , զի գիր տէրութե քո և հայրութե՝ էհաս առ հէքս քո ծառայ 'ի վերջն սեպտեմբերի . զոր ընթերցեալ լցայ անպատմելի խնդութ . իբրև երկնաէջ պարգևօք և առաքելկն ձեռնին գրովք բերկրեցեալ։ Նաև գիտացի ոչ և գիտէի իսկ զիմն պարտաւորութի առ հայրագութ սէր քո որ առիս . և խնդրեմ ներել քո այսր ծառայի խոր տըմարդութես սակս համելոյ գրովք զգարշապարս քո համբուրելոյս։ Յիրաւի ոչ կարեմ թէպէտ անպարտաւոր

ւոր զիս առնել յայսմ մասինս, գոյ սա_
կայն գոյզն ինչ պատճառ հոգ մտրմնոյ
և զբաղմունք աշխարհի զոր քաջ գիտէ
հօրդ իմոյ մտացն բացութիւն։
Եւ այլն զոր ինչ չափս առեւ՝ փրկեաւ չինի. և 'ի
վերջին առ, Եւ ոսկ լեր գլուխ մեր
պատուական ակամն՝ երկար ամօք և խաղաղ կե_
նօք 'ի պիտանաւորութի բոլոր ազգիս
հայաստանեայց՝ տն տյ հզօր աջոյն
պահպանութեամբն ամէն։

(պ. չ. դ)

Պարջեալ Կաթողիկոսէ։

Բարձրաբերձ աշտարակ և գմբէթ
ամրափակ. ջահ արեգակնափայլ
և քաղաք անթաքչելի 'ի վր լերինդ բար_
ձու սբյնդ սիօնի, և պարիսպ շրջապատ
տր եկեղեցւոյ՝ շինեալ ձեռամբ աննեղ
շինողին. Երանաշնորհ և երջանիկ տծ_
արեալ սրբազանդ Հայրապետի սբյ գա_
հինդ Էջմիածնի մօրն մերոյ հաւատոյ.
և սրբանուեալ արիական դիտապետի և
արթուն հովուի բոլոր տանս հայաստա_
նեայց Լուսաւորչածինս երամոց Տնդ
մեծի երիցս երանել սրբազան Կթղկսի
ամ Հայոց. ըղձակաթ անձկութբ և բա_
ղում

զորմ կարօտիւ երկնընթացդ գարշապա_
րաց և տնամերձ որ աչացդ համբոյր ար_
ժանաւոր առ ընծայելով յանարժան շր_
թանցս · և Քնաէջ և լուսացնցուղ ածա_
բընակ որ խորանացդ և որ նշանացդ և
այլ սրբութեցն որ սոյդր կան՝ տալով
երկրպագութի ը̃ արժանոյն, Հօրդ մերոյ
սբյ հարցանեմ զգխարդուէն 'ի տարուսա
սաղի ոչ թէ կարի 'ի մօտուստ · և զա_
զօթսքո որ անընդհատ առնել խնդրե_
լով վն̃ քոյոցս ծառայից, զկեւլուի Հօրդ
մերոյ անփորձ և անսասան՝ խաղաղ և յար
առողջ լսել միշտ և խնդալ ցնծալից հո_
գւով յաւէտ փափագիմ · ողջ լեր ։

Նաև թէ զյետնեալս տմիւ կամեցի հար_
ցանել, քոյին հայրութիդ ով դլուխ մեր
և պարծանք Կլթղկէ եկեղեցւոյ, քոյին
արժանաւորդ մաղթանօք եմք ողջ և
առողջ գթած անհուն խնամովքն բարե
րարին ։ Որ նոյն ինքն քաղցրագութն որ՝
տալով աղօթօղս միշտ զնը հայրդ մեր՝
բոլոր աղէնս թորգոմեան, խնամեցեսցէ
զօրհանապազ ցուցադնեալ անդամոցս ը
ամենառողջ գլխովդ մերով ամէն ։

Նաև յետ ծառայական և ողջնական համ


բու

բուրխս՝ յայտ լեցի հօրդ մերում մէջ.
զի (այս ինչ և այս ինչ։)

Ու ողջ լեր Ընդհանրական գլուխդ եկե֊ղեցւոյ՝ միահեծան քահանայապե֊տութեամբդ ամէն։

Անարժան ծառայ Մահտեսի Պետրոս։

Պրոաբջէալ Կարնողէնոսի։

Գերայարգելի և գերերջանիկ, գե֊րիմաստ և գերահամբաւ արփիա֊ւորիչ տանս Հայաստանեայց։ Հովիւ ա֊մենարի և դարմանիչ խնամատար լու֊սաւորչածին ազինս Թորգոմեան։ Մ՝ծի քահանայապետիդ ո̃յ երիցս երանեալ Հայրապետի մօրս մերոյ սուրբ Էջմի֊ածնի։ Ներկայապահ յաջորդ և փոխանորդ՝ հոգւոց մերոց լուսատուի բազմաչար֊չար նահատակի սբ̃յն գրիգորի մեր լու֊սաւորչի։ Մանաւանդ թէ սբ̃ց առաքե֊լոցն ք̃նի բարդուղիմէոսի և թադէոսի՝ որբազան և վեհազան ա̃մ Հայոց Կաթո֊ղիկոսի. զերկնաշուք զմաքուր ներբանսըն համբուրեմ մեծաւ սիրով և յոյժ կա֊րօտիւ ՚ի հեռուստ աստի իբր ՚ի յոյժ մօտոյ. անարժան և անպիտան և անար֊

դիւնքո ծառայ՝ շնորհամէքս յոյժ մեղա_ւոր ։ Որովք եւ զորպիսութե՟ հօրդ հա_սարակաց սրբազանն անձին հարցանելով հարցանեմ թէ եւ ոչ եմ արժանի եւ յոյժ տարակուսաց · այլ ը՟ս խոնարհ քո բարուցդ համարձակեալ , թէ չի՟մ արդեօք իցէ քոյին վեհազան Տէրութի՟դ ՚ի դասն եւ յոգնավիշտ եւ յոյժ տաժանուտ ժամանա_կիս ։ Զոր Տէրն տէրանց հաստատուն եւ անշարժ պահելով ՚ի գահակալութե՟ առաքելական աթոռոյ հայաստանեայցս եկեղեցւոյ , ո՟ղ զանձրեւ արդիւնական ՚ի շահաւէտ ամպոց ա՟ծոյին խնամոցն իւ_րոց սրսկեսցէ ՚ի դէպ ժամանակի յայ_դիս բանաւոր՝ մերոյ տառապեալ ազգիս առ՚ի պտղաբերութի՟ զանազան պտղոցն

երանութե՟ ամէն ։

Եւ թէ քոյին այս չնչին ծառայի հար_ցանիցի որպիսութի՟ ՚ի քումմէ բարձր Տէրութե՟դ եւ խնամածու հայրութե՟դ , գո_հութի՟ անհատ եւ փառք անչափ բարերա_րութե՟ խնամակալ արարչին · որ մաքուր աղօթիւք սրբազան հօրդ հասարակաց՝ պահեալ է զմեզ անարժանութիւս մինչեւ ցայսօր անհուն ողորմութե՟ն իւրով ։

Արդ յետ այսր ժամու՝ պահեսցէ՛ նախ զսրբազան վերադիտող հայրդ մեր բո-լոր ազգիս, և այս քոյին մաղթանօք զմերս տառապելութի. Ամէն։

## Դարձեալ Կաթողիկոսի։

Պիտապետ արթուն և ջովքն ըղ-դուշաւոր՝ բանաւոր հօտինս հայ-կազնեայց։ Ժառանգ արժանաւոր հայ-րապետական աթոռոյ սրբոյն Գրիգորի հովուելին հայաստանեայց։ Աստմօղ օրի-նաց և ուսուցող պատուիրանաց։ Կեն-դանի բանին սպասաւոր՝ և եկեղեցւոյն քնի իմաստուն մատակարար։ Սրահե-ծան գաւազանաւ գերազանցեալ՝ հօրդ մերոյ սո՟յ և երանեալ հայրապետի սո՟յ դա-հենդ Էջմիածնի՝ և երիցս երանեալ սրբազան Կթղկսի ամ՟ Հայոց՝ զներբա-սրն օծանելոյ և զաջն ու՟ ամ՟ատերա՝ կա-րի ըղձիւ համբուրելով անարժանս շըր-թամբք, զոր՟ն ամ՟ապահ քոյին կեցուցեալ ՚ի ձախողակ ամանակիս՝ թէև չէ ըմբռն-խմն տրբպութե՝ հացանելով հարցանեմ։ Այլ որ կեայ միշտ ՚ի նոյնութե, զնորութի հօրդ մերոյ սո՟յ միշտ նոյնապէս ՚ի խոր անդորրութե առ պահելով, և իբր կցօղս



շա

շահեկանս ծրարելով յամփոփ խորոցն խնամոց, տացէ ցօղիլ և սրսկիլ 'ի դէմ ժամանակի յայգիս բանաւոր արամեան ազգիս. զոր ընկեցաց աջն Հայրականն՝ մշակեալ սրբոյ առաքելոցն Թադէոսի և Բար_դուղիմէոսի և Նոցին յաջորդի սրբոյն Գրիգորի։ Այլ արդ զնոյն մշակաւն ու_նողեալ զանեղի՝ տացէ կարօղն տէր կար և զօրութի. ընոցինն ապադրել յանձինդ սրբութ զնմանութի ամէն։

Նաև մերս կեցութի՝ կեալով 'ի վերքան զարժանն 'ի խնամսն քո՝ Հօրդ սրբոյ Հանձնականն ազօթիւքն, ու ամք դարձեալ յարապարեալ նոյնոյդ որբազանի մշտա ցընցուղ օրհնութեցն անձրևաց իբրու յերկնուստ առ իջեալ։ Այլ մի լիցի ան_յայտ 'ի քէն Հայր որ. զի (այս ինչ և այս ինչ.) և այլն։

Այլ ողջ լեր ով արձան հաւատոյ և քանոն օրհնաց Հայր մեր սրբազան անդորր և երկար կենօք ամէն։

## Պարճեալ Կանոնդէկոն։

Արմաշնորհ Աստուածընտրեալ սուրբ Հայրապետի. արքինական և արխա_կան հովուի ընդհանուր Հայկազունեայցս

տոհ

տոհմի՝ Երկնային քահանայապետին ճշ-
մարիտ միաշաւիղ երջանիկ դիտապետի ·
իմաստուն հեղինակի և հանճարեղ բա-
րունակեալ՝ և երկնաւոր Թագաւորին
դերդաստանի հաւատարիմ տընտեսի ,
Հօրդ մերոյ սբյ և բացորձակ արհիա-
կան քահանայապետի սբյ սրբադումար
մենաստանի և մօրն հաւատոյ սրբոյն
Էջմիածնի · ածաբան վարդապետութե
հանուրց հայոց լուսաւորող երջանիկ
սրբազան Կաթողիկոսի բոլոր բովանդակ
հայոցս տոհմի , զներբանան ելթերաձեմ
և զաջն սուրբ գերավլսեմ տռէպ տռէպ
համբուրելով , զկեցուն տիրապարվակ
և շնորհորակ անձինդ սբյ՝ ծառայս ան-
պիտան և կարի խոստան՝ բազում և յոժ-
րաձանօք և կարօտանօք հարցանելով հար-
ցանեմ · Թէ զո՞ր եղանակ զկենցաղոյս
տաժանման բերէ նարդենիս : Ունե-
լով մանաւանդ զարնուլ և զհոգ հօտին
Քի ու առաքելոյն բանի · Որում եղել
վօրավերդն անհունատօր ոջն հայրական,
պահեսցէ միշտ ի յարկածիցն ամենից ան-
սասան և անվրդով խոր խաղաղութե ամէն :
Եւ ծանիցէ քոյին սբ հայրութեդ սբ
խմ, զի գրեալն գիր յերկիցս երանեալ


սբ

որ հօրէդ իմմէ 'ի վերջն մարտի, եկն էհաս առ քո ծառայս• և լցոյց զսիրտս մեր անասելի խնդութեամբ• Ո՛չ է միայն գոլն որ հօրդ ներկայ, կենդանութիւն է մեզ մեռելոցս•

Եւ ողջ լեր ուրեմն ով գերերջանիկ Հայր• 'ի փառս զքեզ ընտրողին, և 'ի պարծանս բոլոր հայկազունեաց ամէն•

Պարչէտալ Կարողէկեան•

Ո առ 'ի յուծուստ գերապէս պատճառ, և համակ ճառագայթիւք արփիափայլեալ• Ո՛ մայրդ հաւատոյ և զլուսաձևել հրաշակառոյց տաճարդ երկնահանգէտ ծնօղ մեզ գտելով յարդարայար գելն, դորին իսկ հոգեհանճար հայրապետի և միապետական պատրիարգի վաղարշապատու ծայրագոյն քհնյապետի կթղկէ եկեղեցւոյ երիցս երանեալ սրբազան կթղկսի ամ̃ հայոց• ա̃ծամերձ աջոյն և երկնընթացդ ներբանացն համբոյր մատուցեալ յետնելոյս ընաւին մեղաւորածն շնորհաց՝ զ̃օրդ հասարակաց զորպէսն կեցուն 'ի տաժանմունս վշտաշատ վայրիս հարցանելով հարցանեմ• Ո՛ որ հաստիչն ամ̃ի՝ հաստատուն պահելով, շնորհեսցէ



զան

զուարճութի̃ երջանիկ հօրդ մերոյ տէ̃ր որ-
դւոցս քոց հայկազունեայց՝ երկարեսցին
ամանակօք ողջ և առողջ և ամբողջ ամէն։

Ու հայրդ գթած՝ թէ գիտել սակաւ-
ւիկ յօժարիցս զնուաստիս որդւոյութի̃,
քոյին հրամանուցդ ընդունական աղօ-
թիւքն՝ պահեալ է զմեզ բարերար տ̃րն՝
իւր անսպառ գթութե̃ն 'ի վեր քան զար-
ժանն մեր անհուն աստիճանօք։

Խնդրեմք ուրեմն ով հայր հասարա-
կաց, զի զաղօթս և զօրհնութիս հա-
ճոյական և հաշտարար քոյինդ մաղթա-
նաց՝ անպակաս արասցես 'ի քոյոցս ծա-
ռայից ողջ լեր։

Ու յետ ծառայական և ըղձական համ-
բուրիս՝ յայտ լիցի հօրդ մերոյ տէ̃ր,
զի (այս ինչ և այս ինչ։)

Ու ողջ լեր դարձեալ ով հովիւ հոգևոր
և տնտես տանն այ̃ ամենակալի։ Հաս-
տատեալ 'ի վր̃ գերադրական աթոռոյդ և
բարձրիշխան գաւառանիդ ամէն։

Ու ընկալ 'ի քո պխնակ ծառայէս լո-
մայեկ մի լուսագին տը մօրս մերոյ էջ-
միածնի տծ̃ածնակ խորանին ութ ոսկի
և թղթիկ մի խունկ։

Ողջերէհ հասցէոջ գնաս։

## Մէ Նշէնայ Պատարագէ·

Ի ակամ բանին հօր՝ տանն տընտեսի, և աւետարանի նորին ամազանքա_ րողչի · Մէջն յանկուցյ արդարոյ և անեղըօր գերագահ աթոռոյն առեղա_ պահ երկցս երանել հօրդ խմոյ երջանկի՝ այդն մէջ համբոյր ծառայական ընծայե յում , զխնհազան որ անձինդ կեցութե ընդում ըղձանօք հարցանելով հարցանեմ· թէ զոր արդեօք եղանակ վշտաշատ կեն_ ցաղոյս և դժուարուտ ժամանակիս կրե քոյինդ սրբութի · Ո որ պահապանն ամի մշտագութ խնամովքն իւրովք՝ պահես_ ցէ զորդ իմ հայր՝ ը երկայն ամանակս անփորձ և անսասան՝ Պահպանութե զը_ րացն իւրոց անմահից վերնոցն պարուց իւրև զդանձ պատուական փարթամա_ ցուցիչ բոլոր քոյ տոհմիս ամէն·

Իւ թէ քոյին սրբութիդ զմերս նուա_ տութն գիտել կամիցի զորպիսութե, զու_ հութի և փառք բարերարին այ · որ հօրդ մերոյ արժանաւոր աղօթիւքն պա հեալ է զմեր անարժանութիս մինչև ցայս կէտ ժամանակի ողջ և առողջ առանց իւիք պակասութե ըստ մարմնոյ · բայց 'ի

քաղցր տեսութէ հօրդ իմոյ մեծի մխի-
թարիչ արփիաւոր երեսացն.

Խնդրեմ ուրեմն հայր պատուական՝ զի
զաղօթս քոյին սրբազնութեդ և զօրհ-
նուին ուր տնօրինական տեղեացդ անպա-
կաս արասցես 'ի քոյին յետնեալ ծառայ-
ես մահտեսի Մարտիրոսէ ամէն.

Նաւ յետ ծառայական համբուրիս ա-
ջոյդ քոյ սբյ՝ յայտ լիցի քոյին սր-
բութեդ տր իմ հայր. զի գիր շնորհա-
լի մնասանց քոց էհաս առ ծառայս ան-
պիտան. զոր ընթերցեալ՝ լցայ յիրաւի
անպատմելի խնդութբ ոգյ երկնատուր
առատ պարգևօք և առաքելական ձե-
ռինն գրուածովք. Նաւ զինչ ասեմ տր
իմ հայր, որ խոնարհիս միշտ հարցանել
զորպէսն քո անպիտան որդւոցս. Տէրն
տէրանց ընդ երկայն աւուրս արասցէ
զքոյին տէրութիդ, և հաստատուն պա-
հեսցէ 'ի վր առաքելական աթոռոյ սբյն
յակոբայ 'ի պարծանս կաթողիկէ եկեղե-
ցւոյ և քոյոց սիրողաց ամէն և ամէն.

Պատճէն ՄԷ Նամակ Պատրիարքի.

Ընդ հանրական և տիեզերական սբ
եկեղեցւոյն քո վարդապետ մեծա-
բանի.

բան • և քաղաքինդ ոյ՝ սբյնդ Սաղեմայ
վերադիտող վսեմական • Նարեանցն
ազգակից հոգևանորդ որ անձինդ պատ-
ուականի հօրդ իմոյ երիցս երանեալ
պատրիարգի գերահռչակ աթոռոյ՝ և պար-
ծանաց գահի հայոց՝ մեծի սբյնդ յկբյ՝
երկնաձեմօղ գարշապարացն տալով համ
բոյր ըղձանաց յանարժան բերանոյս մեղ-
սամած շրթանցն • Որպիսուէ երան-
շնորհ անձինդ սբյ թէ խնամոյս արդեօք
ունի կելուն յետնաժամեալ ժամանա-
կիս՝ հարցանելով հարցանեմ թէ և չեմ
իսկ արժանի • Նա խնդրեմ միշտ մեղա-
ւոր բերանովս , զի տէրն տերանց՝ դքո
գթած հայրութիդ ամբափակեալ պահես-
ցէ հրեշտակացն պահպանութե իբրու
մշակ գործունեայ իւրոյն այգւոյս
անձնատականի ամէն •

Իսկ թէքոյին ճշմարիտ խոնարհութիդ
զիմս վերջոտեալ անձին հարցանիցէ
զկեցուէն • ըխուրիցս ըխուր անհատ գո-
հուն ոյ • որ աղօթիւք սբյ հօրդ իմոյ՝
պահեալ է զմեզ առողջ և անբողջ մինչև
'ի կէտ համբուրիս որ գարշապարացդ՝
անհուն իւր ողորմութեն • Արև հայցեմ
միշտ 'ի քոյին քաղցրութեդ , զի որ ած-
ական

ակին տեղեացդ օրհնութեն հանդերձ՝ զայցելութս քո տէր՝ անընդհատ ՚ի մեզ առ_նելով, կայցես ՚ի համար ընդ ոսկեղէն անօթոցդ ՚ի տաճն սրբասնեալ սրտի քո՝

և զխեցեղէնս խոտան և ողջ լեր.

Յուշ լիցի հօրդ իմոյ տէր, զի շնոր_հալի գիրքո ձեռնինդ՝ եկն եհաս առ իմն նուաստութի և ետ ինձ բերկրութի ՚ի վեր քան զքանն. իբրու վերնապար_գև արգասիւքն իմն ծրար՝ ընդ հոգևո_րին և զմարմնականն առ ընկալեալ ըզ գլխանոցիկն այլովքն հանդերձ. Շէն լեր ուրեմն տր իմ հայր, որ վս անպի_տանիս միշտ ՚ի զահմէթ մտանես. Այս ողջ լեր ով պարծանք եկեղեցւոյ և խըն_դութի սրբածնելոց մանկանցն ՚ի քս. Ուրախ առնելով միշտ զծառայս քո՝

քոյին առողջութեդ լրոյն ամէն.

## Պատճէն Մէ Նշխայ Պատրիարգին.

Թագաւորին երկնաւորի ընտրեալ սրբոյ քաղաքին Եէմի, և քի փրկչին մերոյ տէր անօրինականաց գե_րահրաշ և գերապանծ ամենապայծառ քարանցն և հողոյ և որ յայդր կան սրբ_ութեցն՝ ամենախիղճ բազմանօք տալով

երկրպագութի, դորին խակ՝ մըյնդ սաղիմ
բարձրապատիւ գերերևակ՝ ամ աղինս
պարծանք մեծի գահինդ մէջն յակո-
բեանց՝ ամենարժան պատրիարգի ար-
թուն անուն սրբազանի՝ մաքուր աջոյն
և որ ներբանցն համբոյր ծառայական
մատուցանեմ անարժան բերանով յետ-
նավերջ հողոյս։ Իսկ թէ ո՞չ կեայ քո-
խնդ տէրութի՝ ի տառամնեալ ամանակիս՝
հարցանելով հարցանեմ։ Տէրն տէրանց
ածն ամենի զպատուական անձն հօրդ-
մերոյ սրբազանի՝ զպայծառ ջահդ ար-
փիածագ՝ յամ հողմոց դիմակայնչից
անշիջանելի պահելով յամ կողմանց, առ-
ցէ բերկրել մեզ յարակ լուսովդ քով
դերափայլիւ, կամելովն և հաճելով և խը
նամով խուրոյն բարերարութեն ամէն։
Իսկ թէ զմիլիւ յետանելոյս զընկիցես
զորպխուտի որ իմ հայր, ահա փառք
բարերար խնամոցն այ. որ հօրդ մերոյ
մէյ մաքուր մաղթանօքն պահեալ է մին-
չև ցայսօր զմերս անարժանութի իւր
անհուն ողորմութեն։ Իսկ խնդրեմք միշտ՝
զի զհօրդ մերոյ զմիշտն անդորրութի
լսել տալով որ քոյոցս սկրողաց ; բերկ-
րեցուսցէ զըոլոր ազգս մեր քոյովդ
Բ. կեն



3261-57 1231

կենդանութիւն ամէն։

Սու գիտասցէ քոյին սրբութիւնդ տէր իմ հայր, զի գիր շնորհածրար քո տէր հայրութեանդ՝ եկն է հաս առ հէքս քո։ Խնդութ մեծ պարգեւելով մեզ քոյոցս սիրողաց՝ աղօթք և օրհնութ տեր հօրդ մերոյ համադերձ անեղերատարած շնորհի, որ տեղեացդ փափագելեաց։ Սացի և կրկին ասեմ և ոչ դադարիմ, զի տէր անփոքձ և անսասան պահեսցէ զքեզ։ Սու ողջ լեր ով գերահռչակ նպատակդ բարեաց քոյայնովքդ ամենեքումբք իւր զդրախտ անմշակ բազմախիտ տնկովքդ ուռճացեալ պերճացեալ և զուարճացեալ 'ի տէր, 'ի պարծանս եկեղեցւոյ և անպիտանքոյ ծառայիս մահտեսի յօհաննիսի

ամէն։

Սու ընկալ տէր իմ հայր՝ երկու զինձիրլի ոսկեկ, և թղթիկ մի խուննկ իւրու նուէրքչիկ որ ասնդ դաստատանի յիմս նուաստութենէ քոյինդ

խոնարհութեամբ։

## Պատճէն Մէ Սէմայ Պատրիարքի։

Զարթուն պաշտօնեայ միոյ պաշտեցեալ էին։ իմաստուն մատա-



կա

կարար մշտալիր մառանի նորին ։ Վա-
ռանդ նախնեացն որբուն և շառաւիղ
կենացն բարուն ։ Հովիւ հոգևոր և ջահ
լուսաւոր մեծի կողմանդ պաղեստինոյ
և քահանայ գերապանծելահրաշ տեառն քա-
ղաքին ։ Եմի՝ յոգնահանճար և ճգնազգ
գեաց Պարթևարգի երկցս երանելոյ տեառն՝
գահամերձ տէր այն ընտելոյ համբուրե-
լով յարատուչոր կարօտիւ , հարցաբանեմ
զեղանակէ մաքուր կեցուեր թէ որպէս
կեայ քոյին տէրունդ ՚ի նեղ և՚ի նեղիչ
դարուս և ժամուս ։ Որ խնամն վե-
րին այցելուն զնա տեղեացդ այցելուդ՝
իբրև զգիր փորեալ յարձանի՝ պահելով
անխնաս յարկածիցն անձրևաց ։ շնորհիցէ
ազգիս մերոյ Տէր երկար ամանակօք ամէն ։
Եւ զանապիտան ծառայս թէ հարցումն
առնիցէ քոյին հայրուդ տէր իմ սրբազն ,
բարերարին տէր փառք ։ որ աղօթիւք
հօրդ մերոյ տեառն՝ եմք պահեցեալ ողոր-
մութեր նորին մինչև ցայսօր ։ և յուսամք
թէ և պահելոց է միշտ թէ ունիցիմք
այլ ևս ժամանակ ըստ նորին անքննելի
կամացն հաճութեն ։

Եւ յայտ լեցի լուսաւոր քոյինդ մտաց
տէրութեն հայր իմ տէր , զի խոնարհ ան-
ձին

ձին քո գիլին շնորհացնցուղ՝ եհաս առ
փոխս յետմնեալ · ընդրելով շնորհս 'ի սբ
տնօրինական տեղեացդ և 'ի գերամաքուր
ոգւոյ հօրդ սբյ · զոր յիրաւի տուեալս
համարելով երկնապարգև , մնամ պար_
տական քոյինդ սիրոյ չպխտամն քո ծնյս
մնահտեսի ստեփաննոս ։

Նու ողջ լեր ով քաղցր յիշումն մտաց
իմոց հայր պատուական · երկար ա_
մօք , անսասան կենօք , ողջ և առողջ
անձամբ 'ի պարծանս քոյոց սիրելեաց ,
և մնասցամնդ անարդիւն քո որդեկիս
'իքո յո ամէն ։

Դաւրձէլ ՍԷ Նրէնայ Պարիերկէ ։

'Ի հոգւոյն ընտրեալ և յառաջ կո_
չեալ · վարուք մաքրազարդեալ և
իմաստիւք գերափայլեալ Սրբութեան դի_
տապետ և սրբազան հայրապետ սբյ ան_
նման քաղաքիդ Սէմի , և բոլոր տըն_
րինական տեղեացդ քն բարձրապատիւ
պատրիարդ ։ Սպիր խսկ հօրդ իմոյ սբյ
զսէ ներբանան համբուրմամբ՝ բազում
կարօտիւ՝ հարցանեմ վերստին զպատ_
ուելի կեցուէ երջանիկ ծընողիդ իմոյ
ժեծի , թէ որպէս արդեօք կեայ քոյին

տէ

աներութիդ ՚ի ներկայում այսմիկ դառն և
դժուար շրջանակիս ։ Ս—ԺԼ պահօղն և
նախախնամօղն ամի՝ պահեալ զմարդա_
րիտդ լուսափայլ ՚ի խորս ողորմութեն
իւրոյ ծոցու , զորդւոցդ քոց փարթա_
մութի քեւդ մեծութի , անկողոպտելի
յարապահեսցէ ՚ի մնախանոց անբաւորեսէր
առեցողլին ամէն ։

Ու իմն յանդորրելեացն հաշուի անձինս
ապխտանի որպիսուն՝ թէ հարցման լեցի
արժանի ՚ի քոյինդ սրբութէ , յամ անձա_
նէ և յամ մօտոց դոհուի և փառք տայ ։
որ մինչ ցայս կետ ժամանակի ոչ ոտեցդ
համբուրմանս՝ պահեալ է զանպահելիս՝
հօրդ մէջ ընդունական մէջ աղօթիւքն ։
յորմէ և յուսամք պահիլ դարձեալ . թէ
տացէ այլ ևս կերուի ոտ և համձի բա_
րեկար կամքն իւր՝ հօրդ մերոյ մէջ
ամրակելոյին ամէն ։

Ու քոյինդ վեհանլուսար հայրութե յայս
լեցի որ իմ երջանիկ , զի դիր սրբ_
բալունութեդ քոյ եկեալ հասեալ առ քո
խանդակաթ ծառայս , բերկրեցոյց ժի_
րաւի զանձն իմ հոգածուփ անասելի
բերկրութէ իբրու երկնային պարգևօք
լցեալ ։ Ու այն զի դրեալ էր քոյս
հայ

հայրութիդ թէ՝ եմք ահա ՚ի մէջ անհուն տառապանաց։ Տացէ տր կար և զօրութի ամ ընթացից կենակիր համաձարեղ քղյ-ինդ քայլման։ Ով է սատյգ է տր իմ, թէ ա տուն և հոգ իւր։ Կեցցէ հայրդ իմ և օրհնեսցէ զմեզ. Մնալով քայլն պխտանաւոր տէրութիդ ընդ երկայն ամանակօք՝ ողջ և առողջ և ամէողջ անձամբ ՚ի պարծանս համայն քրյոցդ որդւոց՝ և մանաւանդ քո այս անպիտան և յետին ծառայի մանհանեսի ալբրահամի ամէն։

Նաև ընկալ հայր մեր զքչիկ ինչ ՚ի մերս յոգն ըղձից՝ զ ղերմահպուպ իւղադին ամծաբնակ մեր խորանացդ, և հողաթափիկ մի մեր ոտիցդ. և ողջ լեր իմ աչաց

լոյս հայր պատուական ամէն։

## Պատճէն Մէ Նշանայ Պարբերգէ։

Այնալանջ վատակօք հոգւոյն սէյ տուատացեալ. Հ ուսոյն ամծայնով լուսին լուացեալ։ Մ ործապետ ամծաբան՝ իմաստիւք ծաղկեալ։ Ի հարցն երանելեաց մեզ վեր ընձիւղեալ։ Հօրդ իմոյ սրբազանի երկիցս երանեալ պատրիարգ ի մեծի քաղաքիդ մյ սէյ եէմի, ամծամերձ աջոյն և երկնաեւ ոտիցն համբոյր



մա

մատուցեալ բազում ըղձանօք և շատ կա-րօտիւ, հարցանեմ անարժան բերանովս ամենայետնեալս՝ զտ̃նդ իմ̃յ ո̃ր կեցու-թենէն թէ ո̊րպիսաբար արդեօք կեայ 'ի յարավիշտ վարանման վայրիս և 'ի ժխոր ժամանակիս ։ Տէր ա̃ծն ա̃մե 'ի գոդ-գթուե̃ իւրոյ պահելով յարակ զջահդ-լուսաւոր՝ յա̃մ ճշաստակար հողմոց պա-տահմանց, տացէ որդւոցդ քոց հայրա-սիրաց՝ ցնծալ 'ի լոյս իմաստից քոյ գի-

տութեանդ ամէն ։

Նաև որդեակք քոյին հայրութեդ՝ զմերս որդանութիւն թէ արժան համարիցի հարցման, հօրդ իմոյ ս̃րյ գերընդունա-կան աղօթիւքն և հանճարական մտղթա-նօքն, պահեալ և պահպանեալ կամք մին-չև ցայսօր ընդ աննուաղ ողորմութե̃ն ա̃յ ։ որև յուսամք և աղաւխնմք պա-հիլ ևս և խնամիլ գեր քան զարժանն մեր՝ թէ ունիցիմք այլ ևս կեալ 'ի կամս անհունն նոյն մարդասիրին ։ Սպասելով հանապազ լոյս աւետման զհօրդ մերոյ

ողջ և առողջն գոլոյ ։

Նաև յետ որդիական սիրոյս և համ-բուրոյս մատուցման սրբոցդ քոց ներ-բանց, յայտ քոյին վսեմական տրուեդ-



լիցի

լիցի հայր մեր. զի ամենաշօշափ սուրբ մա-
տանցդ գիր՝ հասեալ լինելով վեհիս
և յեանեկցս, հոռ քնարուրին 'ի մեր
անօրինական տեղեացդ, և շնորհ և օրհ-
նութի դերբերանաէր քոյին սրբութեդ-
ռուռդեցին ձերբեթացեալ պասքեալ հո-
րացեալ անդաստանին ի բերու յիշաւի
'ի մեռելութե 'ի կենդանութի անդրէն
անդրաբերելով։ Բարդ՝ որ միշտ որդիս
սպունգ առ ընկալուհ՝ առնուս անմիջա-
բար զշնորհս մեր տեղեացդ ոստ 'ի համա-
տարած ծովէ շնորհաց, կաթիլ ինչ եր-
բեմնական՝ միջոցաւ անձինդ սրբազանի՝
թորեալ յանձն իմ կարօտեալ մի անտե-
սեսցես որդ և ոչ անտեսես միշտ։ Նա-
ուղջ լեր ում յարդեալդ 'ի յոլովից և
դրուատեալդ 'ի բազմաց հայր իմ պատ-
ուական 'ի պարծանս համայն մերազնեայց՝
և իմ քո ծառայիս մահարեսի անտօնի ամէն։

## Առ Մէ Կարապետ Առաջնորդին։

Խայտացողի ձայնին ընդ առաջ բա-
նին, և նախընթաց կարապետին
փրկական գալստեան նորին՝ մեր մեծի
ամենորդւոյն հրեշտակապար մենաստանին
երջանիկ առաջնորդի և սրբազան արք-
եպսկպի։

եղկելի ։ Նաեւս հոգեսրբնուհիդ զարդաց
մտամբ անձեալ խոհական և գիտնական
վարդապետի հօրդ իմոյ սբյ զմաքուր
այն համբուրելով բազում կարօտիւ և
յոյժ սիրով, զորպէսն կելուե մեհա_
վըսեմ քո սրբազնուենդ հարցանեմ ծա_
ռայս և կարի յետնեալս ։ Թէ որպիսի
արդեօք կեայ քոյին տրուեթիդ ՚ի յայս
նըսեմ և ժամանաժուռ ժամանակիս ։
Տէրն տէրանց հաստատահիմն կայունէ
անսասս և անսասան պահելով միշտ զհօրդ
իմոյ զերջանկուի յամ ձախորդակ հող_
մոց, աղօթօքս մեր շնորհեսցէ զքոյին
տր հայրուիդ՝ տմ հրեշտակակրօն ուխ_
տիւքդ հանդերձ ամէն ։
Իսկ զխնչոյս որպիսուի Թէ հարցանել_
կամիցի գերամեծար քո հայրուԺիդ,
բխուրիցս բխուր անհաս գոհուի մշտա_
խընամ բարերարին ։ որ մինչև ցայս կետ
համբուրման անարժան շրթանցս զաջդ
քո տր, պահեալ է զանպահելիս՝ տծա_
խընամիւր անհուն գթութըն, հօրդ
իմոյ սրբոյ մաքուր մաղթանօքն ։ Սոյ
դրօշ նոյն գթուըն յուսամք պահիլ յետ
սէյ անձին հօրդ մերոյ գոլոյն պահեցել ։
Նոյ յայտ լիցի քոյին սրբութեդ տէր
իմ

իմ հայր, զի գիր Երջանիկ հօրդ իմոյ
էհաս առ փոշիս 'ի տասն և մէկն յուն_
վարի. զոր իբրու ընթերցայ, լցաւ անձն
իմ ցնծութ̃ իբրու երկնաւոր պարգևօք
և առաքելական ձեռինն գրովք. Որև
խնդրեմ միշտ 'ի քոյին քաղցրութեդ, զի
երբեմն երբեմն 'ի սբ̃ ա̃ծաբնակ եղբայ_
րանոցիդ սբ̃յ մկրտչին, յիշել զմեղաւորս
'ի սուրբ աղօթս քո մի մոռասցիս.

Այլ ողջ լեր ով աչացս լոյս հայր իմ
պատուականն անսասան կենօք. քոյայ
նովքդ ամենեքումբք՝ աղօթակցօքդ վ̃ն
մեր ամէն.

(Անպիտան ծ̃ռյ քո մահտեսի ղուկաս.)

## Պարզէալ ՍԷ̃ Կարապետու Առաջնորդի.

Ծնող հոգևոր՝ և իմաստուն դաս_
տիարակ. Միրաշաղկապ բոլոր
մտեղէն եղբարցդ 'ի սբ̃ եղբայրանոցիդ
'ի սբ̃ հօրէն մերմէ նախակարապեց մենաս
տանիդ սբ̃յն յօհաննու կարապետին ք̃ի
և մկրտչին. համբուրատակ սբ̃ անտօնի և
կրօնիդեայ և եօթանցդ խոստովանակաց՝
Հօրդ իմոյ սբ̃յ՝ այդոքիկ իսկ ք̃աբնակ
շնորհաբաշխ սրբոտրանի արժանաւոր հե_
ղինակի և սրբազան եպ̃սի զսբ̃ ներ_
բանն

բանան համբուրմամբ անարժան շրթամբ
քըս , կարի յոյժ կարօտիմ . և ըղձալիր
սիրով իբր զծառայ զտ̃ն իւրոյ՝ հարցա-
նեմ զհօրդ իմոյ զսբ̃ կեցուէն թէ զո՞ր
արդեօք եղանակ կրէ ՚ի մարմնի ՚ի դառ-
նավիշտ ժանտուտ ժամանակիս ՞՚ի վա-
րանուտ վայրիս ։ Որև պահպանօղն
ա̃մք տէրն մեր զհայրդ մեր սրբազան
իբրու անձրևս շահեկանս պահելով միշտ
՚ի յամպ իւրոցն խնամոց , սրսկեսցէ
՚ի դէպ ժամանակի յայգիս իւր բանա-
ւոր անկեալս աջոյն իւրոյ հզօրի ։ Եւ-
տացէ միշտ մեզ ծառայիցս լսել զան-
դորր առողջութե̃ հօրդ մերոյ ս̃յ և
խնդալ բերկրանօք ամէն ։

Նաև թէ քոյին այս չնչին ծ̃ռյի հարցա-
նիցի հիկմնութի̃ ՚ի քումդ սրբութէ ,
գոհութի̃ անհատ և փառք բարերարութե̃
խնամակալ արարչին , որ մաքուր աղօ-
թիւք սրբազան հօրդ իմոյ , պահեալ է
զմեր անարժանութիս մինչև ցայս կէտ
պահուս՝ անհուն ողորմութե̃ն իւրով ։
Որև յետ այսր՝ պահեսցէ նախ զսրբա-
զան վերադիտօղդ սբ̃ գերեզմանի ս̃յ
ամ̃րդոյն մայլթանօք նորին՝ և սրբոյն
մերոյ լուսաւորչին , և այլս զմերս


տա

տառապելութի ամէն։

Եւ յայտ լիցի քոյին գերամաքուր սրբութեդ որ իմ հայր, զի (այս ինչ այս ինչ և այս ինչ։)

Եւ ողջ լեր ծով ազնիւ ակնդ պատուական հայր իմ գերամեծար համայն քեւապարփակ սրբազանիւք դասուքդ ամէն։ (Աշխատան ոսկերիչ մահտեսի Անտօնի։)

## Գովեալ Սբ̄ Կարապետ Առաջնորդէ։

Լուսածին արարչին` յամուլ ծնողէ մեծածնունդ մարգարէին, և անմահ փեսային սբ̄ փեսաւէրին գերամաքուր դամբարանին սրբեազուամօր մենաստանին համայն սրբութեցն երկրպագութի մատուցանելով յանարժանս շրթանց։ Գորին այդորիկ` բարձրելոյն փառօքն լցեալ կրօնաստանիդ` երից երանեալ առաջնորդի սրբազան վարդապետի` Յօրդ իմոյ սրբոյ զերկնագնաց գարշապարսն համբուրելով բազմաւնեչ սիրով և խանդակաթ կարօտիւ` մեղաւոր շրթամբքս անարժան բերանոյս։ Ո՞չն սրբակենցաղ ածահաճ քոյինդ կեցութե 'ի ձախընթաց ամենակիս` թէ և չիցէ ըմբռնն իմն արդարուէ` հարցանելով հարցա



ցա

ցանեմ։ Նաեւ այն որ կեայ միշտ ՚ի նոյ-
նութե, զտէրութի հօրդ իմոյ մեծ միշտ նոյ-
նապէս ՚ի խոր անդորրութե պահելով,
իւր զգանձ պատուական ամրափակեալ
ներամրոցի իւրոյին պահպանութե, արա-
ցէ մեալ անկապտելի յաւկան հաստատո-
ղոյն ամէն։

Նաեւ չնչինոյս կեցուի թէ լիցի հարցեալ
՚ի քումմէ տէրութեէդ. կելով ՚ի վեր
քան պարծանն մեր ՚ի խնամնն ոյ՝ հօրդ
ոէյ հաճոյականն աղօթիւք. Մնամք դէլ
նոյնոյդ սրբազանի անձին՝ վերստին մշ
տացնցուղ օրհնութեցն անձրեւաց. որ
եղիցի եղիցի ամէն.

Նաեւ լիցի յայտ քոյին տէրութեէդ հայր
սրբազան. զի գիրն գրեցեալ շնոր-
հածոր մատանց քոց ՚ի մէկն մայիսի՝
էհաս առ քո յետին ծառայս ՚ի վեցն
ապրիլի եւ լցոյց զսիրտս մեր անպատ-
մելի զուարճութեամբ իւրու խնկապէս ա-
ռաքելական գրեալ ձեռին. Նաեւ այն
զի գրեալ էիր հայր սբ, թէ եւ ոչ ժամ
մի ազատս զմեզ գտանեմք ՚ի խուժանաց
՚ի վր եկեղեցն ձախորդութեց։ Տր լիցի
քեզ զօրավիգն։ Օլ գիտէ հայրդ իմ
եւ յանդուգն է ասելս, թէ այս է ձանա-


պարհ

պարհ քո աշակերտացն ընդ նորին փրկա-
կան բանին ։ Նշան ուրեմն ճշմարիտ
աշակերտութեան՝ խաչին փրկական տնօ-
րէնութեան կատարողին երևեալ յանձին
քում սրբում, ունիս համագամայն ընդ-
նախածաղիկ երկոտասանից ընտրելոցն
յառաջ քան զլինելն աշխարհի ։

Նաև ողջ լեր ով ակն տունջեան և
փայլակն արևելեան, զօրացեալ տե-
րամբ և բարգաւաճեալ նորին շնորհօք
՚ի փառս պարծանաց բարձրացեալ եկե-
ղեցւոյն քո ամէն ։

Դարձեալ ՄԷ Կարապետս Սաանորդի ։

Ոգւոց մերոց սուրբ լուսաւորչին
նախակառուցց Այ տաճարին , և
շնորհաբաշխ միջնորդ մարմնոյն հանգըր-
տարանի մեծի ամբողջոյն այն Յօհաննու
կարապետին ։ Նաև այ գերամաքուր
նշխարաց այն աթանագինեայ հայրապետին
և անմարմնոյն ՚ի մարմնի այն անտօնի
և կրօնիդեայ և եօթանցն խառաճանակաց՝
և այլոց այդր եղեալ այսց պարուց՝ գե-
րապատիւ պաշտօնեայ , և միեղէն եղ-
բարցդ իմաստուն կարգաւորիչ , սրբոյ
հօրդ իմոյ երիցս երջանիկ առք եպիսկ
և

և գիտնական վարդ̃պտի՝ որ զաջն համ-
բուրելով գերեռանդն տարփանօք և
կաթոգին բաղձանօք՝ անարժան բերա-
նոյս մեղսաներկ շրթամբքն՝ զոր կեցու-
թենէ մաքուր քոյին կենցաղավարութե̃դ
թէ որպիսի արդեօք ներբողակեալ գե-
րափայլէ 'ի նսեմնեղ ժամանակիս՝ հար-
ցանելով հարցանեմ. Ո՛վ որ երկնայնոցն
պահապան և երկրայնոցս նախախնամ
տ̃ր և տ̃ծն տ̃մի՝ պահեսցէ զհայրդ իմ
յա̃մ ձախորդութե̃ց . հաճոյական մաղթա-
նօք նախայիշեալ վ̃ն մեր առ նա բարե-
խօսեսցդ . Իսկ զմերս փոշետեսակ նը-
ւաստութե̃ թէ հարցումն կալցէ քոյին
տէրութե̃դ , աղօթիւք հօրդ իմոյ երանե-
լւոյ՝ կեամք և եմք ահա մինչև 'ի սոյն
կէտ 'ի հայրական խնամմն երկնաւոր
հօրն գթածի . որում գոհութի̃ անհատ
և փառք անսահման այժմ և յապագայն.

Եւ յետ անարժան համբուրիս սրբազ-
նագործ որ աջոյդ , յայտ լիցի քեզ
տ̃ր իմ հայր , զի գիր քոյդ յարգոյութե̃դ
եկեալ էհաս մեղաւորիս հանդերձ այլ
երեք գրովքն . և որպէս հրամայեալ էր
քոյին սրբութե̃դ , տուի զիւրաքանչիւրն
'ի տէրն իւրեանց . Նաև զի գրեալ էիր
'ի

՚ի գրումն՝ քո ծառայիս, թէ ո՛վ սիրե-
լի իմ զի՛նչ զի մոռացար զմեզ։ Նուա-
լեցի ո՛ր իմ հայր՝ թէ մոռանայցեմ ըզ-
քեզ․ այլ զբաղմունք յարալեծուփ կեն-
ցաղոյս՝ ոչ ևս տան հանգիստ երբեք․
յորոց տառապանիմք մարմնով, և հոգւով
ոչ շահիմք ինչ։ Նախ հօրդ իմոյ մաքուր
աղօթիւքն՝ ընկալցի ո՛ր զյօժարութիւն
մեր ՚ի տեղի իբրու գործով եղելոյ յոր-
մէ յոյժ եմք տարակոյս։ Իսա որում
և հայրդ իմ՝ գթած հօրն նմանեալ,
ընկալցիս զխղձս մեր իբրու արդեամբ
կատարեցեալ։ Իսկ զուներն ծառայի
քո իղձ առ քոյին հայրութիւդ, վկայեմ
թէ վկայէ՛ լուսաւոր սիրտ քո ՚ի քոյի-
նրդ սիրելոյ․ զի ոչ կարէ ոք սիրել, ե-
թէ ոչն սիրիցէ։ Ուստի ունելով զիս
ծառայ պարտաւոր քոյնդ սիրոյ, ողջ-
լեր ո՛վ բազում սիրոյ արժանի հայր իմ
պատուական ընդ երկար կենօք ամէն։
Ընդ հովանեաւցն ամենից քո ո՛ր հայ-
րութեդ, և սիրակամեալ հարազատացդ
ա̃ծախնամ ս̃բ ուխտիդ, սէր եռանդնոտ
առ ընծայել զա̃մյն զաղօթսն հայցեմ։

Պանճալէտ անարժան Տէրացու Եսայի։

Յառաջեան Վարդապետաց, Նաև աստուածաշնորհաց
Մայրախաչապե ·

Զոր սերմանող զբանն կենաց · ու-
սուցիչ օրինաց և պատուիրանաց ·
Երկնաւոր ոգւոյ վարդապետին Նախկին աշա-
կերտացն համապատակ · և առաքելական
եկեղեցւոյ նորին նորածնեալ մանկանցն
դաստիարակ · Ս.Տաբեան քարոզիչ և ի-
մաստից սուրբ գրեանցն մեկնաբանիչ ·
Հովիւ արթուն ոգւոյ հօտին քո՝ ամենիր-
ջանիկ հօրդ իմոյ սրբազանի զմաքուր
ոգի այժմ համբուրելով ամենաբաղձ տեն-
չանօք · զորպէսն կելութեն գերավերեալ
քո անձինդ՝ կալթոգին սիրով ծառայս
անպիտան հարցանելով հարցանեմ · Եւէ
զինչ օրինակ արդեօք կեայ և վարի քո-
յին ամենախնամ գերահանճար անձինդ կա-
ցուԹի՝ 'ի յայս դժնեայ և տաժանաւոր ա-
մանակիս · Որև աղքիւրն բարութեն և
վարդապետին ճշմարիտ՝ զհայրդ իմ վե-
րապատուելի՝ ոչ տարափ արդիւնաւոր
և անձրև պտղոց շահեկան, առ պահե-
լով յամպոջ խուռոյն բարեբարութե, տա-
ցէ և հեղցէ պասքելոցս ոգւոց 'ի դէպ
և'ի պիտոյն ժամանակի · առ'ի զուարթա-

ցուցանել և պատարագել զբանաւորս
այդի տիրախնամ այգի տոհմիս հայկազ-
նոյ 'ի հայրականն անկեալ աջոյն ամէն։

Նու զնուաստ քո որդեկիս և մանա-
ւանդ քո անպիտան ծառայիս թէ
հարցանել կամիցիս զորպիսութենէ գո-
հութ̃ միշտ և փառք՝ միշտ խնամողին այ̃։
որ աղօթիւք ձեր̃ հօրդ իմոյ պահեալ է
զմեզ մինչև ցայժմ որ չէի և չեմ արժա-
նի թէ պահեալ լինէի։ Նու զինչ այլ
խնչ ասա, եթէ ոչ իւրոյ անհուն բարե-
րարութեն նշանակ։ Նու աղերսեմ ուրեմն
ով հայր իմ հոգևոր. զի զշնորհս ձեր̃
աղօթիցդ և զօրհնութիւն սրբազնեալ ան-
ձինդ անպակաս 'ի ծառայէս առնիցես

ողջ լեր։

Նու զինի ըղձատոչոր սիրոյս մատուց-
մանն՝ յայտ լիցի ձեր̃ հայրութեդ քում
տէր իմ հայր, զի գիր սրբազնութե̃ քո
էհաս առ հէքս։ (և այլն։) Նու ողջ
լեր ով հայր իմ սրբազան 'ի պարծանս
քոյոց սիրողաց երկար և խաղաղ կենօք

ամէն։

(Յարութիւն չնչին քո ծառայ։)
Թուին ռմ̃ծգ. մար" իա. 'ի կոս"պօլ"։



Պար

## Պուրջեան Վարդապետի :

Ղամպար լուսաւորութեւոք և ճառագայթ արփիաւոր : Հովիւ արթուն յարահսկող, և դիտող զգուշաւոր : Պատմող օրինաց և բացատրող իմաստից հին և Նոր կտակարանաց : Վարդապետ ա̄ծաբան . անդրանկական և գիտնական : Գերունակ շնորհիւ գերածաղկեալ, և հոգևոր մաքուր վարուք պտղաւորեալ ո̃րյ հօրդ խնջ երջանկի՝ անարժան բերանովս զմաքուր այն համբուրելո՞վ զորպէսն պատուական քո անձինդ հարցանեմ անարժանս : Ո՛ որ պահօղ տէրն ա̄մցուն՝ պահեալ և պահպանեալ իւր գերալիր գթութե̄ն ո̃ղ ջուր կենդանի 'ի բղխարանս հոգևոր իմաստից , գնացուսցէ յարաժամ 'ի բանաւոր անդաստանս իւր ամէն :

Նաև թէ մերս անարժանութի լեցի հարցմանն արժանի 'ի քո սրբութե̄դ գոհութի՝ և փառք արարչին ա̄մցուն . որ պահէ̄լ է զմեր անպիտանութիս իւրով անհուն ողորմութե̄ն մինչև ցայս կէտ գրոյս գրման և սուրբ աջոյդ քո համբուրման : Որև խնդրեմ 'ի քո ո̃ր հայրութե̄դ , զի զերկ-



նա

Նուաստ աղօթս քո անպակաս արասցես
'ի քո ծառայէս ողջ լեր ։

Նաեւ գիտակ լիցի քոյին. պատուական հայրութեդ տր իմ, զի գիր պատուա_ կան մատանցդ քոց եհաս առ յետնեալս 'ի վեցն մարտի . որ գրեալ էր 'ի չորսն փետրվարի ։ Զոր ընթերցեալ լցայ ան_ պատմելի խնդութբ 'ի վերայ փառաւորման հիւանդութեդ ։ Զի յորժամհետէ լուեալ էի թէ հիւանդ է մարմնով ձր անձն պատուականիդ , յիրաւի ասեմ տր իմ հայր , որ յոյժ պաշարեալ կայի տրտ_ մութբ յոյժ . Ուստի շնորհակալ եմ զքոյին հայրութեդ . որ ծանուցեալ մեզ զառողջութիդ , բերկրուն յոյժ արարեր
զմեզ և զայլ սիրելիս քո .

Նաեւ ողջ լեր ով հայր իմ սիրելի յամե_ րամ կենօք և անդորր ժամանակօք 'ի տր
քն 'ի յոյսն բնաւից ամէն .

(Ի Նպլիտան ծառայ քո՝ պաղտասար շնչին
դպիր ։)

## Պարչեաւ Ս. Հրդապետի .

Ճշմարիտ Ս. տրդապետին տիեզե_ րաց ընտրեալ սուրբ աշակերտացն համաշխարհական , և նորածնեալ մանկանցն



եկե

եկեղեցւոյ գերահանձար դաստիարակ ։
Մ.ի որ աւետարանին ձրի քարոզիչ ։
օրինաց ուսուցիչ, և նորէից բացայայտիչ ։
Աշակերտ ճշմարիտ որդւոյն այ, և
ճրագ լուսափայլ որ եկեղեցւոյ ։ Դու
գերազանց աստիճանօք գովուեց ար-
ժանաւոր երջանիկ հօրդ իմոյ սրբոյ
ածայեան վարդպտի զոր այն բազում
ողձին համբուրելով, անարժան և ան-
պիտան ծառայս, զբարեբաստ կեցութե
մաքրակենցաղ անձինդ որչ թէ ո՛րպիսի
արդեօք կեայ և վարի 'ի սոյն այսմիկ
վշտաբերող ալեծփեալ ժամանակիս՝ ա-
նարժանս և յետնեալս հայցանելով հար-
ցանեմ 'ի հեռուստ աստի իբր 'ի յայժ-
մնոյ ։ Զի թէպէտ տեղեաւ 'ի բացեայ
է ծառայս 'ի քո որ հայրութեդ, բայց
վասն սուրբ սիրոյ քոյին որ առիս՝ մերձ
առանց միջոցի առ ոտս քո գլխեմ զիս ։
Ուստի ամենակար հզօրին տէր՝ զնաւդ-
շտհաբեր՝ քաղաքացն եկեղեցւոյ, յամ
ձախորդակ ճշմանց ընդաւէին անմխասելի
պահեալ, լցցէ զպէտս մանկանց սիօնի
'ի քոյոցդ շնորհաց ։ Զոր անձամբ քով
քարձեալ բերես իբր 'ի հեռաւոր մեզ
քաղաքաց յիմաստից հին և նոր կտա-
կարանաց ։

Ու զանսպիտանիս որպիսութի թէ հարց-
ման առնիցէ արժան քոյին հայրութիդ՝
ահա կեայ անարժանութիս մեր մինչև ցայ-
սօր ողորմութեն այ՝ հօրդ իմոյ ոք և մա-
քուր աղօթիւքն։ Ու եւս աղօթող քոյ-
ին մեջ անփոյթ և անսասան մնալու եդ-
առ՝ի յօգուտ մեղաւոր քոյ մերազնեայ-
ցըս ամենեցուն ամէն.

Ու ծանիցէ քոյին քաղցրութիդ հայր
ոք . զի գիր սրբազան ամենահան-
ճար ձեռին քո եկն էհաս առ քո ծա-
ռայս . (և այլն.)

Ու ողջ լեր ով գերունակ լուսոյն ա-
նաղօտ հայելի հայր իմ պատուական
երկար բարօրութ ամէն.

(Անարժան ծոյ իբրու որդի բարսեղ.)

## Պատճէառ Մարտապետի.

Մեծի երանաշնորհ հօրդ իմոյ գե-
րապայծառ ածաբան վարդպտի.
Առաքելական պաշտօնին մատակարար
շնորհազարդ երիցս երանեալ սրբազան
արհի եպիսկոպոսի. Ու ի լոյրդ ածաբան
և նոր ոսկեբերան, ներքից և արտաքնոց
և ածային հին և նոր կտակարանացն բա-
ցայայտիչ քաջաքարոզ դասքալօսի. Ը


ցեալ

ցեալ զեղեալ գիտութե՟ պուէտական բա_
նաստեղծի։ Միանգամայն ՚ի ձմեռնել
ժամանակիս պարգևեալ մեզ ՚ի յո̃յ վայ_
ելչագեղ վարդ փայելուչ այդր մեծի
բազմաշակերտ հռետորի հայոց իմաստա_
սիրի՝ բազում պատկառանօք և յորդ կա_
րօտիւ աջոյն ս̃բյ և ներբանիցն համբոյր
ծառայական ընծայելով, զմեծի բարու_
նոյդ զարբականցայն կեցութի՝ թէ զոր
արդեօք ունի զկեալ յամպրոպային ե_
ղանակիս մի յոգնորոտ ժամանակիս՝
հարցանելով հարցանեմ անարժանս յետ
նեալ քո ծառայ։ Տէր և ա̃ծն ա̃մի՝
զյոգնարդիւն ցօղդ զայդ և զանձրևդ
շահեկան՝ պահելով միշտ ՚ի յամիս խնա_
մոց իւրոց, սրսկեսցէ ՚ի դէպ ժամա_
նակի յայդիս իւր բանաւոր տնկեալս
աջոյն իւրոյ հզօրի ամե̃ն։

Իսկ թէ վեհագամն քո տէրութե̃դ կա_
միցի զնուաստ ծառայիս քո գիտել
զորպիսութե̃, անհուն գոհութի անհատ
ողորմութեն բարերարին․ որ աղօթիւք
հօրդ իմոյ ս̃բյ պահեալ է զանարժանս
մինչև ՚ի կէտ համբուրմանս քո սուրբ
ներբանացդ։ Արև յուսացեալ եմք պա_
հել ևս թէ տացի այլ ևս ինչ կեալ ՚ի
նո

Նորին կամացն ամենասուրբ · առ՚ի լսել
միշտ և խնդալ զկենդանութի մեծի հօրդ
մերոյ սրբոյ ամէն ·

Եւ զխոստութի լեցի քոյին մեծի տրու֊
թեդ հայր իմ պատուական, զի (այս
ինչ և այս ինչ · )

Եւ ձղջ լեր՝ ով րաբունիդ պայծառ ·
խոր իմաստաձառ · բազմոստեանդ ծառ ·
և մեզ բարուոք կելոյ պատճառ ·
ամէն ·

Քահանայէ՝ յաշխարհականէ՛ ·

Յոգնահանճար դեր աստիճան , և
իմաստիցն սուրբ գրոց տծայնոց
պայծառափայլ ըշտեմարան · Քահանայ
ճշմարիտ բարձրացեալ քաւչական դերա
փայլ աստիճանօք · առեալ ՚ի ճշմարիտ
քահանայապետէն որ ըստ կարգին մել
քիսեդեկի · Եկեղեցւոյ մանկանցն ի֊
մաստուն դայեակ · և տկարացն անձանց
արի օժանդակ · Ի Տային շնորհացն մա֊
տակարար , և մխթացեալ ոգւոց դերա֊
փայլ ղամպար · Եւ ևս՝ ճշմարիտ մար֊
մնոյ և արեանն քի սրբազնագործօղ ·
Եւ այլովք այսպիսեօք պատեհ դրուա֊
տիւք սրփիաւորեալ անձինդ սէր հօրդ
իմոյ

խմբ մեծի՝ զա̃ծամերձ որ աջն համբու_
րեալ անբաղդատ սիրով և յորդ կարօ_
տիւ, զկենէ կեցութե̃ սրբազանի քո
անձինդ թէ ծրջի արդեօք կենցաղանայ
՚ի կիսամեռ վշտապատեալ ժամանակիս,
ա̃մի՛ յետնեալքս և անարժանքս հար_
ցանելով հարցանեմք ։ Արև լոյսն լու_
սեղծօղն և պահօղն ա̃մի՝ զազդեցիկ
փողդ եկեղեցւոյ՝ և զբաշխօղդ արժա_
նաւորաց զփրկական դեղն կենաց, մշ_
տահնչակ պահելով և յարանը, զաւե_
տարանին զփրկականն խրատ՝ անհատ
և անպակաս արասցէ քոյովդ բանիւ և
քոց նմանեացդ՝ ՚ի լսելեաց ա̃մ հաւա_
տացելոց ՚ի ծոց կաթողիկէ սուրբ
եկեղեցւոյ ամէն ։

Նու յայտ լեցի քոյին վսեմութե̃դ ո̃ր իմ
հայր ։ (և այլն զորն կամիս ՚ի վերոյիցն ։)

### Գուարճեալ Ուրախանայէ ։

Նորոգողին տիեզերաց նոր եկե_
ղեցւոյն՝ նորոյ օրինացս սիրոյ՝
ազդողաբան ուսուցիչ ։ Շնորհահեղ
փայլման էական լուսոյն պատկանաւոր
ներընդունակ, և մանկանցն եկեղեցւոյ
՚ի յերկնային հարսնարանն հրաւիրակ ։
Ան

Մանկանց դաստիարակ և ծարաւեացն մատռուակ ։ Արբաշնագործ աջոյն ք̅ի աջորդ՝ առ՚ի բաշխել արժանաւոր անձանց զուարբ մարմին և զարիւն նորին փրկական ։ Ընդ պիսոյդ սրբազանի և հօր իմոյ պատուականի ո̄բ զաջն համբուրելով երկար կարօտիւ և սաստիկ սիրով , անարժան բերանովս և մեղաւոր շրթամբքս՝ զորկենուն մաքրականցաղ անձինդ սրբոյ՝ թէ զո՞ր արդեօք տրամադրութի̄ ներկայեան յինքեան ունիցի՝ իբրու ծառայ կամօրդի՝ (թէ համարեցայց) հարցաբանեմ յետնելս ։ Որ բաւականն ո̄մի՝ համայն խուրոց ընտրելոցն մաղթանօք՝ զգաղափարդ ուղիղ վարուց և ո̄մ համեստ բարուց՝ զվարսագեղ արմաւենիդ տընկեալ ՚ի տանն ո̄յ , պահելով միշտ աջոյն պահպանական , խնդացուցէ՛ զսիրտս մեր

քոյովդ կենդանութե̄ ամէն ։

Նու զհեքոյս արդենութի̄ թէ զըննիցէ քոյին հայրութի̄դ , աշա՛ մինչև ՚ի կէտ դրոյս ծրեցման պահեալ կամք ՚ի խնամս մարդասիրին ՚ի վեր քան զմերն դոյն արժան , հօրդ մերոյ ո̄րչ հաճոյական աղօթիւքն ։ Նու յետ սիրոյ համբու-



րիս

րիս մաքուր քո աջոյդ , զեկ լիցի քոյին սրբութեդ զի յորէ յորմէ անջատեցայ ծառայս քո ՚ի քէն տէր իմ, այս երրորդ գիր է գրեցեալ առ քոյինդ սրբութի ․ Նա չընկալայ ծառայս ՚ի քէն գիր և ոչ մի ․ և եմ յոյժ տարակուսեալ ․ ոչ գիտելով զպատճառն և ոչ զորպիսութի սրբազանիդ անձին ։ Ուստի յոյժ աղերսանօք խնդրեմ ՚ի հրամանուցեդ , զի մատնիկ մի թղթիւ նշմարիցես զորկենութի երջանիկ քո տէրութեդ ․ զի յոյժ կամ ՚ի վարանման ․ և շնորհ մեծ է քոյ անպիտան որդւոյս ։ Նա ոչ լեր ով բուրաստան բարեմոյն անկեալ յեակն աջոյն ՚ի հոտ անուշից անկողին քոյոցդ պխեաց հայր իմ պատուական ամէն ։ (Անպիտան ծառայ քո՝ խերու տիրացու արսէն ։ մարտի ժդ ․)

### Պարչէտաշ Քահանայէ ։

Շնորհաբաշխ աջոյն յի քի աջորդ սրբազնագործելոյ զմարմին և զարիւն նորին փրկական և կենդանարար ։ Քաւիչ մեղաց ժողովրդոց գերազանց աստիճանօք քան զքահանայսն ահարոնեան հնոյ օրինին ։ Խրատիչ և

ու-

ուսուցիչ եկեղեցւոյ մանկանց , և օրինակ
բարի վարուց և պայծառ քաղաքավա֊
րութե . Յորդորելով զնմին 'ի բարի
կրօնս ճգնաւորութե . Նախագլխոյ ճշմար
տի ընտրեալ քահանայի , մեծի հօրդ
խմոյ պատուականի զճգնաշահի զորբայ
Նաղորդ խորհրդակատար զաջն որ համ
բուրելով մեծաւ սիրով և կարի կարօ֊
տով, Հարցանեմ յայժ անարժանս՝ ըզ
հօրդ խմոյ մէջ զկեցուն և զորպխուն
հեզազունեղ անձինդ . Թէ որպիսաբար
կեայ 'ի տատանուտ յորդնակոհակ կեն֊
ցաղոյս ծովու . Ո՛ որ քո նոյն նմի՝
'ի յալեաց նորին ներհակաբայլից որ
արտաքուստ և 'ի ներքուստ՝ իւրոյն նա֊
խախնամելով (որ սաստեաց հողմոյն և
ծովու և եղև խաղաղուի մեծ (զնաւա֊
քատակ մէջ անձինդ ամրուե զկազմը֊
ւած՝ պահեսցէ՛ հաստատ և անսասան
'ի նաւահանգստի եկեղեցւոյ 'ի խոր խա֊
ղաղութե : Նաև տալով լսել զխաղաղ և
զանդորր կեանս քո , շնորհեսցէ մեզ
զնոյն ընդ երկայն սուրբ որդւոցդ քոց
տիրասիրաց ամէն .

Իսկ թէ յիշեսցէ հայրդ խնամածու
զիմս հարցանել զորպխուն պյեանել,
հօրդ

հօրդ իմոյ ընդունական աղօթիւքն կամք
պահեալ և պահպանեալ ընդ խնամօքն
քո մինչև ցկէտ մնացուցման սիրոյ համ-
բուրիս աջոյդ քում ամէն. Սպասելով
յարակ որ օրհնուեդ անպակաս 'ի մէնջ
լինելոյ ամէն.

Ու յայտ լիցի քոյին սրբութեդ տէր
իմ յարգելի, զի գրեցեալ գիրն 'ի
շնորհածոր մատանց քոց՝ համդերձ սի-
րապտուղն արգասիւք եկն եհաս առ
անարժանս քո ծառայս. զոր ընկալեալ
շնորհակալ եմ դքեզ մինչև ցբաժա-
նումն հոգւոյս 'ի մարմնոյս. և այլն.
Ու ողջ լեր ով որ հոգւոյն օծմամբ
շնորհակիր հայր իմ հոգևոր. կրկին
պատուոյ արժանաւոր. արածօղ հօտին
քո բանաւոր. 'ի պարծանս ներգևեալ
քո ներբողաբանելոյս ամէն.
(Նշանակ ծառայ տեառն կամաց
Եէրու փրը յօհաննէս ծծաարբեան).

Դ՛ենաարաց Ն.աաջնորդի.

Ողջակէզ բանաւոր՝ զանձն ընծայօղ
տէր իմ 'ի վերայ խորհրդական վիմի
խնքնամնաւորաց սեղանոյդ. Հրեշտակա-
կրօն և խաչարարած զինուորացդ բանակաց
Դրգ-

Ճրգնաւորացդ դասուց՝ արի առաքինու-
թեանց և իմաստուն առաջնորդ 'ի յերկիրն
աւետեաց ։ Անձանձիր ուսուցիչ և հան-
ճարեղ մխիթարիչ որ անապատիդ և
ցանկալի մենաստանիդ համակամ միաբան
հոգւոյն սիրոյն կապակցել միեղէն եղ-
բարցդ ։ Բազմաց բաղձալի և ինձ տար-
փալի ։ Ծաղիկ և վարդ անապատի հօրդ-
սոյ մերոյ որ ծերունոյդ զփարելի ո-
տիւքն փարեալ, որ ներբանացն և երկ-
նընթաց գարշապարացն անարժանն բերա-
նովքս համբոյր մատուցեալ, զտատրա-
կակեաց և զաղաւնակենցաղ զոր քո
կեցուէդ՝ հարցանեմք յետնեալքս թէ
որպիսաբար արդեօք կեայ քոյին սըր-
բութիդ ընդ քև և ընդ քեզ ամենար-
թուն հսկօղօքդ հանդերձ ։ Այն որ
ասաց՝ քաջալերացարուք զի ես յաղթեցի
աշխարհի, քաջացուսցէ զքաջեանսդ
ընդ դէմ ամ մեքենայից զօրացն բելի-
արայ, թիկնակցուէ անյաղթելի զօրացն
վերնոց ։ Այլ զի անկեալ 'ի կողմանէ հա-
զարք, և բիւրք 'ի յաջմէ, առ ձեզ ինչ
ոչ մերձեսցի ամէն ։

Նու թէ զմեր քո ծառայից մեղաւոր
կեցութիւս հարցանել կամիցի քոյին



սըր

սրբութիդ հայր մեր պատուական Պօ-
հութի և փառք տն տյ, որ քոյին նը
հայրութեդ՝ և ընդ քեզդ զինուորեալ
խաչակրօնակցացդ քոց՝ միշտ բազկատա
րած մաքուր մաղթանօքն պահել է զան
պահելիքս՝ անհուն խորով բարեգթու-
թէն մինչև ցայն կետ։ Յորմէ և յա-
պաւնին զայն յուսամք թէ առնէ՝ ըստ
իւր անճառելի մարդասիրութեն ամէն։

Իւ յետ ծառայական համբուրիցս՝ ծանիցէ քոյին հոգեկիր պայծառ-
հայրութիդ, զի ահա մերոյս անարժա-
նութեան սիրոյ պտուղն գանձանակին
որ հաւաքի 'ի մէջ այս անուն Էմնաֆիս,
առաքեցաք 'ի նը կատուցու անփոյթ քա-
ռասուն երկու ղուռուշ։ Ձեռամբ մեր
պատուելի եղբայր և հայր՝ և նը մե-
նաստանիդ հարազատ մաղստսի կարա-
պետին. որոյ ձեռամբն և զնամակին օրհ-
նութեն նը անապատիդ 'ի նը հօրեդ ըն
կալաք. Իւ է այս՝ այս տարվան հաւաք
վաճն ԺԷ ամսոյ մինչև 'ի մէկն յուն-
վարին ՌՄԾԶ թուոյս։ Ընկալ ուրեմն
հայր նը պատուական՝ զքչիկ երախայ
րիս սիրոյ 'ի մեր մեղաւոր անձանցս իբր
զլումայն այրին կնոջն 'ի գանձանակն տն։

Իւ

Եւ յաղօթս ձեր մշտամնացս՝ զոր մա-
տուցանէք Տն՝ առաջի անմատչելի նո-
րա աթոռոյն ահաւոր · Թէ ՚ի հասարա-
կականին Թէ ՚ի յառանձնականին , յի-
շել աղաչեմք և զմեր զբաղականեաց և փշա
րատա մեղաւորեալ ոգիս և մարմինս ·
Օգնական լինելով տկարութեան մերում
՚ի ձեռն մաքուր մաղթանաց ձերոց · առ
՚ի Թափել զմեղանաց մերոց զծանրութի
՚ի ծով անհուն ողորմութեանն այ · Եւ
հասանիլ մեզ անփոփոխ ՚ի նաւահանգիստն
կենաց առ որ ձերդ կայ յաջողեալ ·
Եւ ողջ լեր ով գերափառեալ հայրդ
ճգնազգեաց ճգնազգեցողօքդ հանդերձ
ամէն ·

Ծառայք որ անապատիդ՝ այս անուն
էսնափիս վարդապետայք ·

## Պատճէաւ Ընթացորաց Առաջնորդէ ·

Զնաշխարհիկ և վերնակրօն՝ մերկա-
մարմին բնակողնէից Թաշնակենցաղ
երամից , և երկաթեօք սաղա-
ւարտեալ նետանահանջ վահանաւոր ՚ի
հոգւոյն զինուց արի սպառազինացդ
բանակաց՝ արխականդ առաջնորդի · Եւ
այդոցիկ կամաւորաց անընչակեաց ողջա

խոհիցդ աղօթկերաց , և միանգամայն
քի՛ ո՛ր հեռոցն փափագողաց և հեռաւո
ղաց միեղէն միաբան ո՛ր եղբարցդ մար
գեչ և յորդորիչ գերընտիրըդ հեղինա-
կի երկնաբնթաց ո՛ր ոտիցն գարշապա-
րաց հոգեխառնեալ կարօտով և մեծա-
սիրով յանարժանիցս շրթանց համբոյր
նուիրեալ ։ Ո՛ ո՛ր հօրդ մերոյ անար-
ժանցն ազգակցի՝ զո՛ր կենացն վարմանէ
իբրու հարազատ ծառայք հարցանելով
հարցանեմք ։ Իսկ թէ խոնարհ հայրդ
մեր որդեսէր՝ զմերս անպիտանութե՛
հարցանիցես զորպիսութէն ։ Ո․ո հրա-
մանուցդ ամենընդունակ մաքուր աղօ-
թիւքն պահեալ կամք ողորմութե՛ն ա՛յ
ողջ և առողջ մինչև ցայժմ ։ Ա․յլ ո՛րն
մեր կուսածին՝ զկուսակրօնիցդ կուսա
կրօնահայր՝ և ա՛ծապահ ո՛ր կուսաստա-
նիդ զընտիրդ տեսուչ՝ անդորր և ան-
սասան և անդրդուելի ՚ի հոգևորական
առաջադրութեդ հաստահիմնելով , ՚ի
նկատեալն ձեր նպատակ ուղիղ ընթա-
ցիւք որ իւրն է հաճոյ ժամանեցու-
ցէ ։ Լսելով զիւր հաճոյականն ձայն ՚ի
ո՛ր հօրէդ՝ թէ ահա ես և մանկունք
իմ․ ամէն ։

Եւ ընդ սիրոյ անճառնաց քոյոց ծա-
ռայից՝ յայտ լիցի քումդ խոնարհու-
թեան և հայրութե . զի զայս տարփան
սիրոյ պտուղն մեր սակաւ՝ որ հաւաքի
՚ի մէջ թերզի էանաֆիս վարդպետացս ,
ուղարկեցաք առ ձեռամբն հեզաբարոյ
հայրապետի եղբօրն մերոյ և տր կրօ-
նաւորինիդ հարազատ մուղտսի յարու-
թենին յիսուն և վեց ղուռուշ . առ ՚ի
պէտս սբյ տանդ , և՚ի դմին խուռնե-
րամեալ տր միաբանիցդ . Եւ զօրհնութի
տր աղօթից ձերոց անպակաս ՚ի ծոյիցս
առնելով ՚ի տր սրբէապար մաքրասա-
նիդ , ողջ լեր ով հայր երանաշնորհ տմ
քոյովք ընտրելովք երկար և անդորր
կենօք և տն ոյ հաճոյական վարուք ամէն :

Պօղոսէան Ա4նոսորայ Մ.առաջնորդէ :

Պայծառեալ աղաւնեացդ երա-
մից , և խաչակիր բանակացդ բո-
կանէից՝ ուշիմ նախընթացս : Ողջոնիցդ-
անձանց զգօն հեղինակ . և քո հեռոցն
հեռաւակաց՝ անդուղ հայելի վարուց և
դաստիարակ ըստ նախնոյն Մ.նոօնի և
Կրօնիդեայ : Կենդանի բանին սպասա-
ւոր , և տր մենատանիդ ջահ արփիա-
ւոր :

ւոր ։ Սուրբ հօրդ մերոյ ընտրելոյ , և
հոգւոյն շնորհօք գերափայլելոյ , զո̃ր-
աջն 'ի հոգւոյն օծեալ , և զներբանան
երկնուղեղորեալ , բազում ողձանօք համ-
բուրելով , զո̃ր կենացդ քո որպիսութի̃
և ընդ քև եղելոցդ միանձանց մուղտ-
սեաց և համայն միաբանից ամենահաս-
տատ սրբարանիդ , հարազատ սիրով ցա-
ւակցաբար հարցանելով հարցանեմք ի-
ներբոյ գրեալ անարժան քո ծառայքս ։
Եւ է որդի̃ ներկայութ̃ կենցաղանոյ ձե-
րենդ սրբութի̃ ։ Որև խաչեալ փրկիչն
մեր կենարար , զխաչաբարձ երամոցդ
ո̃ր բազմուի̃ , անդրդուելի հաստատութ̃
'ի ո̃րն ձեր նկատեալն առաջադրութի̃
հաստուցեալ , ժառանգորդս կացուսցէ
կենացն յաւիտենից յանձառելի փա-
րուամն տեսութե̃ ։ Եւ մեզ ևս բիւր
մեղօքս մածուցելոց անարժանից , մասն
բարեաց ընդ ձերումն արժանաւորութե̃
պարգևեսցէ ո̃ր ո̃ծն մեր 'ի տեսութի̃
փառաց իւրոց 'ի մասին ժառանգութե̃
սրբոցն 'ի լոյս ամէն ։

Եւ զկնի ծառայական համբուրիցս ա-
նարժան շրթանց՝ երկնաչու դարշա-
պարացդ՝ ծանիցէ ո̃ր հայրութի̃ քո ո̃ր
խմ , զի (այս ինչ և այս ինչ ։ )

Եւ ողջ լեր ով ձագախառնեալ երա-միցդ առաջնորդ և հայր հոգևոր, անփորձ և անսասան ընդ երկար ամօք և անդորր կենօք ամէն:

(Անարժան ծառայք քոյին սրբութեդ պօղոմաճի մահտեսի պետրոս գանձապետ. և այլ ընդ մեզ եղեալ վարպետայք:)

Պատճէն Ճգնաւորաց Առաջնորդէ.

Որ երմեռանդն սրտօթիւք և սիրոյն աստուծ միշտ 'ի մաղթանս կան-խողի, և քեզ կուսածին փրկչին սբ հե-տոցն կուսութ հետևողի. Միշտ պա-հօք և ջերմութ և խաչակրօն անդադար սաղմոսերգութ գլխաչն փրկչականն 'ի յուս բարձողի. զանմարմնոցն բերելով 'ի մար-մնի զհանդէս: Իմոյ եղբօրդ պատուա-կանի խարազնազգեաց կրօնաւորի. ան-յագ բաղձանօք և յոյժ կարօտանօք փա-րեալ ընդ պր անձամբդ՝ ուղջունեմ զծե-րունիդ սրբազան և մաքրազան: Եւ հարցանեմ զահերիամբ զօրացեալ անձինդ կեցութի: Ձեզ 'որպիսի արդեօք կեայ 'ի համապազորդեան ընդ Թշնամոյն մե-նամարտութեդ: Որում զօրավիգն եղէլ քաջալերօղ տրն մեր (որ ասաց իւրոցն



որ.

որ հետևողաց, թէ՝ ահա ետու ձեզ
իշխանութի կոխել զօձս և զկարիճս, և
զամ զօրութի թշնամոյն։ Եւ թէ քաջա_
լերեցարուք․ զի ես յաղթեցի աշխար_
հի։) Տացէ ժուժկալութի ճշմարիտ հե_
տևողին իւրոյ․ վառեալ զինուքն ա_
ւետարանին ըն դէմ ամ հնարիցն սատանայի։
Եւ անխափան ընթանալ զընթացսն որ
առ ած․ և հասանիլ՝ի նըպատակն ուշ ե
դեալ առաջադրութեն։ Մաղթանօք
նախընթացեցն միանձանց այդր լուսա_
ւոր ճանապարհի՝ մեծին եղիայի և յօ_
հաննու մկրտչի․ և մերոցն նախավարժ
հաց անտօնի և կրօնիդեայ ամէն։

Եւ թէ քոյին որ սիրողնեայ ազնը_
ւութիդ հարցանել կամիցի զանարժա
նիս ողորմութի։ Պոհութի և փառք ոյ
մշտ բարերարին․ որոյ ողորմութեն և
հայրապատիւ եղբօրդ իմոյ սուրբ աղօ_
թիւքն՝ պահեալ կամք մինչև ցայսօր
առողջ անձամբ ըստ մարմնոյ, թէպէտ
հիւանդ ըստ հոգւոյ։ Որև քոյին աղօ_
թիւքդ և քոյին նմանեացդ, յուսամք
և հոգւով առողջանալ ներօղ տեառն
ողորմութեամբն։

Եւ յետ սիրոյ ողջունիս յոյժ լիցի քոյին
մե

մեծի եղբայրութեանդ ով անձկալի հատորդ հոգւոյ իմոյ, զի (այս ինչ և
այս ինչ.)

Նու ուղէ լեր գնալով միշտ 'ի զօրութե՜ 'ի զօրութիւն. և երևեսցի ա՜ծ հրեշտակաց
'ի սիօնի քումդ սրտի ամէն.

Ընդհաւան ծառայ քո յարութիւն իբր աբեղայ ,

## Մ՝արապէտ.

Աահին լուսոյ վերին առաջատտին և երանելեացն գաւառին ան_սայթաք հետևող ամենաբարեպաշտուհի մայր իմ պանծալի և քոյր իմ անձկալի. Պատուեալ կուսութ՜ և համեստութ՜. կուսածին ա՜ն մերոյ ք՜ի և մօր նորին միշտ կուսի ո՜ք ընթացիցն ընթացակից. Որ համեստ վարուք և պարկեշտ բա_րուք գեղեցկացուցեալ զմաքրազարդ քոյին կուսութիւնդ իբր զծաղիկ վայե_լուչ և քաղցրաբուրեան, զամենեցուն զծանօթից զհոգևոր զաչս և զքիմս բերկ_րեցուցեալ, գովիչս և քարոզիչս քեզ_ընտանաս. Որդ՝ այդպիսոյդ ազնուի ականդ պատուականի և կուսամաքուրն մարգարտի նեւ խորուե կենցաղոյս ծո_վու գտեցելոյ, ամենանուաստ և յետ_



նելս

նելս ամենեցունց՝ անարժան շնորհամբքս
ողջոյն հոգևոր ըղձանաց և բաղձանաց
ընծայելով, զկաշակիր անձինդ որպի-
սութի հարցանելով հարցանեմ. թէ որ-
պիսի արդեօք կեայ քոյին քնակիր ան-
ձինդ ներկայումի: Ո՛ր կուսածին փըր-
կիչն աշխարհի ծնողին իւրոյ միշտ կու-
սի ամենայցելուհւոյ բարեխօսութեն՝ պա-
հելով զմայրդ իմ միշտ այդպիսի հա-
մեստութ և Հզնակրօն ժուժկալութ,
աղօթօքս շնորհեսցէ մեզ զքոյին սըր-
բութիդ ամէն:

Իսկ եթէ քոյրդ իմ անձկալի հարցա-
նիցէ զմեղաւորիս որպիսութի, ահա
գոհութի տն այ բիւրիցս բիւր և ան-
համ բիւր: Ես երջանիկ մօրդ իմոյ
արժան ընդունակ աղօթիւքն պահել է
զմեր անարժանութիս ողջ առողջ մինչև
ցայսօր իւրով անհուն ողորմութեն և
քաղցր և մարդասէր բարերարութեն:
Որոյ տրիտուր ոչ ինչ ունիմք տալ, բաց
'ի գոհութէ . և յայս և իւր տացէ
մեզ բերան և լեզու:

Նաև տոնդ ով մայր իմ և քոյր՝ անձկալի
հոգւոյ իմոյ, յետ սիրոյ ողջունիս
քոյին սրբութեդ, ծանիցէ մաքրութի քոյզի
(այս ինչ և այս ինչ:)

Եւ ողջ լեր ով քոյր իմ սրբասէր 'ի շնորհս տն մերոյ յի քի միշտ հոգւով զուարթացեալ 'ի տր ամէն:

(Մնպիտան ծոյ իբր մահտեսի յարուէ:)

## Հօր 'ի որդւոյ.

Սկիզբն կենաց իմոց և պատճառ գոյութեան յետ այ: Խրատով և խնամով զիս պահող և մեծուցող: Իմ աչաց լոյս սիրելի և պատուելի հօրս բազում սիրով և յոյժ կարօտիւ զեր_կու ձեռքունքն կու համբուրեմ անպար_ժան բերանովս: Եւ կու հարցանեմ զքո ողջութիւն թէ որպէս կեաս 'ի յայս դառն աշխարհիս և 'ի դժուար ժամանակիս: Այ զքեզ անփորձ և ան_սասան պահեսցէ ով իմ պատուական հայրիկ, և զքո շուքդ իմ վրայէս չպակ_սեցնէ. որ ես զոր ողջ եմ, զքո պակ_սիլդ չտեսնեմ. և քեզմով մխիթարիմ: Եւ թէ դու զիմ ահվալս կու հարցա_նես իմ պատուական հայրիկ, ահա գո_հութի այ. որ քու աղօթքովդ ողջ և առողջ եմ մինչև ցայսօր՝ այ անհուն ողորմութեանովն. և քու տեսուն խիստ էփէլով կարօտեմ, ու քու աղօթ_քովդ



քովդ

քովդ զիս արժանի անէ, որ անգամ մի այլ զքո երեսըդ տեսանեմ և ապա մեռանիմ։

Նու գիտացիր իմ անուշիկ հորիկ. որ քու գիրըդ եկաւ հասաւ ինձի. որ ըսեր էիր թէ, ա՛յ որդի՝ ինչի զմեզ մոռացար։ Բաւ լեցի իմ երախտաւոր հարիկ, տա ինչպէս խօսք է որ կսես. ես զքեզ ինչպէս կարեմ մոռանալ, որ գիշեր ցորեկ մըտքէս չես ելթար։ Նաքին մալիմ է հրամմնուցդ որ բանի տր ենք. հաշունէթէ խսլմէթքեար ենք. իժիր ձեռքերնիս չի պարապիր որ գիր գրենք. Թէ չէ, ա՛ծ գիտէ որ իսկի մտացս չես հեռանար։ Նա որ զքեզ մոռանամ որ իմ աչացս լոյսն ես, այլ զով պիտի չմոռանամ. քան զքեզ էվէլ ինձի պիտանի այլ զով ունիմ՝ իմ պատճելի ծնօղ։ Նու ահա մեր եղբայր յարութիւնն հետ՝ ութ զէրմահպուպ ոսկի ղրկեցի հրամմնուցդ որ զիս օրհնօղ լինիս։ Նու քանի կենդանի եմ՝ պարտական եմ հայրական խնամոցդ յամենայն կողմանէ որ չի վճարվիր։ Հեմէն ա՛ծ զքեզ միշտ կենդանի պահէ. որ քու աչքդ մեր վըայէն չպակսէ ամէն։



Պար

## Պարճէալ Հօր :

Վերակացու և հոգածու՝ պայծառ
ճրագ տանս մերոյ:
Նայօղ և խնամօղ և կառավարօղ որդւոց
և թոռանց: Յոյժ աշխատաւոր և երախ
տաւոր իմ աչացս լոյս պատուական հօրս:
Ի նուաստ և անարժան ծառայէս երա
նուէ՝ հասցէ շատ բարև շատ սիրով և
շատ կարօտով. զերկու ձեռքդ բազում
անգամ համբուրելով: Եւ հարցանեմ
զիմ հօր զանուշ խաթրիկդ թէ ինչպէս
կաս ՚ի յայս դժվար ժամանակիս:
Որ յիմ մեղացս շատութենէն՝ աւր որ լինի
մօրդ յայս ժամանակիս, նեղութենն
պակաս չէ: Սակայն թէ ա̅ծ քու հրա
մանուցդ երկար կեանք և օմր տայ, որ
քու որդւոցդ և դստերացդ և թոռնե
րացդ վրայէն քու շուքդ պակաս չլինի:
Ինչպէս որ լսեր է գիրքը թէ, ծեր մի
՚ի տանէ քումմէ մի պակասեսցի:
Քու մէկ աւուր կենդանութիւնդ՝
մեզի մեծ պարգևք է յո̅յ: Եւ թէ քո
անարժան որդւոյդ որպէսութիւնն կու
հարցընես իմ հարիկ, ո̅յ անհաս գոհու
թիւն. որ իւր անհուն ողորմութենովն



պա

պահեր է զմեզ մինչև այսօր · որ ողջ և առողջ եմ մարմնով · և միայն քու անսուտ խիստ կարօտ եմ։ Տէր Ած՝ իւր մէջ բարեխօսութեն արժանի ընէ որ քո անսուտ անդամմի այլ արժանի լինիմ ամէն։

Ու գիտացիր իմ պատուական հօրիկ, որ գիրըդ եկաւ հասաւ մեզի և գըրեր էիր թէ (այս ինչ և այս ինչ · )

Ու ողջ կեցիր իմ աչացս լոյս հայր · որ դու հէմ մեծ հայր ես քու թոռանցդ հէմ մեծ մայր · օրերըդ շատ լինի որ մեզի շատ պիտանանաս · ամէն ·

Իմ աչացս լոյս կարապետս շատ բարև կանեմ · և իմ աչացս լոյս մարիամին շատ բարև կանեմ · երկու աչքերնին կու համբուրեմ շատ հասրէթով · Ու իւրեանց մօրն շատ բարև · տըղոցն լաւ մուղայէթ լինիս · Ած ողորմած է ումուանիս չինք կըտրեր ։ Հէմէն հանապաղ վէր Ած աղոչէ որ զմեզ երկրի էխտամ չընէ · որ մեր ղայրէթնալ այս է · ու քյոմըդ քէյ մի կըտրեր ։ Ու դրացներուս ամենուն շատ բարև կանեմ · և զամենուն խաթրիկն կու հարցանեմ ողջ կեցիք ամէն ·

## Մ՝օր ՚Ն [illegible] ։

Տանն մերոյ մէջը շէն պահօղ . և զորդէքը և ըզ թոռներըը շահօղ ։ Համեստիկ և անուշիկ բաղմաշխատ և բաղմերախտ աչացս լոյս մօրս՝ շատ սիրով և շատ կարօտով բարև կանեմ ու շատ բարև ։ Ու իմ անարժան բերանովս՝ զաշխատաւոր ձեռքունքը կու համբուրեմ բաղում անգամ ։ Ու հարցանեմ զքեզ շատ ու շատ կարօտով . թէ ինչպէս է քո հալիկը ։ Ա՛ծ գթու անուշ խաթուն մարութիւ ըդ՝ քու որդոցըդ և թոռանցըդ վըայէն անպակաս ընէ . Ու թէ զիս կու հարցընես իմ՝ խաթուն մարիկ . գոհութիւ բարերարին այ ։ Որ քու աղօթքովըդ պահեր է զիս հինչուկ հիմիկ իւր անհուն ողորմութենովը ։ Ու աչա ողջ և առողջ եմ . և քու անուշ տեսուն կարօտ եմ .

Աղօթք ըրէ իմ սիրական մարիկ . որ անգամ մի այլ մարմնաւոր աչքով զերեսըդ տեսնալու արժանի լինիմ ։ Ու գիտացիր իմ մարիկ . որ ած ողորմած է . ամեւան դռներըն որ բացվի՝ ու բանինքնէ , այլվի՞ ետևանց խարձլըխը պակաս



չեմ

չեմ ընէր տուլ թէ ողջ մնամ՝ քու աղօթ-
քովդ։ Որ հիմիկս թեզ ելուէն հինգ-
ուկի ղրկեցի քեզի՝ զայս թուղթս ըն-
րող մեր աւետիս եղբօր ձեռօքն. տու-
նես ու մեղ օրհնող լինիս։ Աւքս որ-
դոցդ և թոռանցդ վրայէն աչքըդ նա-
զարըդ պակաս չանես ինչպէս որ տայըդմ
նայօղ ու պէտ ընող ես։ Ա͞ծ քեզի վար-
ձահատոյց լինի որ հոգւովդ մեծ-արիս
լոյս ։ յետի օրն ՚ի բարին լինի ամէն ։
Ծանըս մեծին և պզտըկին և հարսին
և զմեղ հարցընող բարեկամներուն ամե-
նուն շատ բարև կանեմ ու խադրերնին
կու հարցընեմ։ ամէնքըդ ողջ ու բարով
կենաք ամէն ։

## Պարջէալ Աօր ։

Յաւօք ծնանող և աշխատանօք սըն-
ցընող. կաթնով կերակրող և գըր-
կով շուրջ ածող։ Հոգւով և մարմնով
խնամող իմ սիրելի աչաց լոյս մօրս ըզ
ձեռքըն և զոտքըն համբուրելով բարև
ու շատ բարև։ Իմ ազնիւ սիրական մա-
րիկ՝ թէ զիս կու հարցանես. բարերա-
րին և միշտ զմեզ պահողին անչափ գո-
հութի։ Որ քու տը աղօթքովդ՝ և իւր


ան

անհուն ողորմութեանդ պահերէ ըզ
մեզ հրնչուկի հիմիկ. որ խակի պակա-
սութի մի չեմ առներ։ Իմ անուշիկ մա-
րիկ. չիլինի թէ ինծի համար հոգ քա-
շես։ Ո՛ ծ իմ մանհանեսի աղաներուս կեն-
դանութիւն տայ, և չէլէպիներուն ա-
րեւշատութի։ Որանի որ նոցա շուքըն իմ
վրայ է, ինծի խակի պակասութի մի չըկայ
տվ. Այս մի գիտնար թէ ես դքեզ կու
մոռանամ. քու լեցի իմ աչաց լոյս մա-
րիկ. որ իմ վրայ այսչափ աշխատանք
ունիս. մայր ըսելուն եաև այլ ինչ կու
մնայ։ Ո սուտ ծով քանի որ ողջ մնամ,
ես զքո մայրութե երախտիքըն չեմ մոռա-
նար։ Հէմէն կու խնդրեմ քեզմէն, որ
գիշեր ցորեկ աղօթող լինիս ինծի հա-
մար. ու ընաւ խակի հոգ չիքաշես. զե-
րէ տեղըս խիստ բարովէ. և իմ աղա-
ներուս աղօթող լինիս։ Այս գիտացիր
իմ սիրական ծնօղ. որ դէմ դէմ զգիրս
որ կուշացընեմ, չէ թէ մոռացս ելեր
ես. ոչ մանկիմ է որ խակի մոռացս չես
հեռանար։ Ո նձալս թողուի ըրէ իմ
քաղցրիկ մարիկ. գիտես որ խզմէթի
տէր ենք։ Աղաներուս տծ կենդանութի
տայ, ալիտի որ զկամքերնին կատարեմք.

Հայինն այս բանին մոռցայեր ենք թէ խղճմտնուս վրայ ժիր կենանք ուհաղըր գավինք ։ Այս սէպէպովս իժիր ձեռքերնիս չի պարդիր որ գիր գրենք ։ Ա̄ծ զքեզ մարութէ անհատ պահէ ։ ու աղօթքըտ վրայէս անպակաս ընէ ամէն ։

## Հօր և Մօր ։

Փոխանակ մեզ որդոցս ձեր` միշտ աշխատող ։ և տանն մեր զճրագն 'ի վառ պահող ։ Գլխոյս պսակապար հոգւոյս հաւասար ։ սիրելի գովելի և մեծարելի, իմ աշխատաւոր և շատ երախտաւոր ազնուալոյս հօրս և մօրս բազում սիրով և կարօտով շատ ու շատ բարև ։ Անարժան բերանամբս և շատ հարբէթով զձեռուըներնիս և զոտըներնիս կու համբուրեմ, և'ի համբուրելոյ չեմ դադարիր ։ Որ թէ քանի կենդանի եմ, զձեզ շալկոպս թէ ժուռ ածեմ, ձեր ծնողութեն երախտիքն չի վճարվիր ։ Որ իմ վրայ այսչափ աշխատանք քաշելնուդ ետև, հիմիկս հարսնուդ և թոռներուդ ալ հայր ու մայր էք եղեր ։ Ինձի համար Ա̄ծ ձեզի շատ օրեր տայ ։ որ ձեր շուքը ձեր տանը վրայէն չի պակսի ։ Ու թէ զիս



կու

կու հարցընէք իմ ողորմած ծնօղք.
Ահա ձեր աղօթքովն ողջ և առողջ եմ
և ձեր տեսուն խիստ կարօտ եմ։ Ած
ինքն ողորմի որ անգամ մի այլ ձեր ա-
ղօթքովըն ձեր տեսուն արժանի լինամ։
Ու ձեր հարսին տանըս մարդուն շատ
բարև կանեմ. Ած իրեն կարողութի տայ.
որ տողոցն մուղայէթ կենայ. ինչպէս
որ հինչուկ հիմիկ մուղայէթ կեցած է.
Թէ Ած ողջ պահէ ու յաջողէ որ
գամ, Ածվ զձեր ամէն պակասութին կու
հոգամ։ Օէրէ ես որ զայս զարիպու-
թիւնս կու քաշեմ, մէկ տուի նամուսի
համար է. գիշեր ցորեկ կաշխատիմ, թէ
ինչ է՝ նամէրտի մուխթաճ չիլինինք.
Ած ինքն ողորմի և ինքն յաջողէ ամէն։
Սարգիսիս երկու աչքըն կու պագնեմ
լալով և բազում կարօտով. նոյնպէս և
Լուսիկիս և նոնոփարիս։ Ձեր նէնէին
և մեծ նէնէին և մեծ պապին հմապանդ-
կեցէք. որ լսեմ ձեր աղէկ կենալնիտ,
և շուտով երնեմ գամ. Ու ամէնքըդ
ողջ կենաք ամէն։

Պարզէլ Հօր և Մօր։

Բոնաշխատ իմ սիրական հօրս և
քնքուշ սիրտ իմ անուշիկ մօրս։

Տանս մեր ամուր պարիսպ հօրս. և որ-
դւոց և թոռանց պէտ ընծող մօրս: Եւ
այսպիսի իմ ազնիւ պատուական և սի-
րական աչացս լոյս ծնողացս բարև շատ
բարև: Հարցանեմ զձեզ ՚ի բարին և ՚ի
կամն այ, թէ որպս էն կեանք ձեր
յայսմիկ դիժար ժամանակիս: Ած
ձեզ երկայն օրեր տայ. որ շատ ապրէք
ու ձեր որդոցն և թոռանցն խնամածու
լինիք: Եւ այս փիլիպպոս ձեր անար-
ժան որդւոյն զոր լինիլն թէ հարցանէք:
Գոհութի և փառք այ. որ ձեր սբ ա-
ղօթքովն և հանապազ օրհնէքովն պահեր
է զմեզ մինչև այսօր՝ իւր անհուն և
անհատ ողորմութենովն: Ո՛վ իմ ողոր-
մասիրտ հայրիկ և մայրիկ. քանի որ ՚ի
ձեզմէ զատուեր եմ. խոկի մտքէս չէք
հեռանար. կարօտս օր աւուր կու ա-
ւելնայ: Ու տղոցը սէրը՝ խելքի մ՚ հար-
ցընէք: Աղաչեմ զձեզ որ զիս յաղօ-
թից չի մոռանայք. որ օրով մի յառաջ
ած յաջողէ որ դանք զմեր կարօտն առ-
նունք: Օ երէ ղարիպութիւնն քաշե-
լու հալ չէ. անճախ թէ քաշօղն դիտէ:
Հէմէն ած ամենուն ողորմի. ապա թէ
մեզ իւր մեղաւոր անարժան ծայիցն:

Եւ դուք ողջ լերուք իմ պատուական ծնօղք երկար կենօք և խաղաղ ժամանակօք ամէն ։ Այս թղթիս բերող մեր եղբայր խաչերին հետ՝ ութ դէրմանհպուղ ոսկի ղրկեցի · առնուք և մեզ աղօթօղ լինիք · և զհասանիլն թղթիս՝ իմացընէք ձեր ծառայիս · և յա̃ծ ամանաթ լինիք ամէն ։

## Հարազատ Եղբօր ըստ հարցնոյ ։

Անարժան և անպիտան · յոյժ նըվաստ և յետնեալ ծառայէս ո̃յ մարտիրոսէս հասցէ շատ բարև և ողջոյն սիրոյ՝ իմ համահայր և համամայր հարազատ սիրական կարապետ եղբօրս ։ Հարցանեմ զքեզ ՚ի բարին և ՚ի կամն ա̃յ · թէ ո՞ր̃պ կեաս ՚ի կենցաղոյս դըժվար ժամանակիս ։ Տէրն տէրանց զքո հարազատ եղբայրութիդ որ հէմ եղբայր ես իմ՝ հէմ ճշմարիտ բարեկամ, ՚ի վերուստ և ՚ի ներքուստ եկեալ պատահարացն՝ անփորձ և անվնաս պահելով, երկար կենօք և բարի վարուք ՚ի խոր ծերութի̃ հասուցէ՝ մեր ծերունի ծնողացս աղօթքո̃վն ամէն ։

Եւ թէ ՚ի հարազատ եղբայրական սի-



րոյդ

րայդ շարժեալ՝ զքո անարժան եղբօրդ զողորմութիւն հարցանես։ Գոհութիւն և փառք բարերար մարդասիրին, որ իւր անհուն ողորմութեամբն մինչև ցայսօր պա_հեալ և պահպանեալ է զմեր անարժա_նութիւս առողջ և ամբողջ մարմնով և բա_ճական պիտականօք։ Արդ յուսամք թէ պահելոց է գանձեալ իւր գթութեամբն թէ ունիցիմք այլ ևս ժամանակ ընդ կամաց իւ_րոց համբերից։ Արդ գթութիւն և ողորմու_թիւն հասցէ միշտ ամ՛ ծառայից իւրոց ամէն։

Ու յետ սիրոյ ողջունիս՝ յայտ ե_ղեցի քեզ իմ համածնող եղբայր, որ քո սիրոյ եղբայրութեան գիրըտ եկաւ հա_սաւ քո ծառայիս։ Օ որ կարդացի և իմացայ զոր ինչ գրեալն էիր թէ որքան նեղութիւն կրեր ես 'ի ճանապարհին, թէ յարտաքին աւազակաց թէ 'ի ներքին սուտ բարեկամաց։ Բայց մի այնքան տրտմիր իմ աչաց լոյս, մարդոյս կեանքն միշտ փորձութիւն է ըսեր են գիտունքն։ Յոյս ունիմք որ ած ապաշխարանք կու համարէ թէ կամաւ ընդունիմք զփորձութիւն որ ակամայ գայ 'ի վերայ մեր։ Ու կաղա_չեմ զքեզ որ դարձեալ գրեսցես գրիկըտ պակաս չանես քո ծառայիս։ Որ թէ 'ի քաղցր

քո տեսոյդ զրկեալ եմ, որոյ գրկովը մխիթարիմ։ Եւ ողջ լեր իմ պատուելին եղբայր երկար ժամանակօք ամէն։

## Հարազատ Բարեկամին։

Բարեկամ հարազատ և եղբայր սիրելի։ Արտաքից և հոգեկից. մտաց ըղձալի՝ աչաց բաղձալի եղբօրդ իմոյ հոգևորի հոգւոյս հատորի. բազում սիրով և կարի յոյժ կարօտով ողջոյն ընծայեմ սարգիս ծառայս քո ՚ի հեռուստ աստի իբր ՚ի յոյժ մօտոյ։ Օ՛ ի թէպէտ երկար միջոցաւ տեղւոյ հեռի եմք մարմնով յիրերաց. Այլ այնպէս հաստատուն պատկերացեալ է դէմ սէր քո ՚ի մէջ սրտիս, որ համարիմ թէ իսկի բնաւ չես հեռացեր ՚ի քո ծառայէս։ Հարցանեմ զքեզ ուրեմն ո՛վ սիրելի եղբայր իմ. թէ ո՞պ կեայ քո պատուական անձինդ կեցուէ ՚ի յայսմիկ վշտաշատ ժամանակիս։ Օ, որ տ՟ր ամ՟պահպանիչն ամ՟ի՝ պահեսցէ և պահպանեսցէ զքեզ յամ՟ վնասակար պատահմանց ո՛պ զվարդ պայծառ և անթառամ։ Եւ այնպէս անսասան կենօք և բարեպաշտ վարուք՝ մինչև ՚ի խորին ծերութիւն հասուսցէ ամէն։

Իսկ թէ զմեր նուաստութեան հարցանես զորպիսութիւն. գոհութիւն քեզ փրկողին մերոյ. որ իւր անհուն բարերարութեամբն պահեալ և պահպանեալ է զմեզ մինչև ցայժմ ի ներքոյ անհուն նախախնամութեան իւրոյ։ Որ ոչ ըստ մեղաց մերոց առնէ, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատուցանէ։ Այլ իւր քաղցր գթութեամբն և ողորմութեամբն՝ զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց և այլն։ Որոյ խնամքն և բարերարութիւնն ի սիրելւոյդ իմմէ անպակաս եղիցի ամէն։

Իսկ յետ սիրալիր ողջունիս ծանիր եղբայր իմ սիրելի, զի այս վեց օր է որ լուեցի թէ սակաւ ինչ հիւանդութիւն ունեցեր ես։ Իսկ յայն օրէն իվեր իբրև զձուկն ի ցամաքի կու տառապիմ. և մէկ մի չի գտի որ գիր մի տամ. և ձորով գտայ զայս եղբայրս և տվի զգիրս. Իսկ կաղաչեմ զքեզ ով հայր հոգւոյ իմոյ. որ գիրըս քեզ հասածին պէս, էհմալ չանես՝ շուտով գիր մի ղրկես։ Որ ածն ամի՝ կատարեալ առողջութեդ խապարովն խնդացուցէ զիս և զամենայն սիրելեացդ քո ամէն։

'Ի Հօրէն՝ Արտաւազն բարև։

Գաւազան ծերութեան իմոյ և օգնա-
կան տկարութեանս։ Խնդութիւն
սրտիս յարաժամ, և բերկրութիւն հոգ-
ւոյս յամերամ։ Գովելի բաղձալի եր-
կու աչաց լոյս յօհաննէս սիրելի որդ-
ւոյս շատ սիրով և շատ կարօտով բարև
շատ բարև 'ի լալագին հօրէդ անարժան
Երանոսէս։ Հարցանեմ զքեզ իմ սիրա-
տաչոր սրտիս կարօտեալ որդի. թէ որպ
կաս 'ի յերկիրդ այդ ղարիպութեան։ Թէ-
պէտ ես չեմ ղարիպ որ յիմ երկրիս կամ
և բնակիմ. բայց որ 'ի քո անուշ տե-
սոյդ հեռի եմ, այս ղարիպութիւս մեծ
է քան զմնալն յօտար երկիր։ Որ թէ
յօտար երկիր քեզ հետ լինէի , այն
ոչ էր ինձ ղարիպութիւն։ Մծ իւր աւատ
ողորմութեանցն՝ արժանի անէ որ տես-
նում զքեզ ու լցվի իմ կարօտութիւնս։ Ով է
րէ հօր և մօր կարօտութիւն որդւոյն
վերայ՝ անպատմելի է քաշողն գիտէ։
Այլինտի ղայրէթ արէ իմ աչաց լոյս որ-
դի յօհաննէս. որ օրով մի շուտով
գաս որ կարօտովտ 'ի գերեզման չի մտ-
նամ։ Մծ քեզի երկար ժամանակ ու-



ա

տուողը անձնիկ տայ. և զամէն գործը քո միշտ 'ի բարին յաջողեցէ ամէն։

## Դէ Մօրէն՝ Աղեքսանին Տաղը։

Պալար բարունակ՝ ոսկի ըմպանակ։ Անըղածոր փեթակ՝ հոգուոյս իմ կամնակ։ Քաղցրիկ օշարակ՝ իմ ճար ու ճարակ։ Իմ մէկիկ զաւակ՝ իմ բարձր աշտարակ։ Իմ երկու աչաց լոյս սիրական ալեքսան որդուոյս շատ ու շատ բարև 'ի քո լալագին մօրէդ։ Շատ սիրով ու շատ կարօտով՝ հարցընեմ զքեզ իմ աչքերուս լոյս ալեքսան որդի. թէ ինչ հալի վրայ ես 'ի յօտար երկրիդ ու ղարիպ տնանկիդ։ Եղուկ իմ այս ծերունի պահուս որ քեզմէ կարօտ մնացի։ Գրկովս շուրջ եմ ածեր ու կաթնովս եմ սնուցեր. ու հիմիկ տեսուտ կարօտ եմ նստեր։ Մէկ օրս է ինձ օր, ոչ գիշերս է գիշեր։ Չեմ գիտնար կուշտ ես թէ քաղցած։ Յարևուն պահեցի զքեզ, ու ցրտուն ծածկեցի. ու հիմիկ չգիտեմ յոր պուճախնի կու կենաս ու ինչ հալի վրայ ես։ Դու ղարիպ 'ի քո աշխարհէդ ու տընէդ. ես ղարիպ 'ի քո երեսէդ ու քաղցր լեզուէդ։

Այն ածն որ ամենուն կողոպտի , ինքն իր ողորմութենովը մեզալ ողորմի · որ դուն գաս քու հասրաթին հանիս · ու մեր աչքն 'ի լոյս լինի և սրտիս խոցն դուրանայ ։ Ու թէ դուն զմեզ կու հարցընես իմ անմեղման որդի · ոյ գոհուի · ամէնքս ողջ և առողջ ենք · և քու քաղցրիկ երեսիդ հասրաթ ու կարօտ ենք ։

Սեց ոսկի եկաւ մեզ հասաւ · ած քու բանիդ գործիդ յաջողութի տայ ։ Կրիկոր պակաս չընես որ առնենք մեր աչքին քընենք ։ Ու ողջ կեցիր իմ անուշիկ որդի ալեքսան ամէն ։ Պետրոս ամուճատ և հարսներին ողջոյնովը շատ բարև կընեն ։ Ու դըրացներըտ և այլ բարեկամներըտ շատ բարև կանեն ։ Ու ամէնքն զխադըրիկըտ կու հարցընեն բարով կարօտով ։

### Ի հօրէն և 'ի մօրէն Սէրովբին ։

Սուանդնոտ սիրով ու շատ կարօտով · լալագին դիմօք ու լալոտ աչօք · անարժան հօրէտ պետրոսէն ։ ու խղճուկ մօրէտ դըժխայէն ։ Հազըր բարև ու շատ բարև մեր նորահաս վարդենի՝ ու ծաղկազարդ նունենի անուշիկ և

և քաղցր որդի վարդերեսիդ ։ Հարցա_
նեմք զքեզ ’ի բարին և ’ի կամս արարչին ․
Թէ ինչ հալով կու կենաս ’ի ղարիպ օ_
տար երկրիդ որ դու մէնէ կարօտ՝ ու
մէք ’ի քենէ ։ Ողորմածն աստուած՝ քեզի
ողջ անձնիկ տայ, ու մեզ համբերութի ։
Ու իւր առատ ողորմութենոյն արժա_
նի անէ զմեզ, որ մէկ ըզմէկ տեսնե_
լու արժանի լինանք ու ուրախանանք ։
Ու թէ ըզմեզ կու հարցընես ով սիրա_
կան հօր և մօր կարօտած որդի ․ գո_
հութի ու փառք այ ․ որ ամէնքս ողջ
ու բարով ենք ․ մինակ քու տեսուտ կա_
րօտ ենք ։ Աստ քեզի հանապազ թև ու
թիկունք լինի ամէն ։

Ու գիտացիր մեր սիրական աչաց լոյս
որդի ․ որ (այս ինչ և այս ինչ ։)

Ու ողջ կենաս այ անհատ ողորմութե_
նոյն ․ որ այ քաղցր գթած նազարն
քու վրայէն անպակաս լինի ամէն ։

Մ՝որուքեռիտ և քեռեկինըտ ․ և որ_
դիքն ալէքսանն և ղուկասն ․ և ամու_
ձաններըտ փիլիկն և սոնիկն ․ և այլ ըզ
քեզ հարցընող ընտանիքըն և դրացնե_
րըտ և այլ բարեկամներըտ շատ բարև
կանեն և զանոյշ խադրիկըտ կու հարցընեն
բազում կարօտով ․

## Տէրացու Պետրէ ։

Զարմանալի ոլորակօք իմաստուն ժամասաց՝ քաղցրաձայն երգ-նակ · 'ի մէջ եկեղեցւոյ քաջահնչօղ հո-գերգու՝ խորախատակ խօսնակ ։ Հմուտ ամ խաղից և պարուկաց , հուհայից և բնկորձաց և համեղ եղանակաց , տա-ղից և մեղեդեաց · գանձուց և շարակա-նաց և այլ հոգևոր երգոց ։ Դու ըն-թերցող անվրէթար զոր գիրս յեկեղեց-ւոյ՝ պայծառ տիրացու եղբօրդ իմ սիրելւոյ ։ Մկրտենց կարօտի՜ յօգնա-ւոր ըղձի՛ւ · բազումն յոյժ փափագա-նօք ընծայեմ ողջոյն սիրոյ 'ի ձեռն փոք-րիկ տոմսակիս ։ Դու քո այս եղբայրս յետնեալ , հարցանեմ զփրաղնէիդ իմոյ զորպիսութի ։ Թէ զո՞րպիսիս արդեօք ունիս զներկայութիւն 'ի յայսմ յոյժ յետնեալ և թշուառեալ ժամանակիս ։ Դու հայցեմ 'ի բարերար և միշտ բարի եռանձնական տէրութէն · որ զեղբայ-րդ իմ ցանկալի որ ես զարդ ո՛չ եկե-ղեցւոյ , առանց ամ վնասուց անփորձ և անաստան պահելով , անկարօտ պահես-ցէ զժողովուրդ իւր 'ի քո քաղցր ձայ-

նէդ

նէդ և բերկրալուր բարբառոյդ ։ Մանա-
ւանդ 'ի բաղձալի քոյին քաղաքավար հա-
մեստ և շահաւէտ խօսակցութեդ ամէն ։
Եւ թէ քոյին քաղցր և անոյշ և յոյժ
ազնիւ եղբայրութիդ հարցանէ զիմ
քո անարժան եղբօր զկեցութի ։ Գո-
հութի և մեծ շնորհակալութի մարդասի-
րին այ ։ Որ մինչև 'ի կէտ ծերեցման
գրոյս՝ պահեալ է զմեր անարժանութիս՝
իւր անհուն ողորմութբն և գթութբն ։
Որ կեամք ահա ողջ . և առողջ անձամբ
'ի մարմնի · կարօտ գոլով յոյժ քաղց-
րահայեաց և քաղցրատեսս քո պատկե-
րիդ տեսութե ։ Եւ յետ սիրոյ ող-
ջունիս և սրտատենչ կարօտոյս , ծա-
նիցէ քո գերազնիւ եղբայրութիդ ով
իմ ցանկալի լոյս աչացս , զի (այս ինչ
և այս ինչ ։) Եւ ողջ լեր իմ պատուա-
կան եղբայր յոյժ երկար և խաղաղ
կենօք և անդորր ամանակօք մինչև 'ի
խոր ծերութիւն ամէն ։
(Նուաստ ծառայ քո որդի մեսրոպ ։)

## Մեծապատիւ Մահտեսոյ ։

Ազնուատոհմ և մեծարգոյ · հոգե-
սէր և բարեպաշտօն ։ Յոյժ պատ-


ուե

ւելի և մեծարելի հեղահոգի մահտեսի
աղայիս և սահակ պարոն՝ գլխոյս թագ
և պսակ՝ ազգի պարծանք վէլինամէթիս՝
շատ սիրով և կարօտիւ ծառայական
ողջոյն ընծայեմ ․ և զանոյշ խադրիկդ
հարցանելով հարցանեմ։ Թէ որպիսա_
բար կեայ արդեօք քոյին պատուելու_
թիւնդ ՚ի դառնացեալ ժամանակիս ։
Եւ խնդրեմ անարժան բերանովս յա_
ղէնխաղ արարչէն ․ որ զքո գերամեծար
անձինդ մին օրն հազար արասցէ ․ Եւ
քո աղքատասէր չէն օձախին՝ առաւել
առատութի բարեաց տացէ ։ Եւ գեղե
ցիկ գարնան ծաղիկ չելէպիներացդ և
քաղցրախօս տատրակ և ծիծեռնիկ
թոռներացդ արև շատութի շնորհեսցէ
ամէն ։

Եւ թէ զմեր անարժանութիս հարցա
նել կամիցի մեծ քո պատուելութիդ ։
Գոհութի ամենամեծին այ ։ Որ հրա_
մանուցդ աղօթքովն պահեր է զմեզ
մինչև ՚ի յայս կէտս ողջ և առողջ ան_
ձամբ որ չեմք արժանի ․ Եւ աղօթող
եմք հրամանուցդ արևշատութեն որ_
պիտանի ես բոլոր ազգիս ․ որ ձեռնտու
ես տկարաց և օգնական անկելոց ։ Եւ


Եւ

ևս կերակրիչ և դարմանիչ ես որբոց և այրեաց լեր զգթած հայր և ողորմած մայր։ Արդ օգնականն ամենեցուն ա͞ծ՝ օգնեսցէ քեզ յա͞մ բարեգործութի͞ս քո 'ի յելս և'ի մուտս․ և քո չէին օժախեն զաւալ չտայ ամէն։ Եւ յետ ծառայական սիրոյ ողջունիս յայտ լիցի քեզ ին հրամանուցդ-ըզի (այս ինչ և այս ինչ։) Եւ ողջ լեր իմ պարոն մ͞հտսի ամիրայ հանդերձ քոյայնովքդ՝ երկար և խաղաղ ժամանակօք և ա͞յ հաճոյ վարուք ամէն։

## Պարճէառ Մեծապան։

Բարեգործ և բարեպաշտ․ բարեսէր և բարեբաստ․ քաղցրաբարոյ և գթասիրտ։ Աչացս լոյս իմ սահաբ պարոն մահտեսի աղային՝ շատ սիրով և կարօտով զձեռքն կու համբուրեմ։ Եւ զորպէսն կենաց հարցանելով 'ի կամս ա͞յ, խնդրեմ համապայ․ զի արարիչն ա͞ծ գթածն և ողորմածն, երկայն օրեր տացէ քո հրամանուցդ։ Եւ նորատունկ նորաբողբոջ զուարթածաղեկ սիրելի սիրազուն օժախզատէ չէլէպիներացդ տացէ տ͞ր ա͞ծ 'ի խոր ծերութի հասանիլ։ Եւ յա͞մ պատահարաց



պահ

պահպանեալ, ոպ̃ զսիւն հաստատուն և
ծաղկեալ ծառ հաստաբուն, բազում
կենօք կեցուցէ կազդուրեցուցէ և
հաստահիմն արասցէ զքեզ։ Եւ քո
օրհնեալ օճախին զառատալիր բարու_
թիւնն՝ որ դարմանիչ է օտարաց և մա_
ռանն աղքատաց որբոց և այրեաց, ան_
հատ և աննուազ արասցէ տ̃ր որպ̃ զա_
ռատութ̃ի բարեաց մեծի նահապետին
աբրահամու հօրն հաւատոյ։ և յոբայ
երանելւոյն ըստ վերջին բարութ̃ե̃ն։
Եւ քո հանգուցեալ բարեսէր և ա̃ծա_
սէր ծնողացդ, և ծնողացն ծնողացդ,
զհոգիսն լուսաւորեսցէ, և երկնից
արքայութ̃ե̃ն արժանացուսցէ ամէն։
Եւ թէ քոյին հրամանուցդ մեծա_
պատուութիւնն՝ զիմ անարժանութ̃իս
հարցանել կամիցի։ Գոհութ̃ի և փառք
մեծին ա̃յ։ որ իւր անհուն ողորմութ̃ե̃ն
պահեր է զմեզ ողջ և առողջ մինչև ցայ_
սօր։ Եւ հրամանուցդ կենդանութ̃ե
և առողջութ̃ե և տեւելութ̃ին աղօթող
եմք հանապազ. ոպ̃ տ̃ր սիրտ քո վկայէ։
Յիշելով միշտ և ոչ մոռանալով զքո հրա
մանուցդ յիմ վ̃ր եղեալ զերախտիքդ։
Որ զիս զքո անպիտան ծառայս, իբրու_


թէ

թէ ՚ի հողոյն վրայէն յերկնից կամաւն հանեցեր. որ տընտըղուելք մեծով և փոք րով միշտ յարաժամ քո աղօթողն եմք։
(Եւ այլն զոր ինչ կամիս ասել։)

## Առ հաւատեան Բարեկամն։

Պերապատուելի և գերամեծար. բարեհամբաւ և փառաշուք ատ_ նուտէր։ Հոգւոյս հատոր աչացս լոյս մանկանս եղբօրս՝ շատ սիրով և շատ կարօտով ողջոյն սիրոյ և բարձանաց, և համբոյր պարանոցի գրկախառն ընծայի ՚ի նուաստ եղբօրէս քումմէ և հարազատ սիրողէս։ Հարցանեմ զքո հրամանուցդ քաղցրիկ խաղըրիկն առողջիւս այսու երկ րորդիւ։ Թէ ողջախաղաղ կեայ քոյին մեծապատուութիդ ՚ի յայս դժուար ժամա նակիս։ Տէրն տէրանց ածն ամի՝ եղ_ բօրդ իմոյ սիրելւոյ և ճշմարիտ բարե_ կամի՝ երկար ժամանակ պարգևեսցէ։ Եւ յետ ողջունաբեր պատահման պահ_ պաներով պահպանեսցէ. որ բնաւ քէ_ ռեր և վատ օրիկ չտեսանեմ՝ բոլոր օձա խոյն հանդերձ ամէն։

Եւ թէ պյետանեալ եղբօրս քոյ զոր_ պիսութիւն հարցանես, ամբերանով գո

գոհութի և փառք այ ։ Որ քո հրաման-
նուցդ բարի կամեցողին՝ պահեալ է ըզ
մեզ ողորմութին այ ողջ և առողջ մինչև
ցայսօր․ յոյժ առաւել քան զարժանն
մեր ։ Որ ընաւ չունիմք արժանաւորութի
նաև կենդանի մնալոյ․ թող թէ պահպա
նեալ լինելոյ ։ Այլ զկնի ողջունին՝ գի-
տութիւն լեցի քոյ հրամանուցդ ․ որ
սիրոյ գիրն քո եկն էհաս մեղաւորիս ․
և խնդոյն տրտմեցոյց և շուտով մի դեղ
բերկրեցոյց զկապեալս քո սիրովդ ։
Որ գրեալ էիր զիմ աչաց լոյս յակոբ չէ
լեպուն քո զհիւանդանալն , և ով զա-
ռողջանալն ։ Որ թէպէտ ծերմատեցաւ
քաղցրիկ սրտիկն քո , զոր ած ապաշ
խարութի հաճոյեսցէ ։ Բայց գոհութի
գթած մարդասիրին․ որ գթացաւ զար
ձեալ ըստ մեծի իւր գթութեն ։ Նու-
քերնիտ ուրեմն լոյս լինի և այ մարդա-
սիրին փառք ․ Նաև վատ օրինկ չտես-
նէք ․ ողջ և առողջ մնայք երկար և
խաղաղ կենօք իբրու ծառ ծաղկա-
փթիթ և այգի վայելուչ ՚ի շնորհս այ
ամէն ։

(Նարժան ծառայ մանհաեսի անտօն ։)

## Պարջեալ Մեծատան։

Աստուծով զօրացեալ և փառաւորեալ. բարեհամբաւեալ բարեհրաշակեալ։ Որբոց և այրեաց խնամածու. և աղքատաց և անկելոց օգնական և ձեռնտու. և առատաձեռն՛ի չքաւորս։ Աահայ պարոն իմ մահտեսի աղայիս զձեռքն կու համբուրեմ անարժան ծառայս բազում կարօտով և սիրով։ Թէպէտ չեմ արժանի թէ հարցանել համարձակիմ զիմ աղայիս զանոյշ խադրիկն։ Բայց դիտելով զխոնարհութի քոյ իմ ազնուագութ անձինդ, հարցանեմ ծառայս թէ ո՞րպէս կեաս իմ քաղցր աղայիս պատուելութին ՚ի վշտաշատ ժամանակիս։ Ո՛ որ տր ածն տմի՝ քոյին հեզահոգի և գթասիրտ սիրելութեդ՝ և տէրամբ զօրացեալ աչացս լոյս բարեբոյս չէլէպիներացդ արևշատութի տալով։ Դու աղքատադարման չէն օճախին զաւալ չըտայ ամենևին. որ գթած հայր և ողորմած մայր ես տմ անկելոց։ Որև յտմ ձախորդութեց և ներհակ պատահմանց, աղաստ պահեսցէ զքեզ տէր ածն տմի ամէն։

(Եւ այլն զոր ինչ կամիս ասել։)

## Առ սիրելին բարեկամն և հմուտ գրոց․

Բաղձալի ըղձալի եղբայր իմ՝ ընտրեալ․ ՚ի ճշմարիտ սիրոյն սիրով սիրեցեալ։ Օ սիրոյն նըպատակն ՚ի քեզ հանգուցեալ, և ՚ի սէրն նորին սիրով կապակցեալ։ ՚Ի բարեսէր բանէն պատկեր նկարեալ․ և իմաստից հոգւոյն խորան յօրինեալ․ ՚Ի ներքուստ մաքրագործեալ․ և արտաքուստ գերափայլեալ։ Վարուք լուսափայլ և բարուք պայծառ։ Ըղձմանց տարփալի և իմ անձկալի․ եղբայր անդրանիկ և անմիջոց սիրելի։ Պարծանք պանծալի և կարի յոյժ ցանկալի և խնդութե՜ ինձ տեղի՝ սիրելւոյդ իմ յոյժ սիրելւոյ ողջոյն սիրալիր՝ խանդակաթ տարփմամբ ընծայեմ քո նըւաստ և յետնեալ ծառայս։ և այլն։

## Թուղթն գրել ըէ վլաշելէ․

Գովելի մարգարիտ իմ վայելչագեղ․ և ակն լուսափայլ՝ գերազնիւ բիւրեղ։ Պարզ և յըստակ հայելի աննենգ ՚ի սրտի։ Լուսաբողբոջ վարդպայծառ բացեալ ՚ի թփի․ և դեռաբոյս մորձիկ ՚ի մէջ պարտիզի․ Խնծոր նո-



րա

րախայծ . լուսին թերաւեաց : Բաժակ ըերկրաբեր, ժառանգ ծերութեանս ; Տանս ճրագ լուսաւոր, որդւոյս իմ որ_ դի . աչացս լոյս ողկեհատ թոռնեակ սիրելի: Զվարդագոյն տիպ քո համ_ բուրեմ զեղուն կարօտիւ սրտակաթ ըղձիւ հոգւոյս իմ հոգի: (Եւ այլն զոր ինչ ունիցիս ասելի:)

## Եւ բաւ լիցի առ այժմ այսքան:

---

## Բացատրութ̄ ինչ առ 'ի մէջ ածօղ սիրելեաց զօրինակս Բարեւագրաց:

Եւ աստ 'ի վերջնում տետրակիս փո_ քու՝ ծանիր սիրելի ընթերցող: Զի որ եղաւ աստ այսքանիկ ինչ օրինակ բարեւագրութե̄, ոչ եթէ այն մտօքն եղեալ է՝ թէ միշտ այսպէս եւ միայն այսչափով եւ ոչ աւելի կամ պա_ կաս պարտիս գրել: Այլ այսորիկ ո̄պ վարժիչ եւ գաղափար տուան քեզ փոքր ինչ: Որովք կարելի է քեզ կամ միայն զնոյն օրինակ գծագրել, կամ այլ աւելի ինչ երկարել . կամ թէ իսկ կարճել . կամ յոյժ համառօտ գրել: Նաեւ կամ



քանի

քանի մի ինչ բառ և բան առնուլ 'ի
միոյն և 'ի միւսոյն կամ յայլ միւսոյն։
Նաև կամ թէ առնուլ զոմանս յայսմ
տետրակէ, և զոմանս յայլ տեղեաց, և
կամ թէ արտահանել ինչ և 'ի քոյին մը
տացդ։ Նոյն թէ ջանասցիս, որ կըր
թելով զքեզ 'ի շարադրութե, կարողա
ցիս ա̃վ թարց օրինակի շարադրել։
Նաև այս յայնժամ լինի, եթէ սէր ու
նիցիս քերականութե արհեստին։ Որ
թէ և ոչ կարիցես ուսանիլ զկատարեալն
վն աշխարհիս զբաղմանց, գոնէ սակա
ւիկ ինչ ծանօթ գտեալ, մի՛ ընթեւին
անմասն մնասցես յայսպիսի յոյժ պիտա
նի գիտութենէս։ Որ առանց սորա՝ թէ
և զա̃ծաշունչ գիրս բոլոր 'ի բերան ու
նիցիս, կամ թէ և մեկնիցես, ոչ կոչիս
գրոց աշակերտ։ Իսկ թէ զհոլովմն գո
նէ միայն անուան և բայի առցես 'ի բե
րան, 'ի կարգի գրոց աշակերտացն հա
մարիս. զի նոյն արհեստին արհեստա
ւոր եղեալ ես։ Պարծեալ գիտելի է
սիրելի իմ. զի որ ոք և իցէ որ կամիցի
բարևագիր գրել միում ումեք, հարկա
ւոր է նմա ճանաչել զկացուի այնր ան
ձին. և այնպէս գրել ըստ նմա վայելէ։

 Օի

Զի եթէ այնպիսի բարձր գովութիւ տացէ ումեք որ չիցէ վայելուչ նմա բնաւ, յոյժ անպատկան լինի գրեալն։ Վասն այսորիկ պարտ է նկատել թէ որպիսի ոք է անձն այն. և այնպէս ըստ պատշաճին գրել զբանն։ Այսինքն՝ եթէ իմաստուն կարդացող է. եթէ ճոռոմ ատենաբան քարոզիչ է։ Եթէ վանաշէն և մարդաշահ է. եթէ հեզաբարոյ և խոնարհ է։ Եթէ պահեցող և ճգնազգեաց է. եթէ աշխարհատեաց անընչասէր։ Եթէ համբաւունակ արհեստագործ է. եթէ համեղաձայն քաղցր երաժիշտ է։ Եթէ մեծատուն և ընչաւէտ է. եթէ ողորմած և հոգեսէր է և առատաձեռն է ՚ի յաղքատս, և այլ ինչ այսպիսի։ Զորս պարտ է բարւոք նկատել և ըստ անձինն տալ

գովութիւնն։

Եւ երբ աստ եղեալ օրինակաց զմէկն կամիցիս թէ գրես մեկի մի, և գտցի ՚ի մէջն մեկ երկու բան՝ որ չիցէ պատկան այն անձինն, պիտի որ չի գրես զայն։ Զի ով և կամիս՝ կարես հաւաքել և յայլ օրինակացն կամ ՚ի քո մտացդ ըզպատկանն այնր անձին որպէս ասացի։



Եւ

Իսկ թէ կամիս յոյժ համառօտ գրել, կարես ասել: Վերապատուելի երիցս երանեալ սրբազան հօրդ իմոյ մեծի զՔո ներքանան համբուրեմ: Իսկ հարցանեմ զողջութեան քոյին գերամեծ սրբութեանդ և այլն: Ի նուաստ և անարժան ծառայ այ: կամ՝ ի նուաստ և անարժան՝ մեղաւոր և անպիտան ծառայ այ: Կամ յանարժան և անպիտան ՚ի մեղաւոր մարկոսէս շատ բարև սիրելի եղբօրն իմոյ վարդերեսին: Կամ սիրելի աչացս լոյս աշխատաւոր հօրս և մօրս: Կամ աչացս լոյս սիրական որդւոյս մելքոնին: Հարցանեմ զձեզ ՚ի բարին և ՚ի կամն այ: և այլն: Ով ի որ այնքանիկ ինչ երկար եդաւ յայսմ տետրակիս, ոչ սերմոյէ արվաւ.քեզ այն: Որ զորքանն և կամիս, զայնքանն ածես ՚ի գործ ոչ ՚ի վերն ասացաւ: Իսկ թէ պատրիարգ է կոստանդնուպօլսոյ որում գրեսդ, պատկան է ասել: Նոր ոսկի բերան՝ երկրորդ ածաբան: Մեծի մարդաշատ գերահամբաւ արքայանիստ մայրաքաղաքիդ կոստանդնուպօլսոյ, երիցս երանեալ սրբազան արժանաւոր պատրիարգի և այլ: Իսկ թէ իցէ այլոց քաղաքաց առաջ_



նորդ,

նորդ , ասի ըստ պատշաճին ։ Մ՛եծի
հուշակաւոր մայրաքաղաքիդ կամ՝ ա͞ծա-
պահ քաղաքիդ Թէոդուպօլսոյ ։ Եւդո-
կիոյ ։ Գաղատիոյ ։ զմիւռնոյ ։ և այլ։
Վերադիտօղ ։ վերատեսուչ արք եպիս-
կոպոսի ։ կամ՝ արհի ։ և երջանիկ աւագ
նորդի և այլն ։ Իսկ թէ նուիրակ է ո͞չ
էջմիածնի , ասի ։ Առ մօր մերոյ ս͞բյ
էջմիածնի գերապայծառ աթոռոյն և
պարծանաց գահին հարազատ որդի և
ծայրագոյն նուիրակ , երկիցս երանեալ
հօր իմոյ ա͞ծաբան վրդ͞պտի ։ և այլն ո͞չ
պատկանին է ։ Առ պատուելի մարդոյ
զանունն ՚ի մէջ գրին յիշել անպատկան է
այլ միայն ՚ի հանելին պարտ է գրել զայն
պիտին որ պատիւ է նորա ։ Նաև ոչ
զանուն իւր պարտ է յիշել գծագրօղն
՚ի մէջ գրոյն ։ այլ ՚ի ներքին կողմն գրին
պարտ է յիշել զանուն իւր ։ Առ պատո-
ւոյ անուանքն քանի մի տողով ՚ի վեր
պարտին գրել քան զբանն ։ պարապ մնա
լով մէջն քանի մի տող ։

Իսկ թէ կ͞ղկս է որում գրեսդ , կամ
այլ աթոռոյ աւագնորդ , թէ ՚ի հաս-
նին և ոչ գրես զանունն , այլ բարուք
լինի ։ ոչ առնեն այլ ազգաց գիտունքն ։

 Օր

Օ ի այնպիսեաց գիրն յայտնի է 'ի պատ-
ուոյն առանց յիշման անուանն։ Սր գրի,

Հասցէ գիրս ողորմութե͞ն ա͞յ 'ի ս͞բ էջ-
միածին 'ի պայծառ գաւ͞ռ Հայոց։
'Ի ձեռին Նորին երից երանեալ եր-
ջանիկ Հայրպ͞տի տեառն"
սրբազան Կթ͞ղկսի ա͞մ Հայոց հօր մերոյ
ս͞եյ 'ի բարին ամէն։

Հասցէ գիրս ողորմութե͞ն ա͞յ 'ի սուրբ
էջմ͞'ի ս͞բ գաւ͞ռ Հայոց 'ի ս͞բն յակոբ
'Ի ձեռն Նորին վեհազան Պատրիարգի
և արթուն այցելուի սուրբ տեղեացն`
տեառն" Սրբազան և ա͞ծաբան
վրդ͞պի հօր իմոյ ս͞եյ 'ի բարին ամէն։

Հասցէ գիրս ողորմութե͞ն ա͞յ` 'ի ս͞բ
վանքն մշու սուրբ Կարապետու։
'Ի ձեռն Նորին արժանաւոր վերադի-
տողի սրբազան արք եպիսկոպոսի` տ͞ն"
ա͞ծաբան վարդապետի հօր
իմոյ սրբոյ 'ի բարին ամէն։

Հասցէ գիրս ողորմութե͞ն ա͞յ 'ի մեծ
քաղաքն արքայանիստ կոստանդնու-
պօլիս։ 'Ի ձեռն Նորին արժանաւոր
գերերջանիկ Պատրիարգի` տեառն"
սրբազան և ա͞ծաբան վարդապե-
տի հօր իմոյ սրբոյ 'ի բարին ամէն։
Նոյնպէս և այլոցն ո͞ղ և կամիս։

Նու մեկնիմի ամէնէն որ գիր գրմէ մե_
կնիմի, կամ մեկը գրէ իր տանն։ Որոց
բերնէն որ բարև կայ, կամ որոց բարև
կընէ․ այնքն յետ կատարման խօսիցն
պատկանելին դնիլ։ Թէ՝ մեր ենիշտէ
պօղոսն․ քեռի սարգիսն․ և դրացներն
քեզ շատ բարև կանեն։ Նոյնպէս և
միւսն թէ, Ֆուլանին Ֆիլանին շատ բա_
րև կանեմ։ և այլ ասելի խօսք որ լինին
՚ի նոցին բերնէն՝ ՚ի վերջն գրիլ։

Բայց զայս գիտասջիր սիրելի ընթեր_
ցող․ զի ով ոչ է պիտոյ ցուպ ՚ի
ձեռն կարողաց առ՚ի քայլել, այլ միայն
տկարաց․ և ոչ հաց և համդերձ՝ ուտո_
ղացն է պիտանի, այլ չուտողացն։ Նոյ_
պէս և ոչ ուսումն ինչ է հարկաւոր ու_
մեք գիտողի ընդոյնն, այլ տակաւին ոչ
գիտողացն։ Նա այս հայելով և մերս
նուաստուս, մանաւանդ յամենայ եղբարց
սիրահարկեալ, կամեցայ տեսրակ մի
շարադրել բարևագրութեան․ Իբրու ձե_
ռընտու այնոցիկ, որք չգիտեն բառա_
կան շարադրել ինչ ըստ արհեստին․
անհմուտ գոլով քերթողութեան․ առանց
որոյ ոչ ոք կարէ շարադրել իմն ինչ
ուղղապէս միշտ։ Նայեցի զմիշտն․ զի
գը

գտանին ընթերցասէրք ոմանք, որք յա֊
ճախ ընթերցմամբ գրոց, վարժեալ են
տանել շարադրութի ուղիղ։ Բայց մի
ո՛չ գիտելոյ զարհեստն քերթողութե,
կարեն սխալել ուր ուրեք. կամ՝ 'ի հո֊
լովսն անուան և բայի, կամ թէ 'ի խըն֊
դիրսն և յայլսն։ Իսկ այս տետրակ ո՛չ
և այնպիսեացն է պիտոյ. զի կարեն նո֊
քա զմտորթն հանել 'ի ջրէն լաւ ասացն.
գեր քան զայս շարադրելով գեղեցիկ
և նուրբ։ Այլ այնպիսեացն տրվաւ
այս գիրք մի ձեռնատու, որք չեն վար֊
ժեալ այնքան 'ի շարադրութե։ Եւ մեր
խոկ տկար ուժն՝ անձանս թէ այնպի֊
սեացն կարելով սակաւ ինչ օգնել՝ որք
քան զմեզ իցեն տկարք, յարմարեցաք
զայսքանիկս։ Առեալ զոմանս 'ի նախ֊
նեացն շարադրութեց, և զոմանս որքան
եբեր կարն ամենակար՝ 'ի կարն մեր
տկար։ Ընկալարուք ուրեմն սիրով՝ ձե֊
րովք խոնարհութե ով եղբարք իմ հայա֊
զունք և սիրազունք՝ և հայաստան եկե֊
ղեցւոյ ընթերցասէր սիրամանկունք։
Զ փոքրիկս զայս տետրակ՝ իբրու խա֊
ծած խնծորակ մի 'ի չքոտ մանխաղէ իմն
աղքատութե և ողջ լերուք ամէն։



Զըն

Զընչէին պաշտաւոր՝ Տըղայք Գրեգորեան ·
Կոստանդնուպօլսեցի Յեսայեան ։

Վկայութ տառէն և օրհնակս յետանակէր փառաց
վասն երայ էնէ ։

Պատճառ գրոյս այս է ։ Որ ես մար-
տիրոսի որդի ոսկերիչ մահտեսի յով-
հաննես, ՚ի թվին հայոց ՌՃՁԱ · ապրիլի Ի,
առի ոսկերիչ մահտեսի պետրոսէն հինգ
հարիւր ղուշ փոխ ։ Որոյ կեան կանէ
ՃՁԾ ղուշ ։ Եւ առի զայս ըստակս ՃՁԱ
օր վաթելով · որ իմ վերայ հարկաւոր
պարտք է վճարմանն ։ Երբ յորժամ լրա-
նայ օրն վաթելին մերոյ , տամ և վճա-
րեմ ՌՃ զիմ այս պարտքս · և առնում
զիմ զայս ձեռագիրս զոր տուեալ այժմ
՚ի ձեռս նր ։ Որ ՚ի պատեհ ժամու վը-
կայեսցէ տեսողացն և բաւ է ։

Այս բանիս՝ այս անուն և այս անուն
և այս անուն ։ Ես մարտիրոսի որդի
մահտեսի յովհաննես կնքեցի զայս իմ ձե-
ռագիրս որ ինձ հաճոյ է ։



Պատ

Պատճառ ձեռագրոյս այս է ։ Որ ես սիմաւոնի որդի ղազէզ մելիտոնս , հետ տիրացու աբրահամին օրթախ ե_ղայ ։ ու ղուշ ես գրի սերմայէ , ուղճ ղուշ տիրացու աբրահամին · որ խամու_թիս կէտիկն այլ իմ է ։ Այս ղավլոսս , որ երբ հասնինք ամ 'ի տարեգլուխն և հիսապ ընենք · ա͞ծ ինչ շահ տված որ լինի , կէսն իմ լինի` կէսն նորա ։

Ու թէ ա͞ծ չլինէ` զարար տալ ընեք նէ , նոյնպէս կէսն ես քաշեմ` կէսն նա ։

Ու թէ ո՞վ գիտէ զաավելու թէ լի_նինք , թէ բուզակ թէ բստակ , թէ պարտք թէ վերեսկյէ , երկուքիս հա_ւասար լինի ։ Եւ այս պայմանիս վե_րայ` տըվի զայս իմ ձեռագիրս 'ի ձեռս նորա · որ 'ի դիպօղ ժամու հաստատեսցէ զպայմանս և բաւ է ։

Գրեցաւ օրթախութեան թէմէսուկս` 'ի թվին հայոց 1201 ։ մայիսի տասն ։

(Եւ այլն որ զ-ան ։)

Պատճառ ձեռագրուես այս է ։ Որ ես գրիգորի որդի ոսկերիչ մահտեսի պետրոսս , որ տվեր էի ոսկերիչ մահ_տեսի յունանին 500 ղուշ փող , 201 օր



վա

վատէով։ Աւր 'ի նմանէ զիմ վաստակս պէղուստր և վճարվեցայ և զինմէ թս իպրս ըրի։ Որ այլ մէկ ըստակ մէկ փող առնելիք չունիմ 'ի նմա։ Իւ եատւ զայս իմ ձեռագիրս նմա'ի թվին 1202։ նոյեմ՝ բերի ուլթն։ որ 'ի պիտոյ ժամանակի վր
կայեսցէ ստացելոյս և բաւ է։

Թէպէտ ոչ էր հարկաւոր դնիլ օրինակ ձեռագրուէ ստա • զի այժմու ժամանակի առ և տրի մէջ եղօղքն՝ լաւապէս գի_
տէն զայս յոյժ առաւել քան զմեզ։
Բայց օնատան տա պուլըւնսուն զարարը եօղ ա • պէլքի պաղըսընա լազըմ օլուր։

Ունիմք ևս մ՝ 'ի մտի թէ մնասցեմք, շինել 'ի դիպող ժամու տետրակ մի ևս փոքրիկ այսպիսի • և հաւաքել 'ի նմա միասունս ոմանս բանից՝ պատկանաւորս բարևագրուէ։ Որ փոյթս ինչ քերեալ տաշեալ պատրաստեալ առ 'ի նիւթ շինու_ ածոյ։ Նախ մի դիւրելոյ փոքր ինչ զաշխատանս բարևագիր շարադրողաց և համեալ զինքենս համարողաց։ Իւ եկդ՝ առ'ի կրթիլ թերևս նորօք սակաւ ինչ 'ի
շարադրուիս և յիշել զմեզ յաղօթս։


Իւ

Սու իբրու համոնես իմն այնց տարարերո-
ցաց, եղաք սաստ սակաւ ինչ այսպիսիս
ըստ այբուբենիցն կարգի ։ Իր պէլէի
համձոյ լիցի ուժեք շարադրանիլի ։

Ազգիս հայկականոյ՝ տոհմիս արամեան
դիտաւորեա պատուէլ ։ Ազնուաբարոյ,
համեստակենցաղ և խոհեմազարդ ։

Ահաւասիկ եկն եհաս առ իս գիր քո
պատուական՝ շնորհալի մատանցդ ։ Բա-
նիւ գերազանց, որդեամբք անբաւղատա
հայր իմ պատուելի ։ Բարձրելոյն փառաց
ջատագով, և ա՛ծայնն տառիցն քննասէր ։
Բարեպաշտօն ազնուական, և հռչակա-
փառ տանուտէր . ՚ի բարեսէր ծնողէ բա-
րեմոյն որդի ։ Գերազանց առաքինուք
բարեշքեղեալ ։ Գիտնականին և գործ-
նականին համդիպեալ եօթնալեր շնոր-
հօք ։ Գրկախառն փարմամբ և ըղձալեր
համբուրիւ ։ Գայեակ և դաստիարակ
նորածնել մանկանց եկեղեցւոյ ։ Գրաւոտ
ա՛ծատուենկ . բարեխիտ տնկովք ուռ-
ճացեալ ։ Գրուատեալ ՚ի բազմաց և յար-
գեալ ՚ի յոլովից ։ Լուսալուսեան միուեն
կամակատար պաշտօնեայ ։ Լուսաւորեալ
սիրով և սրտատենչ կարօտիւ ։ Լուցէ և
մնասցէ ՚ըդ հայրութիւ երկարօրեայ ժա-
մա

մանաւանդ: Ո՜ ուրթատեսակ սաղարթիւք
և քաղցրահամ պտղովք լիացեալ ծառ կեն
դանաւորմամս: Ո՜ օրացեալ զօրութեամբ ա-
նեղին աջոյ. և լցեալ իմաստիւք ՚ի հոգ-
ւոյն շնորհաց: Ո՜ որ պահեսցէ տր ան-
սասան այժմ և յապագայն ժամանակաց:
Էախոհ իմաստութեան, առաքինի իմաստասէր:
Էական բանին տր՝ սպասաւոր աւետա-
րանին: Էլէգորին հոգևոր, ոսկեձա-
ձանչ բազմագունեան: Ընթերցասէր տի-
րացու, իմաստասէր և հոգեսէր. որ ըն-
րեալ ես և պարզեալ եղբայր իմ ազնիւ՝
եօթն պատիկ ՚ի հոգւոյ: Ընկալ սէր իմ
ծրիկ ինչ. ՚ի ծխուրամիտ ծրածրակես:
Ընդ վզով քո անկել որդեակ իմ սիրուն,
գեղազիր տիպ քո համբուրեմ կարօտով
զեղուն: Թանգարական ակն լուսադեղ
եղբայր իմ անգին մարգարիտ: Թաւա-
խիտ և պտղաւէտ անդաստան բարեմտին
և բերրահող: Թափուքս ՚ի բարեաց՝ ծա-
ռայս անպիտան: Ժառանգ արժանա-
ւոր՝ հայրապետական բարձր աթոռոյ
սրբոյն Գրիգորի: Ժառանգ սրբութե և
շառաւիղ օրհնութե: Ժառանգ հայրենա-
կան բարետոհմութե և բարեգործութե.
՚Ի բարեպաշտ և պարկեշտական ծնողաց
դաս

դատափարակեալ։ Իբրև զգիր յորձանի՛ անջնջելի կայ տպագրեալ սէր քո՛ի սրտիս։ ՚Ի դառնադառն վիժմանց ժանտաժուտ աղմկեալ ծփմանցն բերմանց։

Երդատուոր կարօտիւ իբր եղջերու ՚ի յաղբերս ջուրց։ Ուսալեր սիրտ քո վը կայէ ա՛լ իմ աչացս նշոյլ։ Ցեալ գերառատ պարգևօք հայրածառ անբաւտուեր լուսոյն։ Խաղեց և բննկորձից հմնագոյն ոլորակող։ Խանդակաթ կարօտիւ և կարի յոյժ բաղձանօք։ Խաչաբարձ խաչակիր մխանձանցդ բաղմութե՝ արի առաջնորդ։ Ոադունմն արփիափայլ, և ձառագայթ գերանշոյլ։ Ոաղկեալ հոգեկան և մարմնական բարեբոյս շառաւիղօք։ Ոայրաձաձանչ լուսով լուսե՝ հերբեչ ընտալին մխթուեց։ Կաթողին եռափափագ կարօտանօք։ Կարօտով քո խարշատիմ և սիրով քո տոչորիմ։ Կորովիմաստ և բարեբաստ մեծ եղբայր իմ սիրաղուն։ Հայրական քո գթութեանդ և երախտեացդ պարտական որդիս և ծառայս։ Հաստատ յառաջինութե իբրու արձան կարծրանկառոյց։ Հարցաբանեմ զքեզ զոր պիտութիս քո։ Զակորձից և հուհայից հրմնաձայն երաժշտող։ Զայնաւոր եր_

գող երաժիշտ հմտագունեղ ։ Ձայնեղ տիրացու՝ համեղ երգաբան եղբայր պատուական ։ Ղամպար լուսալիր՝ դէ_ րապայծառ նշողիւք ։ Ղեկավար իմաս_ տուն՝ հոգևոր հմտութե ։ Ղենջակա_ սփած խոնարհին՝ խոնարհ աշակերտ ։ Ճշմարիտ քահանայ ըստ կարգին մել_ քիսեդեկի ։ Ճոխացեալ գիտութե հո_ գևոր իմաստութե ։ Ճրագ լուսատու_ տանս հայաստանեայց ։ Մատակարար ճշ_ մարիտ՝ կարգաց եկեղեցւոյ ։ Մատու_ ցող բուրվառաւ անձին՝ զխայրիս մտաց ին 'ի հոտ անուշից ։ Մարգարիտ պայ_ ծառ , ակն մրփիկալեալ հայր իմ պատ_ ուական ։ Յարաղուարձ արմաւենի 'ի տանն այ տնկեալ 'ի գնացս հոգւոյն վը_ տակաց ։ Յես որոյ յուշ լիցի վսեմափառ քո անձինդ ։ Յուշ լիցի յես որոյ քոյին սրբութեդ ։ Ներ մրրկամծուխ ներկայիս և շատավըշտ կենցաղոյս ։ Նուաստա_ գոյն և յետնագոյն քո ծառայս ։

Ներքինս սենեակ լի է սիրով քո սէր իմ՝ Շառաւիղ երջանիկ երջանկապարմեան ։ Շիջելափառ նուաստ անպիտան ծա_ ռայս ։ Շնորհաշուք շողիւք շքեղեալ անձինդ ։ Ողջագուրեմ զոտիդ քո ցանկալի

ո՛վ իմ աչացս լոյս ։ Ողջախոհ տատրակ
զարդ անապատի հայր իմ պատուական ։
Ողջունեմ զքաղցր սիրելիդ իմ սիրա—
հարս քո գերիս ։ Պահեսցէ տէր զսիրելիդ
իմ միշտ ընկեր և զուարճ հոգւով ։
Պանծալի զարդ անապատի ծաղկեալ
ծերունւոյդ ։ Պատճառ գոյութեան յետ
այ՝ հօրդ իմոյ ծերունւոյ ։ Ո՜ երմաջերմ
ըղձիւ հարցանեմ զողջախութի քո ։ Ո՜ ուր
մանրածաւալ սրտիս պաշտելոյ ։ Ո՜ ընտրելի
անդաստան արդ՛ւոր հոգւոյն իմաստից ։
Ոսկեայ և անիմաստ քո յետին ծառայս ։
Ուսհաւոր ուղևոր երկնաւոր ուղւոյն ։
Ուեանն քաղցրաւնեաց · դեղթափ օշա—
րակ ։ Սիրելի անձկալի, սրտիս բաղձալի ։
Սիրով քո խարուկեալ՝ յաւէտ տոչորիմ ։
Սրբեալ՚ի մարմնի, զգուշել՚ի հոգի յարակ
մաքրութէ ։ Ս՜ աղեմնական սիրելւոյդ՝
վաղեմնատենչ կարօտիւ ։ Ս՜ անական հրա—
կօղ · անմարմնոցն հանդիսակից ։ Ս՜ արդ
անուշահոտ՚ի բուրաստանս եկեղեցւոյ ։
Տատրակ առաւօտեան · զարթուցիչ
ոգւոց թմրելոց համեղ քո ձայնիւդ ։
Տարատողի՛ տեղեաւ տարակից տրուպս ։
Տիպ քո տիրական պատկերիդ սեւեռեալ
կալ յար՚ի սրտիս ։ Բարուն իմաստուն ·



վար

վարդապետ ոգեշահ: Բայց մի 'ի մտացս
գրեթէ ոչ հեռանաս ով իմ աչաց լոյս:
Բայց ինչ թէ մոռանամ զքեզ ով եղ-
բայր իմ հոգեկից, դառնամ հառաչեմ.
որ ծուխ իմ կապուտակ առնէ զերեսս
ներքինս: Ցանկ ամրափակող սրբազան
հոգևոր տր՝ այգւոյս մերոյ հայկազնոյ:
Ցնծութիւն և բերկրութիւն զքեզ սիրողաց:
Ցօղ առաւօտեան իջեալ 'ի պարզոյ:
Ծաղկանց և բուսոց թարմաբերութիւն:
Փաղփիւնափայլ՝ փունջ ծաղկանց հա-
ւաքմանն: Փայլեալ գերերևակ տեսութ
'ի գմբեթայարկ խորանս եկեղեցւոյ:
Փոքր տամուկ փոքուս, զմեծիդ հար-
ցանեմ զորպիսութիւն: Ո՛ աջ հաւատոյ և
հոգելից իմաստասէր: Ո՛ եղ ամենայար
գելի անձինդ ազնուոյդ՝ որ գով պատկան
բաւեացի: Ո՛ ո ազնիւ պատուական տե-
սոյդ, և քաղցր և համեղ խօսոյդ՝ կարի
յոյժ կարօտ մնացի: Օծեալ աջոյդ
քում սրբոյ, և ներբանից և գարշապա-
րաց՝ համբոյր բաղձանաց ընծայեմ տր
իմ և հայր հոգևոր: Օրինակ բարեաց
բարոյից և նպատակ առաքինութեց հայր
իմ երջանիկ: Օրհնեալ սէր քո բնական
և բարոյական, միշտ պարտաւոր պահէ


զիս

զիս զքո անարժան անպիտան որդիս ։

Ո՛ղջ լեր ուրեմն երկար ժամանակօք և
անսասան կենօք ամէն ։

Արդ այսքանս բաւ լիցի այժմ. և ծանիր սիրելի իմ ։ Զի ոչ թէպէտ տաշեալ յղկեալ իցեն փայտքն շինուածոյն, բայց թէ փտուն իցէ շինօղն, ոչ կարելով ըստ տեղւոյն 'ի գործ ածել զնա, փտուն և շինուածն լինի ։ Այսպէս և աստ պարտ է գիտել զսոսա, թէ որն յոր տեղ պատկանի դնել կամ որ անձին. և այնպէս ածել 'ի գործ ։ Զի մի յղկեալն բարուք. լիցի անբարուք ։

Խրթնաբանութիւնք ոմանք ըստ շարադրութեան ։ Եւ իմաստք բարոյականաց ։ Մասն երկրորդ ոմանց շարադրականաց ։

I Որք ըզ զօրեղ կապոյն չծանեան ըզ ձայնութեն, են թէպէտ և ասեն 'ի բանեանցն հաշւլի, ոչ արտելեալ սակայն այլ իմնին 'ի կռվարբուն տեսակէ կենդանականն սեռի, որոց՝ փողոց.քն են կացանք ։ Որք բնաւին գոլով անհուպ վեր ասելոյս առ խուրեանցսն, զեկն օտար նոյնն տեսակի, անգութ հաջոտեալ արտասահմանեն ։

Նու նոյնք միափողցք՝ թուխն թէպէտ
համանգամ յարատևարելն զձայնուսան ,
բայց այն ոչ նշան այսր կարգոյ , այլ ներ֊
հակլին երև սաստկութե · զոր սակս օտար
եկեղոյն արտաշնչատէն ։ Որք մինչ անգոյ է
վն որոյն , իբրու խաղաղք և հաշտք քնա֊
փեն անձինկ ։ Իսկ յերևելն առաջին բեկատր
մի կերլն , աղմուկ խածատմանն իբրու ան֊
հաշտ վերդովմանց՝ ՚ի նոյնում իսկ վայր֊
կեան յերևս առ բերեն ։

2 Ով զօրագոյնն կողմանն՝ այլազան հասա
կաւ միակամ ժիր և արագ մշակքն
ձնգեքին՝ յաւէտ գան ՚ի գործ՝ քան թէ
կողմանն առընչակցին՝ զնոյնն ունօղք ըզ
կոչումն և զհասակ ։ Սոյպէս՝ ասեալքն
՚ի լաւ անդր ներաըսպի անտխա տըպողէն ,
այլք քան զայլսն ելով ՚ի նոյնում տըպի ,
գործունեայք ահա և յարդոյք ըստ ու֊
րում և իցէ մասին · շարժողէն կամ շար֊
ժելոյն · որ ուրուլ կայ ՚ի վաստակ ։

3 Որպէս համանուն յարգելէն ձնգիցն
վերնոյն , զվերմանցն մանուանց ունող
զկոչումն ։ Ոչ ըստ դըրոյն , եթէ ոչ ըղ
գունեանն ունիցի զորակ՝ յարգել ։ Այն
և ելն ներձնչմանն ըղձի , ոչ ըստ ձգմանն

 յեր

յերկար, թէ ոչ ըստ բոցոյն սաստկու_
թեն ընկալնանի:

4 Ա՛չ գայլոյն այլ՝ անհաղորդ նմին՝ կրէ
զհետեւումն կամովայնըէ: Ս_ւլոր
ինչ արտընձիւղինն, գիտէ զիւր յորմէն
կազմիլ նմա ՚ի համ կամ տըրհած: Ս_ուսկ
ոչ տասացեալ· զիւրանէ կորբանելին կա_
խիլսրընկէ:

5 Կ երնադոյնն եւամման շարժողին՝
եթէ զարտուղին մուցէ ընթացս
ըստ յիննեակէն ելելոյ, անիշխ եւ երկուքն
յիւրեանցանն դիմեն գնացս իբրու ան_
սանձ երիվարս: Յորոց որ հաջէնն,
թողու զընդդէմն օտարին, եւ որ ցան_
կայն՝ զցանկալին: ՚Ի ներհակն հակա_
միտեալ միջինն եւ ներքինն, Աւեր ապա
քաղաքն եղեալ, լքէ զվայն ՚ի ժողո_
վողէն 10·16:

6 Մ՝ինչ հակակայն հակակայլին արեւո_
րակ զօրութեն տիրել հզօրի իւրում
ներհակին: Նանտեալքն ՚ի սովոր անդոր_
ծութեն կապանս դադար շրջանին, ՚ի
տիպ յարութե բանական մարմնոց՝ մի ըղ_
կնի միոյ ՚ի դուրս անկանին: Սա նոյն եւ
պատկեր արարչին՝ նոյնապիսեալ ՚ի հոգ_

ւոյն ավմանց, յոգնազանս բերէ ՚ի բոյս՝
պատկերողին իւրոյ հաճելիս ։

7 Մի և ուժի համառակէ, պատկեր
նախնեաց արարչական պատճառին,
՚ի յամենուն ներելով, ըմբռնէ զընաւան ։
Մինչ զի արտեղեալ յումեքէ, ՚ի նախնեան
տայ չուելցանէութի ըստ ուղղափառ հա_
ւատոյ և այլոց ։ Միրեա զայն և պատկեր_
եաց նմա յարանունաբար ։ և յարեսցիս
յայն, որում նայն պատկերանայ ։

8 Մերկօղն մարմնոց գեր քան զաւա_
զակ՝ առ՚ի զնիւթն անմարբրութե
նոցին տարահերքելոչ կարէ ներգործել
զնոյն, եթէ ոչ փորն հրայէր՝ առաքեսցէ
զնուրն ուժգնութի յերակսն նորին որ
յոյտ է ։ Իւ է՛ մեզ սատուստ խմաստա_
սիրել զջերմն եռանդ՝ ՚ի ձեռն արտօսեաց
զհոգւոյնան բացամերժել զկուռենալն
յօտարուստ ։

9 Զորրդն տալը ՚ի ներքուստ՝ մեծաւ
զարմանալեաւ մնայ անշէջ ներ վէ
մի, թէ և կայցէ խմէջ իւրոյն երրորդի
բաղում ժամանակս ։ Ո՛րոյ յինքն ըն_
րեալ զնմանութի՝ բերօղն յանդիման
զանեբրևելիս, ներ յոլով նեղութեանց և

հալածանաց՝ իբրու միշտ անշէջ՝ մնալով
անկասելի , ոչ ինչ բնաւին յուսալեացն
բերէ զփրկութիւնս . շնչեցին հողմք և այլն ։

10 Ենքնամատոյցն բարձրելոյն՝ գոլ գե-
րագոյն քահանայ՝ յերդարանն թէ
պէտ հնչէ առն ոյ ըստ սրտին , սակայն
մեղս ախտացելոց առ այն լսելեօք՝ խոր
հին հեռաւոնչակ աննշան՝ մանաւանդ թէ
աննշար իսկ գալերևոցի ։ Ասաց ի զխո-
նարհն ոգի գոլ միայն զոհելի անկարօտ
գոյին՝ իբրու անկուր լամնմէ՝ ոչ ունե-
ցալք զփոյթ առ ՚ի յիշումն ածել որպէս
պարտն պահանջէ ։

11 Որք զամենայն զօ իւրեանցն պահան-
ջեն ձևոց՝ զերծեալքն յանէութեց,
ներհակեն կակղոյն կոչեցան կոչմամբն ;
Իսկ որք ըստ ամենոյն ինքեանք ձևանան,
հեղուկ այնոքիկ մեզ անուանեցան ։
Յորոց ՚ի սոցունց՝ զխոնարհացն անձանց
և զանխոնարհից ունիմք տեսանել կարի
մեծապէս . իբր ՚ի բնականէն բարոյա-
կանս ընձիւղեցուցեալ ։

12 Հոգի հրոյն ինքն հուրն , արտելեալ
՚ի մարմնոյ , ոչ շիջանի ՚ի ջրոյ . հա-
սեալ առ մայրն իւր պարզ և միացեալ

է նմա. իսկ է մարմնոյ առ կեցեալ շի-
ջուցանէ զնա ջուր: Լ յայս և որ մեր-
կանեցաւն 'ի մարմնոյ առ անկարգն ձըգ-
տուէ. ոգին բանական, միացեալ առ զու-
արըն մին, անյաղթելի այնուհետև պար-
հեցաւ 'ի ներհակին մարտից: Արք ոչ
ունին զօրել յոգին, եթէ ոչ 'ի ձեռն
հակմանցն տարրեղէնիս այսր հակեղի:

13 Երկուցն 'ի մէջ միութե[ան] շաղկապաւ-
շնչոյն՝ մի առի թէպէտ բառ մարդն
գոլոյ, երկու սակայն յաւաքելոյն ա-
սացաւ գոլ: Սատի երկու և կենացն
պահէր սահմանեաց կերպաւորն: Ապ ինքն
բանն մարմնով՝ առ որ կիրթն է 'ի փոր-
ձել՝ ածաբանեաց: Զոր պարզելով մե-
րազնեանն շնորհալւոյ, հացն զմարմին
ասէ բուծէ, և այլն:

14 Ոխորդ ալդեօք զյայտնխին ընտելին
ճանինք լսելով կամ տեսանելով:
զվերոյսն քան զայնս զննել առ ձկատող-
քրս: Որինչ ժանանայն թարուցեալ,
և արեւուն ոչ լուսել զաչս ոմանց:
Խոզուամ զդերազանց բանին զհողմոյն
վարդապետել. որոյ հասուքն՝ ոչ կարացին
բերանել անուանկնիցն լսելեաց:



Իա

15 Հաւատոյն ըստ լինելութեն, և անհա–
ւատոյն ըստ երբէն և ըստ կեր–
պին • հիմն մեծագոյն և յոյժ մեծա–
գոյն, թէ զխորհուրդ ոչ պաշտեալ անհեղ
սարսափմամբ յամ մեր վայրկենիս ՚ի դո–
ղանս արկանէ զմեզ. թէ երբ իցէ արդ–
եօք ժամանելն և զինչ եղանակաւն վերջ–
նոյ • որ մի միայն է անց՝ և ոչ ևս կրկ–
նելն առ ՚ի լինիլ բարւոքագէս յոր յայն
կէտ ոչ դառնեցաք •

16 Զոր փոքրիկ մի տղայեկ կարողանայ
՚ի գզել, զոլորումն առ ընկալեալ
և ընդ մի յեռեալ, հազար արք քաջագոյնք
անկարանան ՚ի խզել • Նոյն է իմն ընտա–
նեգոյն ապացոյց այնր զօրեղ կապոյն ՚ի
մեզ, որ զմինն առնէ հազար՝ անկասելի
՚ի փեռեկտեալ անթիւ բազմութեց •

17 Սիրելականն վս՟ այլոյ, է հարկաւո–
րագոյն քան զվս՟ իւրն՝ բաց ՚ի մի–
այն միայնոյ • Զի մին յինքեան ունելով
զախորժելին, առ քարշէ ՚ի յախորժակէ՝
թէ հարկաւոր լիցի թէ ոչ • Իսկ նախ–
կինն որ վասն այլոյ, թէ և յոյժ դառնա–
գոյն և անկրելի, կրէ սակայն ախորժա–
բար՝ եթէ հարկաւոր հետևեցելոյն •



Զոր

Որմէ ձգունիքն և դեղորայք՝ տան մեզ
զառողջն ապացոյց :

18 Սուր սկիզբն լուծականաց որ և
կարի լուծական. զարմանք մեծա
գոյն, որ առայ երկնչել հրաշալեաս այնր
հզօրի. յորմէ ընաւքն կամծրուանք կրեն
զկասկած: Իսկ իմաստ մեզ տալ, զայն
սուսերանն ուսանիլ զասացեալն՝ ուսա_
րուք: Յորմէ վերելքն մնոջ՝ կրեն ըղ
սարսափ կործանմանն: Եդից զաթոռն
իմ յամպս և այլն.

19 Որ ոք զզօրականն զօրագլխոյն՝ առ մա_
տուցեալ մի և ելթ նուագ հեռե_
ղացն յանուն նորին կենդանւոյ դառ_
նիցի, ոչ չվարձիլ 'ի նմանէ՝ ունիմք հա_
տատուն՝ 'ի նորին ճշմարիտ և անսահլի
աւետեացն մինչմանց:

20 Վերջինն 'ի վերուստ նխուլթից նխ_
լթայնոց՝ զմիմ զծանրուն երրոր_
դին զմորմին գխոողաց՝ յինքն պարտա_
կեալ, սրբե զերդն իւր յամենից այնպի
սեաց: Հալով մեզ առ իմաստ, զայլոցն
պորտակել զծանականն. որ զլաւարանն
պահելով զունողացն զլուլն ընանուր:

 Նոյն

21 Այն գոլ թէպէտ թուեցաւ բա-
նեանցս եղերումն ընդ ոչիցն այս-
պիսի, միայն սակայն նոյն է որ ինչ էն,
իսկ երկրորդի նախկինս ունի համդի-
պիլ ըստ ուղիղ մերոյս դիտման․ յեր-
կուս և այն եղերեալ անեզրականի։ Որ
ունիմք բաղդատել ՚ի ճշմարտից ճշմար-
տէն․ միայն համգչիլ ծանուցեալ գոլ
անվախճան, և երկրորդին՝ ընաւ նոյի-
նըն ներհակ։

22 Սակայն էութիւն որ ՚ի մերումս քա-
ռեկի՝ ոչ է առ նա իբրու նմնթա
կայուն անկար զոտ գոլ թարց յորում
էն։ Այլ՝ է տեսակ նորին ՚ի վեր քան
զայլ տեսակ․ ոչն գոլով շարաբառնալի
ընդ իւրն նիւթոյ․ այլ կայուն յաւիտ-
եան ներ միումն երկուց ներհակ կա-
ցութեց յորում և գոցի․ ըստ փայտին
յոր կողմ անկելոյ։ Այնումն սակայն նա-
խանիւթին՝ դարձեալ եկեղումն առ նա՝
տեւէ՛ ՚ի յաւիտենին։

23 Ոչ ուէ ինձ ոչ գոլ այլ կարեւոր հի-
ւցք՝ քան որ ախունդականն կոչի
զօրութի յեփոցոջն ՚ի կենդանուոջ։ Իբ-
րու ՚ի դատելոյ դատաւորացն առեալ
՚ի

'ի պարսկական բարբառոյ ։ Որ զինչ և
ընկալցի հիւթս առ եփարանն, գիտէ նա
տրոհել զնոյնսն . տալով բաժինս իւրաքան
չիւրոց պիտականացն ։ Նուշիկք այսմ հիւթոց_
գոյն դատաւոր նրբատես՝ հանճարեղ 'ի
բաժանել . գերազանցեալ որ անբանս է՝
զբանականօք ։ Շնորհ անհուն իմաստ
և ճկքնիմաստ ճկքնադոյն , որ առնէ հը
րաշակերտս և զարմանալիս՝ որոց ըղ
զարմանալն գիտիցեն ։

24 Որ ընթանին՝ յերիս որոշի . 'ի վեր ,
'ի վայր , 'ի հարթ ։ Մեղ աստի
ցուցակ . նախնիկնոյն՝ գնալ միշտ 'ի զօրութէ
'ի զօրութի 'ի լաւ անդր կոյս ։ Երկրոր_
դին՝ զմխուսին ունիլ զհեզութի . որ
եկն պաշտել ըստ իւրում ոչ ասիցն ։
Իսկ երրորդին՝ 'ի նոյնութե կալ հաստա_
տուն 'ի յաջող և յանյաջող . ոչ 'ի վեր 'ի
վայր դիմեալ 'ի ցնծանս և 'ի տխրանս ։

25 'Ի տեղւոջն ըղձածախի՝ ուր յամե_
նից բացակայիլ յոյլոցն՝ ունիմք
զպարան խակադոյն ըստ կենարարն ասից ,
այնց ամենից իբր առ խընձոյս առ փու_
թացմամբ , սորինն հետ՝ և տեղիաւ ան_
հետացել ։ Սուր միտ անդ՝ առ որ պարան


այս

պահանջէ, ուր ահաւո՞րն նմին՝ ունին ՚ի
մէջ զփառութիւն։ Ո՛չ է արդ ապա խոկա_
լի՝ վայման նըպատակ բիւրիցս բիւրից
չիցեմք եղկելիքս։

26 Լիւճն խոնարհեր բանեանցս սըր_
տի, թողեալ զդիջութիւն և զդիրն
մեծ, լինի կեցելիքան զատուցինն։ Ո՛րպ
քարշեալ մեր զհոգին ջերմաբանութեան
տարրին, փորագոյն քան որ յառաջն ունէր
լինոցիլ՝ գտանեմք զնոյն։ Եւ զինչ աս_
տի մեզ իմաստ. եթէ ոչ ձգամբք զինջե_
լոցն և նիհարեալոց՝ զօրանալ ոգւոցն՝ առ
՚ի զկերելոյն ընդունելոյ զշնորհ։

27 Թավանցականքն նիւթք ՟Ը գոյնոյն
կրմանս, ընկալեալ զերեսացս ենթա
կայն նախկին, ոչ լինին արդեօք այնր զգա_
լւոյ և զզացմանն նորին անցանել յեր_
եարս։ Իսա օրինակի առն շնորհալւոյ՝ ոչ
լինիլ խոչ արգելման իւրոյն շնորհի առ_
այլ, և առնինքն իսկ այլոյն։ Ընեելով զեր_
կոսին զբարութիւն, ՚ի առն յօժար, և
յառնուլն ընդունակ։ Ո՛չ իարդ ապա կո_
չիլ պատկեր կարիցեմք պատկերողին, մինչ
յարգադունին նուաղ զկերն ընտեսեմք
տալ, քան նորինն կարօտոյ։



Պահ

28 Պահպանութի դրանցն որ՚ի մեզ՝ յետ
երկիւղի սիրոյն սիրողին՝ ոչ այլ
ինչ կարէ գոլ անխափահագոյն, քան զ՚ի
բացեայն լինիլ ըստ բաւ միջոցի. Թէ֊
պէտ մեծագոյն ասի գոլ միւսն, սակայն
ոչ է տանելի այն նաև սակաւ ինչ բաղ֊
մոց. այլ յոյժ սակաւուց. վասն գոլոյն
յոյժ կասկածաւոր։ Ի սա հողմուտա
Թևոց՚ի կասկածաւորն ապահու յանկայ֊
ուն վայրի՝ հաղեաց ումանց ապրելոյ առ֊
նաւահանգիստ։

29 Երկուս մեծամեծս և յոյժ հարկա֊
ւորս՝ կենսատուս և հանդըստա֊
տուս՝ ՚ի միում կալեալ երկուցս կարգում
զձիրս, երկուս գոլ գոհունակս պարտա֊
ւորիմք առատողին։ Բայց մինչ զմին գը֊
տանիմք հատուցմնօք, երկուս դարձեալ
զնոյնս ընկալեալ, առնէ յարակ ըստ այսմ
պարտուցն որ՚ի մեզ պարտաւորութի։ Եւ
այսմ ջնար լրութ, զանկարութ միայն՝ ըզ
հատուցմանն խոստովանիլ զարիտուրս։

30 Օ՛ Անթակայն երեսաց զմիւսն սեղ՝
տոգորագործօղք՚ի պէս պէսս յայլս
նորին, զիմն յայնց՚ի նոցունց սեռակցացն
տեսակաց՝ ոչ կարենալ խոստովանին ՚ի


նոյնն

Նոյնն յեղել։ Օ՜ որ առարկչին ընդունէ՝ իւ-
րոյն պաշտեալ կարողութե՛ ՝ի յեղելն ՝ի
նոյն գշերս բանեանց կամ այլ, տալ մեզ
յայտնի իմացս, թէ ՝ի մէնջ անհնարինքն
դիւրինք են նմա և դիւրագունեղք։
Օ՜ որ գթածն գթածաց՝ առ թողուլն ըզ
մեղս մեր՝ խոստացաւ առնել. զերկուս
բերելով ՝ի մէջ զմեծամեծ անհնարինս՝
հնարիլ յամենակար արարչէն։ Եթէ իցեն
մեղք ձեր և այլն. Եսայի 1. 18.

31 Երկուքն կելոյն մերոյ՝ նոյն է մեզ
հաստատարակաց որ ըստ տնկոյն է և
զգայնոց։ Իսկ երրորդն որ ընդ բանիւ՝
ոմանցն ըստ կամացն է տուողին զնոյն,
և ոմանցն ըստ ներհակին. ըստ անձնիշ
խան կառավարին ընթացից յոր կոյս և
յօժարիցի։

32 Սախկինն ՝ի հնգուեն ՝ի բանեանսն,
թէպէտ յինքեանց զեւրն յատուկ
ունի զընտրութի, խնդրէ սակայն իբրու
թէութի զզգայլին երևուցիչ. թէ զան-
գործն մեր զմատանցն այ, թէ զմերն՝ իբ-
րու հայթհայթանգքս։ Յորմէ կարեմք օ-
րինակիլ ՝ի հաւատս մեր անբիծ, ոչ յի-
նել օգտակար ունողին իւրոյ թարց թէ-

ութեն գործողութե խորու մեռեալ. ոչ
ասաց որ ասացն յընդհանուրս ։

33 Պ․ լինէ մայրն չորացեալ վատեալ, փոր
ձեալ ջրով ժամանակ ինչ առ՝ի կրկին
հաստունիլ, ապա և ընդ հուր անցեալ, ղօ_
րագոյն և պարզագոյն ընծայէ՝ ոգի քան
զառաջինն։ Ր_նձն բանեղէն վատեալ ծր
գամբ և թոշկեալ, անցեալ ընդ ջուր երկ
րպքարշութե և ընդ հուրն բաբելական
մեծն հնոցի, զօրագոյն և պարզագոյն ըն_
ծայէ զոգին՝ տունողին զնոյն, քան զոր
բուն բնութեն էր՝ի բնութե թարց երկրոր_
դին որ շնորհինն է տունչութի ։

34 Ո՛չ ոչ տեսօղ թէպէտ ըստ կոյրն գո
յոյ նոյն սակայն գոլով ՄԷ որում բաց
բարձականն առ ասի անուն, ներքինն
զգգայլս ՝ի ներս տունողաց ՝ի պահարանն
լոյնագոյն համոյն զգալեաց՝ տասամբքն
գործունեայն մասամբք, հինգ մեծա_
գոյն։ Որպս խորու տեսօղ սրատես՝ ան_
վրէպ ՝ի տեղին ուր պիտոյն է դիպի շեշ
տակի ՝ի նոյն բոլորում ամբողջականի ։
Շնորհ անհունադօր բնութեն ․ որպս
զանաչեալս խորու աչեղս առնէ գոր_
ծունեայս ։ Յայտ ըստ իմաստնոյն առնե_

րով բանի, թէ ամ̃ն է կարող և գերա-
կարող. որում անլինելի և ոչ ինչ:

35 Իընդանոցն ունող պէտս 'ի նոյնում
իսկ բոլորում՝ շօշափմանցն գոլում
զգալի, թէ և այլոցն է անծանօ, ոչ սա-
կայն խուրոյցն բնաւ: Ո յսու պայծառ
օրինակաւ վարկանիմ զոլ առնլի՝ զոլն
անամփոփ ելմանն կերպ 'ի կերպէ նախ-
կինն կերպի՝ որ անգն քննողի դատողութե
առաւել քան զարփնոյն ամենասփիւռն
ճառագայթ. Ո՛ ի զնա ծածկէ գընտակն
երկրի, իսկ զսա յայնմանէ և ոչ բնաւ
թանձրութիք բոլորից գոյից, կամ անբաւ
հեռաւորութիք ծայրաքարշելով: Շնորհ
երանելի բնութե սահղծողին, զայս ակն
անձինք 'ի մեզ եդողի. առ 'ի պահել զբ
զխուրն պատկեր յօտար արկածից.

36 Իրևեալքն գնայուն յանընթաց գնաց
ման մերում 'ի կակղագոյնն հաստա
կի, գոլով ինքեանք անշարժք բնաւքն 'ի
տեղոյնցն, զմերոյսն երևոցեն զանթացից.
Տալով յոյսոնի մեզ իմացաս՝ թէ հա-
մայն արարքն մեր ինքեանցն յառաջ խա-
ղացմամբ՝ զմերս գուշակեն կենացն
սպառիլ.

37 Մ՝իջնորդն տուողի ունկան զներ_
տրամադրեալն բան, փոքրիկ ինչ
ելով մասն ամբողջականս բոլորի, զմե_
ծագոյնս և գունեղս առնէ ծնանի որ ա_
սէն յընդ համուրսն։ Իսկ և այնքան ունի
ինքնարձակութիւն, մինչ ոչ իմն սանձ
զօրագոյն կարէ առէ՝ թէ ընկըրկիցէ։
եթէ ոչ միայն իմաստն բանին՝ ըստ այնոցն
կարգաւորեալ։ Որոց սակաւք են յայժ՝
համդիպօղ գտեալք։

38 Ծնօտք քան զնմ։ Իբրև զաղամ
վտարօղ, մինչ զդադարն առնու,
զնոյն և ինքն ախտանայ։ այլ շարժունքն
և գնայունք նոյնն տեսակի ոչ այնպէս։
Մ՝եղկանիլոյ ցասմնականին, և ժիր գո_
լոյն նշանակ առ ՚ի զօտարն ՚ի բաց վա_
նելոյ։ Մի և եւլին եռանդնոտ, և աշ_
ուուկ ինչ շարժական։

39 Օ վերնական մասն առնելեաց ան_
՝բիծ մերոյս կրօնի՝ որով այլքն
կրեն զանձողութի, անհեծ անմըշան յա_
նէս վտարեալ, ներհակօքն եղեալ ուա_
ձնացեալք։ Նմին իսկ իրի զոր կնիք ըստ
վձռոյն և նշան յայտնի յի լուսաւոր շա_
ղին պարտն էայք ունիլ, անհուայ անհամ_


բոլ

բայր նմին առ դաւեալք , զրկօղ տիրողին
որ զներհակն նշանադրէ , դրոշմեցաք
զանձինս ծառայս ։

40 Որ ախտն ներ իմացմանն զերէ՝ է
նշան իրին , նոյն և ձայնն որ անու-
նըն՝ է նշան ախտին՝ և գիրն այսր ։ Եր-
կուք նախկինքն սոցին՝ են ընականք՝ զի
որում նոյնք են յինքեանս և յիմացման ·
և երկուքն վերջինք՝ պատահականք · ըստ
որում են այլք ՚ի յայլս ։ Իսկ մեծ իմաստ
՚ի նշանացս զ աստ , եղելոցս տալոյ զա-
նեղ արարչին զծանօթութի ։

41 Սեր յղացումն անըստ կարգի՝ որոյ
նոյնն է ըստ կերպինն և ըստ կար-
գին , առ դիզացմամբ ընդերացն օր ա-
ւուրց , զխայմանցն զանխլին՝ ակներև
յանդիմանն ամենից բացայայտ առ երև-
ոցէ ։ Ապա ցոյց իմն եղեալ կենսաւոր
բանին՝ թէ չէր ինչ ՚ի ծածուկ որ ոչ
յայտնեսցի յօրն սահմանեալ յանքնին
քննողէն՝ քննել զամ զոր ինչ արարաք ։

42 Որքան այժմուս ընակ գեր քան
զնախկինն է , գերքան զայս առ հա-
մեմատ՝ երրորդն լիցի , որոց անմահինն
ունելն հասանել մասին սրբոցն ժառան-


գու

գութե։ Որդ և բազումս գոլ՝ ՚ի փրկա
կանէն ունիմք լուեալ աւետեաց։ Սմ
վն ձգունքն սիրով՝ կրին ՚ի բանեանց։

43 Սարմին պրեցական սոնք և խիտ
բնութե՝ ոչ այնքանքարշէ զջերմն
պայծառ, որքան մուսն խուր առ՚ի նշ_
նանալ, եթէ ոչ մերկացեալ ՚ի նախկինցն
որակութեց՝ չերտականն ձեարիւք։ Նու
թէ զինչ աստի մեղ իմաստ. եթէ ոչ՝
ունիլ սիրտ բեկեալ. ՚ի ձեռն ձրնչելոյ
զինքնին ածումն զգօտին. պատարագ այ
հոգի խոնարհ և այլն։

44 Որք ու անձև նիւթոյ անկամանանն,
նորին ածեալ ասին զայլուստն գօ_
տին. զստոյգն ունելով զներհականն ան_
կեալ փայլական։ Որպէս որդի մարդոյ
ոչ եկն պաշտօն առնուլ. և թէ՝ մեծն
՚ի ձէնջ՝ եղիցի ամենեցուն ծառայ։

45 Ընանիւքն ջրակառք՝ թևս տարա_
ծեալ լայնագոյնս, յորդագունեղ
զտարածօղն տեսեալ, իբաց զծանրա_
գոյնան թօթափեալ, զաղաստն յուսան
գոլ յոխորտ վտանգէն։ Ոայն ՚ի կեն_
ցաղումն որք միտս ունին՝ բերեն կուռն
ջանիւ յինքեանս։ Իսա որուսբանն հո_

գի՝ խուռոցն ազգեաց հեռաւորաց, մի՛ ինչ բաւանալ 'ի ճանապարհի. ճանապարհ ըզ կենցաղո՛յս զեկուցանելով գնացս:

46. Օ հանուրցն միջնորդ՝ մարմնոյս պէտոյից՝ զանխրաւն ընկալօղ զհոշուռն երկրորդ, անհետ գլխովին առնել ընկալեալք զպատուէր. աւա՛ղ զի ներհակ բնաւին խնդրու ներ թաղեալք 'ի նոյն, ո՛չ զայլուստ այնքան՝ որքան զնոյնէս ամի խոկումն. Աւաղ որոյ անհեան գոլ պարտ՝ յաճախ. և ոյց գոլն հարկ՝ յանէս երևեալ: Նուազի ապա նախկինս եղկական կրկինս դարձեալ կրկնմամբ.

47. Ոերերակն այն յարկ. զաղտն մեր կեսոյն 'ի բաց վտարող. ո՛չ բնաւ զխուրն կարէ ներգործել առ իւք առարկայն, եթէ ոչ մերկ վնայայնց գտանիցէ, որք յիւրմէն արտաքոյ զայն պտղտակէին. Օ՛ք ամէրդ ապա ոչ մերկանեցեալ յարտաքնոցն ոգւոյ, սրբիլ յուսասցե և մաքրել յաղաւիցս նորին, որ 'ի մէնջ նախ՝ նոյնն պահանջի.

48. Օ զգացողէն ուղիղ գծին 'ի յօդս՝ զեկոյց կենացն աղբիւր գոլ լուսինչ բոլորի մարմնոյն: Յորոյ ելն հա-



րուստ՝

րուստ՝ և մտքմին ասաց յայտնի · իսկ
դիմեալ 'ի նուաղել, մթին և լուսելըն
եղեցի ։ Իւ զինչ իմաստ մեզ ասա ըղ
մտրմնոյ որ բացադոյն ամենեցուն է, ե_
թէ ոչ զներըրնոյն իմաստասիրել մեզ բա_
րերարեաց բնութե̃ բարըն ։

49 Ն կերլեացն պէտս ունօղք ծառաել
եալ՝ մինչ վաղվաղեալ հեստեն զա
տամամբք, խեղդղանս բերեալ նախադ_
րանն կեր առեն, վտանգեն զնա կամ
և մնասեն · զայն և խօսելեացն է տեսա_
նել · որք թարց ծամմանն խոհականըն
թէ արտաստըն 'ի շըթանցն, բարուսն
ծնանըն անձըն մնասս · բատ որուամ ասի_
ցեալ է, նախ խորհեաց և ապա խօսեաց ։

Ընդ Երեսալ օրէնաչայտ՝ Բարոյաչանս արթա
հանձանց · յաւելչէն և այսուհէջ ։

1 Ս մուրն 'ի ծայրագոյն կակղէն ըն_
կալեալ ամբագունութի՝ առ 'ի
քերել զկարծրագոյնսն, ոչ ծանիմ զի
մորդ զոր ոչն ունի՝ տայ ։ Ս՛պ երեքն 'ի
չորից կամ և չորքն իսկ՝ յորոց հշխին և
ծառայեն, պահեն զնոյնսն 'ի կայի, առ_
րով կեանս անկեանքըն ։



Օ ա

2 Օ ամենևքին ոչ ունելն իւրոյն յատ_
կութե՝ յաւելու իսկ այնմ, որ ունի զայն գերվերապէս՝ մաքրողականն ստորս հակ՝ սրանիւթն էակի զհակո_րակն կակղութե։ Եւ յայսմանէ մեզ իմաստել՝ զամենն գոլ կարօղ միայնոյն նախկին պատճառի. որում չիք ինչ ան_հնարին որ ՚ի մեզն անլինելեաց։

3 Օ արմանալի ինն և այս ասելիս. որ
մինչ էրն կենդանի, պէտս ունէր ըմպելոյ։ Ապա մահեալ և թողեալ զկե_րեն, բազմաց այժմ՝ թողեցեալն լինի տվօղ զըմպելին. հեծեալ յանբանս և բանականս. ոչ ունելով ինքն կարիս նախնւոյդ ասացելոյ զոր ինքն տայ այժմ։ եթէ ոչ միայն պարզել երբեմն ՚ի գետնի կամ կախիլ զօրմով ինչ առ ՚ի հանգչել պահս ինչ, ՚ի պահել զկեանն իւր անկեն_դան. զոր ունի ստպաւել այն, զոր ինքն մատուռնակէ։

4 Ջուր ընդ փակեալ դրամբ անցեալ
ընդ ջուր, շարախառնի ընդ նմա։ Իսկ ընդ արծաթ դրամբ մտեալ, չեջու_ցանի ՚ի նմանէ։ Պուռն տեսի զթուղթ նստեալ ՚ի վր կայծականց՝ աներկիւղ


յայ

յայրեցմանէ · ունելով ինքեան պահա_
պան զմահն հրոյ։ Ոչ փոյթ ինչ և հրոյն
կրեալ՝ թղթոյն պահպանութեն։

5 Հողն քան զօդ ծանրագոյն, քարշի
՚ի վեր ՚ի ձեռն նորին, առ ՚ի պա_
հել զոգին անկական։ Խողելով զհուրն
տեսակ, և ծնալով լինոցիլ դարձեալ նոյն։
Այն զի՝ յսկիզբն եղականք ձգին և
գնան · բայց ՚ի հոգւոյս բանականէ և
հոգեղինաց · որոց ոչ արարն՝ եւ ան_
մահութիւն։

6 Բան զլուսին այլ գործունեայն գի_
շերոյ երկուցեալ յիւր մահացուց
չէն, յուսայ ՚ի տկար մի այնքան առնա՝
որ դողայ մերձիլ նմա՝ զի մի խոկոյն մա_
հասցի։ Այդքան ներհակ ինքեան յորմէ
երկնչի, այնքան հզօր ներհակ ինքն իւ_
րոյն պահողի։

## Համառօտ Դաւանութիւն Ուղղափառ Քրիստոնէի։

Խոստովանիմ և հաւատամ · զա_
մենայն զերրորդութի։
Հայր և որդի և սբ հոգի · երեք ան_
ձինք և մի բնութի։

Հայր է ծնող, որդին ծնունդ. հոգին
բղխումն ՚ի նոյն հօրէ։
Հայր է ած՝ որդին ած. նոյնպէս և
սուրբ հոգին ած։
Բայց ոչ թէ են երեք ածք. այլ մի ած
երեք անձինքն։
Որպէս սակաւ մի օրինակ. ինքն արեգակն
է որպէս հայր։
Եւ լոյսն իւր որպէս որդին. և ջերմու-
թիւնն որպէս հոգին։
Մի արեգակն է երեքեանս. և ոչ երեք
արեգակունք։
Եւ այն երեք անձանցըն մին. որ է ծը
նունդ բան և որդին։
Էջ ՚ի յերկնից ՚ի յորովայն. սրբոյ կու-
սին մարիամու։
Եւ այս վասըն մեր փրկութեան. ՚ի դը
ժոխոցն ազատութեան։
Առ մարմին ՚ի սուրբ կուսէն. և մար-
դացաւ ածըն բան։
Այն որ ած էր յաւիտեան. եղև և
մարդ ճշմարտութեամբ։
Ած և մարդ մի երկոքին. ոչ շփոթ-
մամբ ըստ եւտիքին։
Պահեաց ըզ խուրսըն զերկոսին. ոչ բա-
ժանմամբ ըստ նեստորին։



Այն

Այն որ որդին էր ա̃յ · նոյնն էր որդին
մարիամու ։
Յետ իննամսեայ ժամանակին · ծնաւ
՚ի նոյն ՚ի կոյս մօրէն ։
Մնալով նոյն սուրբ կոյսն կոյս · յետ
ծննդեանն եւս նոյնպէս ։
Նա նոյն որդին մարիամու · ծնեալն
յառաջ քան զյաւիտեանս ։
Կոչեալ յս̃ ՚ի հրեշտակէն · որ է փրկ-
իչ և ազատիչ ։
Նոյն և քս̃ որ է օծեալ · անուանեցաւ
՚ի հրեշտակէն ։
Նոյն մի քն̃ ա̃ծ և մարդ · շրջեալ
ընդ մեզ ՚ի յաշխարհի ։
Յետ երեսուն ամաց ՚ի նոյն , աւուրն
եկեալ ՚ի յորդանան ։
Մկրտեցաւ ՚ի յովհաննէ · վկայե-
լով հայր և հոգին ։
Պահեալ զաւուրս քառասուն · յաղ-
թեաց այնու փորձող չարին ։
Այս բացեալ զբերան իւր ն̃ը · և քա-
րոզեալ զփրկութիւն ։
Ըմբռնեցաւ ՚ի հրէից · չարչարեցաւ
և խաչեցաւ ։
Մեռաւ մարմնովն և թաղեցաւ · և էջ
հոգւովն ՚ի խոր դժոխս ։


Ած

Միութիւնն ոչ 'ի հոգւոյն · ո՛չ 'ի
մարմնոյն կալով եղաց:
Կապեալ հոգւոցն որ 'ի դժոխս · քա_
րոզելով ըզ փրկութին:
Քակեաց եբարձնա ըզ դժոխս · և
ազատեաց զկերեալ հոգիսն:
Ապա յաւուրըն երրորդի · նովին մար_
մնովն և նոյն հոգւով:
Յարեաւ փրկիչն 'ի մեռելոց · իւր
ինքնիշխան կարողութեն:
Աշակերտացն երևելով · եցոյց ըստոյգ-
զիւր յարութին:
Եւ յետ աւուրցըն քառասուն · յեր_
կինս առ հայր համբառնալով:
Նստաւ յաջմէ իւր ծընողին · յորմէ
բընաւ չէր հեռացեալ:
Որև գալոց է նովին մարմնով · նոյն մի
քն ած և մարդ:
Դատել արդար դատաստանաւ · ըզկեն
դանիս և ըզ մեռեալս:
Ըզ պատուիրանսըն պահողաց · տալով
ըզ փառս արքայութե:
Եւ զայնոսիկ որք հեստեցին · առա_
քեսցէ 'ի հուրն անշէջ:
Այս է հաւատ քրիստոնէին · 'ի մի ածն
Երրորդութի:



Եւ

Եւ 'ի բանին անօրէնութ̅ի · այս է մեր
ո̅ր դաւանութ̅ի ։

Յետ այսորիկ և հաւատամք · 'ի մի մի
այն եկեղեցին ։

Որ է ընդդէմ քրիստոնէից · ո̅ր հաւա
քումն 'ի մի հաւատ ։

Յայսմիկ 'ի ո̅ր եկեղեցւոջ · է թողու-
թիւն մեղուցելոց ։

Բայց ո̅րց հաղորդութ̅ի · որ այս է
այն եկեղեցի ։

Զի որք 'ի մեղս են մնահացուս · յե-
կեղեցւոյ են արտաքոյ ։

Եւ երբ զղջան ապաշխարեն · խառ-
նին յորդիսն եկեղեցւոյ ։

Զի ոչ է այս եկեղեցի · անուանմբ և
եթ քրիստոնէից ։

Բայց այնոցիկ որք են հաղորդ · ո̅ր անդ-
րանկացն եկեղեցւոյ ։

Որ է վերինն երուսաղէմ · որ է մայր
մեր ամենեցուն ։

Միայն թէ սա է զինուորեալ · իսկ նա
ազատ անպատերազմ ։

Եւ ընդունեմք այսոր սրբոյ · եկեղեց
ւոյ զէօթըն խորհուրդս ։

Եւ թէ՝ առաւնց խոստովանման · չիք
թողութիւն մի ինչ մեղաց ։

Եւ ընդունիմք զոր ինչ ասէ · աւետարանըն քի̃ ·

Ըզ յարութիւն որդւոց մարդկան · և ըզ գործոց ըզհատուցումն ·

Եւ որպէս սբ̃ըն յակոբըոս · սբ̃ առաքեալըն քի̃ ·

Հաւատք ասէ՝ առանց գործոց · չէ կեն-դանի՝ այլ է մեռեալ ·

Ըստ ըսոյդ պարտիմք գիտել · թէ հաւատոյն՝ գործն է նըշան ·

Որպ̃ և ինքն ասէ 'ի նոյն · հոգեկեցոյց խուրում բանին ·

Եւ բանն մի այլ ասէ սոյն սուրբըս · յոյժ առաւել ըղձուշալի ·

Թէ որ բանիւ ոչ մեղանչէ · նա է ասէ մարդ կատարեալ ·

Որպ̃ և տր̃ն ասաց յառաջ · վասըն դա-տարկ բանին և այլ ·

Թէ բանիւ քո արդարասցիս · և բա-նիւ քո դատապարտիս ·

Սրբեան ապա պարտ է մեզ միշտ · սան-ձել ըզմեր լեզուն անկարգ ·

Զի մի՛ փոքու իմըն բանիւ · ըլինելոցիմք դատապարտեալ ·

Եւ որ առատն է 'ի շընորհս · և ոչ կամի թէ կորիցիմք ·

Տացէ մեզ կար և զօրութիւն • իմաստութի ըզգուշութի :

Ատել զամէն մասունս չարեաց • և հետևող լինիլ բարեաց ամէն :

Եւ Ք·Ի ընդ Հօր իւրում • և Սբ Հոգւոյն փառք յաւիտեանս՝ յաւիտենից ամէն :

Մի՛տ դիր գրոց զոր ինչ ասեմ՝ և խոկալով ՚ի միտ առ • զի վայրապար ոչ եմ գրեալ՝ նոքեն մինչև ՚ի մի տառ :

Որ ըզ խրատ ծերոց գիտնոց անարգէ՛ • նա քան զամէն անարգելիս անարգ է •

Որոյ ձեռքն ՚ի յողորմութիւնս առատացան • հընձէ նա զայն որպէս մշակ առատացան :

Այլ կատարեալ՝ և թշնամւոյն բարի կամի • և ոչ թէ սոսկ իւր սիրականն բարեկամի :

Որ զինքըն մեծ թըռիցէ , և զընկեր իւր խըռիցէ • մինչ սասի անդ չըռիցէ, երթայ.ք յինքեն լըռիցէ •

Աղեցի և այս իբրու իմն ծայրաճաշակ՝ արարելոցի գըքկան իմն ալապխևաց



յի

յիշէք ժամանակի։ Ով և խորթնականքն աստացեալք և նախկինքն։ Եթէ կամեսցի տէր · որոյ իւր է տալ զկամիլն և զառնելն մեզ զբարին։

Նմա փառք յաւիտեանս ամէն։

* * * * * * * * * * * * * * * * * * * * * *

## Հայր մերն յունարէն։

Պա՛դեր իմօ՛ն՝ օէնտիս ուրանի՛ս։ Այիասթի՛դօ դօ օ՛նօմա՛սու։ Ելթէ՛ դօ վասիլի՛ա՛սու։ Գէնիթի՛դօ դօ թէ՛լիմա՛սու, օս էն ուրանօ՛, գէ է՛բի դիգ եի՛ս։ Դօն ա՛րդօն իմօ՛ն՝ դօն էբիու՛սիօն՝ տօ՛ս իմի՛ն սի՛մէրօն։ Գէ ա՛ֆես իմի՛ն՝ դա օֆիլի՛մադա իմօ՛ն, օսգէ իմիս աֆիէմէ՛ն՝ դիս օֆիլէ՛դէս իմօ՛ն։ Գէ մի իսէնէնկիս իմա՛ս իս բիրասմօ՛ն։ Ալլա՛րի՛սէ իմա՛ս աբօ դու բօնիրու՛ ա՛մին։

## Հաւատամքն յունարէն։

Պիսդէ՛վօ իս է՛նա թէօ՛ն՝ բադէ՛րա բանդօգրա՛դօրա · բի յիդի՛ն ուրանու՛ գէ յիս, օրադօ՛նդէ բա՛նդօն՝ գէ աօրա՛դօն։ Գէ իս է՛նա գիրիօն իիսուն խրիսդօ՛ն · դօն իօն դու թէու՛՝ դօն մօնօյէնի՛։ Դօն էգդու բադրօ՛ս եէնիթէնդա՛

բրօբանտօն` դօն էօնօն ։ փօս էգ ֆօդօս ·
թէօն ալիթինօն · էգ թէու ալիթինու էե-
նիթէնտա` ու բիյիթէնտա ։ Օմօու-
սիօն դօ բադրի · տիու դա բանտա էյէ-
նէդօ ։ Դօնտի իմաս դուս անթրօ-
բուս` գէ տիադին իմէդէրան սօդի-
րիան` գադէլթօնտա էգ դօն ուրանօն,
գէ սարգօթէնտա էգ բնէվմադօս այի-
ու, գէ Մարիաս` դիս բարթէնու, գէ
էնանթրօբիսանդա ։ Ստավրօթէնտա
դէ իբէր իմօն` էբի Բօնտիու Բիլադու ։
Գէ բաթօնտա, գէ դաֆէնտա, գէ
անասդանտա դի դրիդի իմէրա գադա-
դաս գրաֆաս ։ Գէ անէլթօնտա իսդուս
ուրանուս, գէ գաթէզօմէնօն էգդէգ-
սիօն դու բադրօս ։ Գէ բալին էրխօ-
մէնօն մէդա տօքսիս` գրինէ զօնդաս
գէ նէգրուս · ուդիս վասիլիաս` ուգ էս-
դէ դէլօս ։ Գէ իսդօ բնէվմա` դօ այի-
օն` գօ գիրիօն` դօ զօօբիօն · դօ էգ-
դու բադրօս էգբօրէվօմէնօն ։ դօ սին-
բադրի գէ իօ` սիմբրօսգինումէնօն գէ
սինտօքսազօմէնօն · դօ լալիսան տիադօն
բրօֆիդօն ։ Իզմիան այիան գաթօլիգին
գէ աբօսդօլիգին էգ գլիսիան ։ Օմօ-
լօղօ էն վաբդիզմա իս աֆէսին ամար-

դիօն ։ Բրօզդօգօ անասդասին նէգրօն ·
գէ զօյին դու մէլօնդօս էօնօս ամին ։

Ողջոյն [illegible] Յունարէն ։

Թէօդօգէ բարթէնէ · Խէրէ գէ խարիդօմէնի Մարիա · օգիրիօս մէդա սու ։ Էվլօյիմէնի սի էն եինէքսի գէ էվլօյիմէնօս օգարբօս դիս գիլիասու ։ Օդի սօդիրա էդէգէս դօն փսիխօն իմօն ։

Նոյն Թարգմանեալն Հայերէն ։

Աստուածածին կոյս · ուրախ լեր բերկրեալ Մարիամ · Տէր ընդ քեզ ։ Օրհնեալ դու ՚ի կանայս · և օրհնեալ պտուղն որովայնի քո ։ Զի Փրկիչ ծնար անձանց մերոց ։

Երդդլի անունն է սոա · Հաստեալ փորձանքն է գատա · Ծուռ մի նայիր օտարին · Էյրի պագմայնըդ եաստա ։
Ծուխ քեօմիւր՝ մուր գարա · ցաւն է աղըր՝ խոց եարա · կըտօր փարչա կամ փարա · սանարէ ասելն՝ է սարամ ։
Յօշաաելն է՝ դադըլամադ · պահելն ա-

սի՝ սագլամագ . տուգանելն է՝ հագլա-
մագ . սրբել մաքրել՝ փաքլամագ ։
Որոնելն է՝ եօգլամագ . հոտոտալն է՝
գօգլամագ . նետով զարնել՝ օգլամագ .
կըշտացընել՝ թօգլամագ ։
Լալոյն տանն՝ ադլամագ . և խաբելոյն
աադլամագ . իւղելն տալ՝ եադլամագ .
ձայնըն գետոյ՝ չագլամագ ։
Ծառ պատուաստել՝ աշլամաք . ըսկսա-
նիլ՝ պաշլամագ . խաշելն տալ՝ հաշլամագ .
և քարկոծել՝ թաշլամագ ։
Շուրջ հայիլն է՝ պագընմագ . զգուշա-
նալ՝ սագընմագ . սարքիլ սարդէլ՝ թագըն-
մագ . խլաբոցիլ՝ չագընմագ ։
Բաժանելն է այըրմագ . հոգալն տալ
գայըրմագ . իբրև տալ թէ ով գետ .
է տանձկէվար այ ըրմագ ։
Յամեք տեղըն է գուրատ . բընակարանն
է տուրագ . մանգաղ ձմեռն է օրագ .
անձաւանխութն է չօրագ ։
Բատահական է եարամազ . չի փընտըռուէր
արամազ . չի սանտրերն է տարամազ . ան-
պէտ՝ լիշէ եարամազ ։
Նիհար զապուն՝ գէր սէմիզ . մաքուրն
է փաք և թէմիզ . որ առաւել է մա-
քուր, տանն նըման թէրթէմիզ ։

Սրունակ սրբայ՝ ուս օմուզ · բարակ խո_
սիլն է լուսմուզ · խոզն է խնձիր արմե_
րէն · թուրքի բառոմն է տօմուզ ։
Գըղըրդիլն է ղէլղէլէ · վողողումն է
վէլվէլէ · հանդիպեցաւ ուխ ուխի ,
ըռաստ կելտի սէլ սէլէ ։
Սրպտակ դեղոյն է եաղը · ծալուն դա_
նակն է չադը · ցըքին ասի ըօադը · և
մընացուածն է պադը ։
Հեղուրդն ասի ադընթը · փլր իղակն է
երքընթը · ձմլուքն ասի սըքընթը · մէջ
կրուածին ըրքընթը ։
Գողլաչէնն է գոմաձը · դատաւխաղն է
տավաձը · պատ ծեփօղն է սըվաձը ·
օրհնէք ըրէօղ տուվաձը ։
Ցըրմեցաւն է տաղըլտը · ըրխալեցաւ
եաղըլտը · գետոց ջըրոց հանդարտիկ,
ձայնին ասեն չաղըլտը ։
Գնաւուն ասի էյալէթ · ու աշօքն է
խեյալէթ · որդարութի էտալէթ · չար_
գործիքն է պէտ ալէթ ։
Խաղաղութի սէլամէթ · նշան ցուցիլ
էլամէթ · կարկատեն է մէրամէթ · ըր_
քանչելիք քերամէթ ։
Գանձն է խազնա ինչքն է մալ · օշար
պէքմէզ մեղըր պալ · որպխառին ասի


հալ ·

հալ. ձիւյն լուսնեակն ասի նալ։
Կայծն ասի քեօզ՝ մոխիր քիւլ. Նարդոս
ծաղիկն է սիւմպիւլ. երջնակ Թռչունն
է պիլպիւլ. և իւր սիրուն վարդն է կիւլ։
Դրամ տխրեմ՝ դանկն է տենկ. մար-
մնոյ սեւուկ նիշն է պէնկ. ներկն է պօյա՝
դոյնըն րէնկ. պատերազմն ասեն ճէնկ։
Ձորն է տէրէ՝ լեռն է տաղ. համառա հե-
ծանող՝ առողջ սաղ. ոսկր քէմիք՝ իւղն է
եաղ. այգի և կապ՝ ասի պաղ։
Գ.ըլուխն է պաշ՝ Թագն է Թաճ. կուշտն
ասի Թօգ՝ Նօթի աճ. մաքսըն բեռանց
կոչի պաճ. արջասպ նէրկոցն ասի զաճ.
Դեղըն է մէլհէմ կ իլաճ. գիրկն է գու-
ճաղ կամ գուլաճ. օղլան ուշաղ կամ
չօճուղ. վանցի հայերն ասեն լաճ։
Բարև տալն ասի սէլամ. խօսք և զը-
րոյցն է քէլամ. զրպարտութի եղէլոյս,
խնացընելն է իլամ։
Կայծակն ասի եըլտըրըմ. քարշարն ասի
գալտըրըմ. սըրունքս է լախտա պաղ
տուեր. փէք խուշխուշ պաշըրըմ։
Թուէլն համրէ ասի սայ. փոքրիկ գե-
տոյն ասեն չայ. երգափողեկն՝ ասի նայ.
և փոթորիկ հողմն է գայ։
Ազգն է միլլէթ նաև սօյ. մէծամլեան է


պեօն

պետն ու թօյ · երկայն ուղուն՝ հաստակ
պղյ · կեր կշտացիր՝ եկ՛ տէ տօյ ։

Հացն է էքմէք՝ փարսի նան · արիւնն է գան՝ հոգին ձան · մէջն է օրթա՝ կողմն է եան · և իչևանն ասի խան ։

Ոտն և մերձըն է եադըն · զօրաց փուլթալըն է ադըն · սարվէ ասելն է թաղըն · ըղդուշացիրն է սադըն ։

Բարակ ինձէ՝ հաստ գալըն · փայտ ոտնամանն է նալըն · մերկ ու բոկիկն է եալըն · փարախը ասելն է սալըն ։

Յոժ առաւելն է աշկըն · զեղուն հեղունն է տաշկըն · խելացընորն է շաշկըն · և թաց պատենքըն է եաշ դըն ։

Հաւատարիմն է էմին · գետին երկիր է զեմին · հիմիկ ասելն է տեմին · փարսի դարանն է քեմին ։

Եկօս նստատ՝ ցած էքին · անակնկալ երկիրն է էկին · արդեօք ամուր քարշեցէք · օղլանձըրդար մէք չէքին ։

Օր և արեւն ասի կիւն · այսօր ըսելն է պու կիւն · վաղն է եարըն՝ էրէկ տիւն · բարձրաձայնելն ասի իւն ։

Կապած թէլի՝ գըլուխ պաշ · թարթիչ քիրփիք՝ ունքն է գաշ · արտուրն է աշ՝ քարըն է թաշ · թաց և արցունքն՝ ասի եաշ ։



ու

Ո ուտիկ չհայտն ուռեց շէշ · գործիք
էնկէզ գործն է իշ · ոսկըր քէմիք՝ ակ_
ռա տիշ · Նաև չամիչուըն ասի շէշ ·
Գ_ինով հարբածն է սարհօշ · վարդէ ասէն
ասեն գօշ · դասն է սըրտ՝ դատարկ
պօշ · աղէկ ըռխիտ՝ էյի խօշ ·
Գ_ըլխոյ մազն և գէսն է սաչ · աչքըր
բացն է կեօզիւն աչ · էտէփիւիզն է ան_
ամաչ · հեռու փախիր ուղակ գաչ ·
Գ_ըրված քիւթիւպ՝ գիրք քիթապ · ա_
մօթխածեըն է հիճապ · քօղն է տուվագ
և նիգապ · Թըռչաշանեըն է հիսապ ·
Ե_ըեսակուխն ասի եուրտ · չատ զըրացն
է պօշ աւուրտ · տաքն է սըճագ պաղն է
ցուրտ · գայլըն և որդն ասին գուրտ ·
Ս_դըն հանաց է խաթար · նետ կու_
ձըգէ օք ախթար · եղ կու ծախէ՝ եաղ
սաթար · շուտ կու մեռնի թէր չաթար ·
Ե_րթ տղաչէ վար եարխար · և լացն վար_
տիքն է շաղվար · ոչ մեղու ոչ մեղըր կայ ·
նէ աւր վար նէ պալ վար ·
Ո_րսորդ աւճըր որսն է աւ · աւէթ քըր
թեխթ ասի գաւ · երկաթ եռանդն ասի
թաւ · հրաչակ լինիլն ասի չաւ ·
Ս_ղալն ասի խուկխուլթմէք · հովուէխն հով_
ուէըն է կխուլթմէք · քայլեցընել խուրխուլթ
մէք ·

մեք · ՚ի քարշ տանիլ սիւրիւթմեք ։
Յարդարիլն է տիւզէնմեք · այլ և ասի պէզէնմեք · Լաւ շինելն է եօզէնմեք ·
շուտով իջնուլ թեզ էնմեք ։
Այրիլն է կեօյիւնմեք · Մազ հիւսվիլն է եօրիւնմեք · քսվիլն ասի սիւրիւն-
մեք · ըսփածանիլ պիւրիւնմեք ։
Զրգելն ասի տիւշիւրմեք · խըրխըն-ձելն է իւշիւրմեք · ժողովելն է տեօ-
շիւրմեք · և եփելն է պիշիւրմեք ։
Մարելն ասի սեօնտիւրմեք · դարձըն-նելն է տեօնտիւրմեք · ղրկել յըղէլ և կաշի , ծալելն ասի կեօն՝ տիւրմեք ։

՚Ի Հետասշէ՝ սոյն գըրոյս ,
յօսէտըն և այս՝ գայ ՚ի լոյս ։

Տանել տալն է ալտըրմագ · դողացընել չալտըրմագ · բառնալն ասի գալտըրմագ ·
մըղելն ՚ի ջուր՝ տալտըրմագ ։
Զիդ իբայցն է ափ աչըգ · փախուկ ասելն է գաչըգ · սա տուներս մի՛ նըստիր էլ ·
շու եկան օլթուրմա չըգ ։
Կանգուր սալն է գըլըճըգ · սարեկ հաւն է սըղըրճըգ · մախաղն ասի տա-
գարճըգ · և շուտիկն է գապարճըգ ։
Փորագրիլն է օյուլմագ · կեղևիլն է սօյուլ-


մագ

մանդ կուշտ մի յագել տօյուլմանդ · խմոր
հետևել գօյուլմանդ ։

Բաւտուր քոռանթ փորատա · խօսկին
կարծր խփելատա · գիշեր հաւռուկ մաշ
կալթև · կեծե գուշու եարատա ։

Գալարին է՝ պուռուշման · դեմդեմի
կալ՝ տուրուշման · և հարկանիլ՝ ՚ի մի-
մեանց · կարե տախլ՝ վուրուշման ։

Խարկոց տապկոց է թաւա · դատախա-
զխին է տաւա · եւայն և օղն է հաւա ·
գընա ՚ի յորս՝ կիթ աւա ։

Շնունն է ատ՝ փարփինամ · և ապիկին
չիշէ ձամ · փիձոյ փայտին ծառն է չամ ·
դամապկային ասեն շամ ։

Սոլորցընել շաշըման · հեղուլն ասի
տաշըման · ըգվըրայուն անցընել · ելլու-
ասել աշըման ։

Գետըն է սեմիզ ու եաղլը · կապանաւորն
է պաղլը · լեռնաբընակն է տաղլը · այլև
խարամն ալ տաղլը ·

Սափոր տեսթի՝ դըյլ գօվա · դուր տեղ
տխուղ եեր՝ դաշտ օվա · թռչունն է գուշ՝
բոյն իւվա · օրհնէքն ալգըշ և տուվա ։

Խելօքնալն է ուսլանման · կըռդընիլն է
եասլանման · դըշխին ասի ըշլանման ·
և ժանկոտիլ փասլանման ·

Օձիկ ցաւն է եղլանձըդ • կշտաքըսային
է խանձըդ • յարդիկ աւել սամանձըդ •
սոխիկ աւել սօղոնձըդ ։

Պարեհ արքայն՝ է տարա • փնտռէ ա-
սեղն՝ է արա • ով երթիցէ քիմ վարա •
անբան անգործ՝ ավարա ։

Զըօսանքն է թամաշա • դանդ անաւանդ-
նավաշա • մեղմին ոչ է պխտոյ սանձ •
կէմ կերէ քմէգ նավաշա ։

Այսելեին է եռդշմնդ • հրմշտըկցիլ դա-
դըշմնդ • նայելակցիլ իրերաց , պիր պի-
րինէ պադըշմնդ ։

Աւածուրիկն է աղմն • գըրածոյ գիրն
է եաղմն • փետատ փայտատ՝ մի՛ փորէր ,
այս երեքս ալ է դաղմն ։

Ուգուկխայն է թօղաթ • նետ ձգէ ասեղն
է օդ աթ • քիչ մի՛ նետեր շատ նետէ •
ասխ ալ աթմն չօդ աթ ։

Ըկօս նաստաս որ է հերկ • ձմերայ չպլաք
լերկ ու մերկ • է շիլ պօյա կանաչ ներկ •
պուէ կխէն այսօր նաև սերկ ։

Բանեցընել գուլլանմնդ • որբ և աղքա-
տուլլանմնդ • գըձադդածիլ չուլլանմնդ •
թեփսուարիլ փուլլանմնդ ։

Հեռաքարշիկն է դանձա • և կերակուրն
է մանձա • ծուղակ թռչնոց դափանձա •



քա

քաջաց յաղթելն է զանձն։
Գօտուն ասեն գուրսպաղը · կրծոյն է
թօսպաղը · ծամակալն է սաչ պաղը · բայց
ըղ պաշքէն աչ պաղը։
Աղի թուզը՝ աղն է թուզ · սուխ
տօնմաղ՝ սուն է պուզ · Փարսի բառով
օրն է րուզ · և տարեմուտն է նէվրուզ։
Պալար թազէ դամ՞ է գալթ · կշռէ
ասեն՝ ասի թարթ · խօսք մի եղեալ հաս
տատուն · որ անդարձն է ասի շարթ։
Հեշտանալն է հազլանմաք · ծանրաշար-
ժիլ նազլանմաք · զենքըն որդէօ տալըն
ցայց, ասի սահլթէ գազլանմաք։
Ածելին է ուստուրա · մազխփըն է ձիմ-
պըխթըրա · վէրըն ծայր առագաստըն ·
ասեր են մայխթըրա։
Կըթանն ասի սաղըլը · թունաւորն է
աղըլը:չի գըտան ըզփարախըզըն · պուլըմ-
տըլար աղըլը։
Հաւատն է իման · կարծիքըն է կիւման ·
մժուժն է տուման · ժամանակ զաման։
Աղեղն է քէման · վարտիքըն է թուման ·
չար ու վատ եաման · և յարդն է սաման։
Շինօղն է եափան · պարսեան է սափան ·
փակօղն է գափան · պաշտօղն է թափան։
Հասօղն է էրէն · լարօղն է կէրէն · քա-

ղօղն է տէրէն · ձողնաւլն սէրէն ։
Խալթունն է հալթուն · ամբողջն է պիւ-
թիւն · ծուխ և մուխ թիւթիւն · փար
սի սիւն սիլթուն ։
Շաքարն է շէքէր · կու քարշէ չէքէր ·
կու ցանէ էքէր · կու ցաթկէ սէքէր ։
Գրտակ հաց սօմուն · կապիկն է մայմուն ·
փարսի ներս տէրուն · և դուրսն է պի-
րուն ։ Չորթանն ասի քէշ · դրօշակն
ասի փէշ · ընկերն ասի էշ · վէցն է
փարսի շէշ ։
Աւերն է խարապ · սև մարդն է արապ ·
հողն ասի թիւրապ · և չան խորվէրապ ։
Ժանկըն ասի վասս · ընկաւտուակ թաս ·
աղէկն ասի խաս · սուգ թասա և եաս ։
Ճիւսին գտակ ֆէս · կըտրէ ասէլ քէս ·
ձայնին ասեն սէս · սէր ձըգել հէվէս ։
Սիրականն է եար · օտարքն է աղեար · շատ
գեառն է այեար · ոչ ընաւ տէյեար ։
Վաստակն ասի քեար · ագահ թամահ
քեար · անկըն ի անգործ · անհանի պէքեար ։
Լայիըն է նաղար · գին կտրել պազար ·
կու գրէ եազար · կու փորէ գազար ։
Սերտելն է էզպէր · խորանն է մէմպէր ·
լուչակն է չէմպէր · գերծիչն է պէրպէր ։
Խեղօշն է չինար · դինարն է տինար ,


Նուռ

Նուռն է նարէնար · եղը ու գիրկ քէնար ։
Օշինդն է պարտապար · որ է հաւասար ·
համբարն է ամպար · դալ աղէք պուտպար ։
Սայրըն ասի էր · լարէ՛ ասել կէ՛ր · գըլ-
լուխ փարսի սէր · և դուռն ասի տէր ։
Նետըն ֆարսի թիր · կաթն և ա-
ռիւծ շիր · վա՛ր եէրինէ՛ գօ · գընա
տեղը դի՛ր ։
Հմուտն է մահիր · յայտնին է զահիր ·
սըրբօղ լուացօղ , տըրպէվար դահիր ։
Քաղաքն է շէհիր · դեղ մահու զէհիր ·
գերին է էսիր · պակասն է քէսիր ։
Մին և մէկ է պիր · ծեր իխտիէար փիր ·
էկ՛ի ներս մըտի՛ր · կէ՛լ իչէրի կիր ։
Բանակն է օրտու · լարեցն է գուրտու ·
հարցուցն է սօրտու · զարկաւն է վուր-
տու ։ Եղաւն է օլտու · լցաւն է տօլտու ·
փետտեցն է եօլտու · թոռմեցաւ սօլտու ։
Փողն ասի պօռու · անտառն է գօռու ·
ինչէն կու նեղի , նէտէն տիր զօռու ։
Փողպանն է եասագա · ջոկիրն է սագա · ե-
րազ տիւշ՝ վագա · հանաք խօսք շագա ·
Գիւղ և գեղ է քէօյ · երկինքն ասի
կէօյ · ծեծէ՛ ասել տէ՛օյ · գովէ՛ ասել էօ՛յ ։
Աղտորն է սօմագ · դնելն է գօմագ · կօպ-
պալըն է չօմագ · սև մուղ է թօմագ ։

 Սյոն

Այտն ասի եանաղ․ պնակն է չանաղ․
հիւրն է միսաֆիր, ասի և գօնաղ ։
Գիտունն է ահիլ․ տըգէտն է ճահիլ․
սիւրթմէք է սահիլ․ կամկարն է քեահիլ ։
Զէնքն ասի սիլահ ․ աղվորն է մէլահ․
Թաղկեղէն Թաղնայ, գըտակն է քիւլահ ։
Սոխն ասի սօղան ․ ծընածնն է տօղան ․
խեղդօղն է պօղան․ կաղունծն է չօղան ։
Աստղըն է եըլտըզ․ ոսկեջուր եալտըզ․
քենին է պալտըզ․ մախաթ ջուվալտըզ ։
Թացութն է նէմ․ փուտ ու վատթարքէմ․
սանձ և լկամկէմ․ Փարսի բերան ֆէմ ։
Դեղքածն է եարըղ ․ Նիհարն է արըղ ․
տըրեխն է չարըղ ․ փաթթոցն է սարըղ ։
Սաւն ասի պուտագ ․ շըթունքն է տու_
տագ ․ մանրուտէք տատապագ ․ խոստումն
է ատագ ։
Ցամաքն է գուրագ ․ կացարան տուրագ ․
մանգաղն է օրագ ․ կաղունծն է չօրագ ։
Թոշակն է ազըգ ․ յոյժ հըմուտ հազըգ ․
խեղճ ու մեղք եազըգ ․ և ցիցն է գազըգ ։
Աւազն ասի գում ․ և մոմն ասի մում ․
գիմերն է հիւճում ․ և պարկն է թուլում ։
Պոչունն է օլուգ ․ թոռմածն է սօլուգ ․
փեթածն է եօլուգ ․ լաց գալն է տօլուգ ։
Զի ցաներ էքմէղ ․ չի քաշեր չէքմէղ ․


եփ

եփ անուշ ուէշէլ. օշարակ պէքմէզ ։
Կնտելն է գրփմագ. ցայելն է չրփմագ.
և աչնարկելոյն՝ տանն կեօզ գրփմագ ։
Ոտունկըն տափ տիղ. շաւիղն տափ իղ.
Հերունն տափ պիղ. շարէ տանել տիղ.
Յանն տափ տօքուզ. երեսունն օթուզ. կուռ
գանիչ թօփուզ. ուսն տափ օմուզ ։
Ժամն է ուձուզ. մէկ տետր է պիր
ձիւզ. ազղն գող մօգող. է էձիւզմէձիւզ ։
Սահամն է գալգն. տիղմուցելս պալգան
կանգնօղն է գալգան. փարտըլէ չալգան ։
Չըշունն է գունատուզ. ցերեկըն կիւն
տիւղ. գուր և հենր՝ տեղին է տիւմիւզ ։
Շղերն է տալեան. ձըկնորսակ տալեան.
տոպկի ծըխխըմուկ, նարկիլէ գալեան ։
Թըլթին տանն տութ. բունէ տանել դութ.
մոռցին է ունութ. կուռք և բագին փութ
Սըրկինքն է ֆէլէք. հրեշտակն է մէլէք.
խարբալն է էլէք. կատուղն է քէլէք ։
Փոշին տափ թօզ. մոխրագոյնն է պօզ.
ընկոյզ ձէվիզ գօզ. որձակն է խօրոզ ։
Պուրակն է տէսթէ. կապածն պէսթէ.
կամկար աշէսթէ. նորհաս նէվրէսթէ ։
Բերդն տափ գալէ. ողքաձայն նալէ.
կակաչն է լալէ. ցօղիկն է ժալէ ։
Ոփծ ըստին մէմէ. խնլագար սէմէ.

պայժմըս գոհունք, չենք ժիւր պուտեմէ:
Ռնամուկս նամէ․ մէկ հատ պիր թանէ․
խենթն ասի ակլը, փարսի ակլամէ։
Ոսկեգործ է կերպէ․ դարբինն է երկէ․ ձմուղ
րանն է քերպէ․ կաշեկուժ ակպէ։
Մոխիրն է չայը․ ծովեզերքն եալը․ խամ
լըն է հայը․ որ երրորդ սալը,
Մեղրատուր զէրաէ․ վարագույր վէր
ակէ․ համդխպաւ ցաւի․ օղրատը ակրակէ։
Ռնուշն է աաթլը․ ձիաւոր աթլը․ դատն
երեսն ասի, էքշի սուրաթլը։
Ռոունակեր գանը․ հոգևոր ձանը․
անոուանի մեծ մարդ, է՛ ատլը սանը։
Ոսկեղեն ասի չիլթ․ շունն է քեօփէք իլթ․
ոջիլն ասի պիթ․ շուա գընա թէզ կիթ։
Պուսանն է չէնկէ․ խալատն է պէնկի․
գոյնն աւերած է․ պօզուք աուր ընկի։
Քայլուկն է իւրիւկ․ փտտածն է չիւ
րիւկ․ քաշքըշած սիւրիւկ․ պարտակն է
պիւրիւկ, Ռժմին է շինափ․ հեծածն
է պինափ․ ձողինն է հինափ․ ետինք էքինափ։
Մոլթին է ակերի․ քաղշան կէլպերի․
յետ ատաջ ասել, կէրի իլէրի։
Առդըն ասի կիւլ․ երգնակն է պիւլ
պիւլ․ Նռնոջ ար սիւմպիւլ թոփչ ձի ախիւլ
ախիւլ: Հոռոմն է ուռում․ աւեցմուր գու
ի․ ռում։

ուամ․ կոս վըլամ խուրում․ գարէջ ուչուրում

Իրք ասելըն է շէյ ․ պարոնն ասի պէյ ․
հագիր ասել կէյ ․ և գըրաւն է փէյ ․
Սրբելըն է սիլմէք ․ լէսպելըն է տիլմէք ․
պատրուսել խըլմէք ․ գիտնալըն է պիլմէք ․
Քամելըն է սիւզմէք ․ տխպօնել տիւզմէք ․
լողալ տիկ հանել՝ երկուքնալ իւզմէք ․
Ծ ապլիքն է կեօլմէք ․ ղըվլիճն է չեօլմէք ․
Մեռնիլըն է եօլմէք ․ բաժանել պեօլմէք ․
Ընտրելըն է սէչմէք ․ անցանել կէչմէք ․
Խմելըն է իչմէք ․ ձևելըն է պիչմէք ․
Սեղմիլըն է սխմէք ․ վերջիլըն է տինմէք ․
հեծնուլըն է պինմէք ․ իջնուլըն է ինմէք ․
Անապատն է չէօլ ․ և լիճն ասի կէօլ ․
երկուք բաժանէ ․ ասի իքի պէօլ ․
Զարկելըն է վուրմագ ․ լարելըն է գուր-
մագ ․ կանգնիլըն է տուրմագ ․ նստիլըն
օթուրմագ ․
Երթալըն է վարմագ ․ ձեղքելըն է եար-
մագ ․ փաթթելըն է սարմագ ․ և մատն է
պարմագ ․
Կախելըն է ասմագ ․ կոխելըն է պասմագ ․
նեղել նեղցնել ․ գսմագու գասմագ ․
Լաչակն է եաշմագ ․ մաշիկն է պաշմագ ․
զեղլըն է տաշմագ ․ չխփորիլ շաշմագ ․
Վառիլըն է եանմագ ․ զովանալ գանմագ ․

կարծելն է սանմանգ · զարմանալ թանմանգ ·
Խուճեն է սայմանգ · տարածել եայմանգ ·
սեր և սրկրթիլ, երկուքնալ դայմանգ ։
Սեղմիլն է սղմանգ · դիղեն է երղմանգ ·
գաղտուկիկ փախչիլ, կիզլիճէ թղմանգ ։
Ռանուլն է ալմանգ · գողնալն է չալմանգ ·
սուլիլն է տալմանգ · միսալն է գալմանգ ։
Պակիլն է եաթմանգ · Ջրսուզիլ պիթմանգ ·
Նետեն է աթմանգ · մերձիլն է չաթմանգ ։
Լեղեն է սրգմանգ · կրաիլն է որգմանգ ·
եղանել չգմանգ · կործանել երգմանգ ։
Ճ տանալն է ազմանգ · փորելն է գազմանգ ·
գրրելն է եազմանգ · ավրրել պօզմանգ ։
Որուն է պադլա · գլխադրոր թադլա ·
յօշաթէ գադլա · և պահէ սադլա ։
Ռարունակ ասմա · կոխածու պասմա ·
կօշիկ կամ այլ խրաց՝ տիզկէ ու թասմա ։
Կրունկն է թուռնա · սրբինկն է զուռնա ·
քար փորիկ գուռնա · սուտ ըսօղն օռնա ։
Ցին տուխ չայլադ · աւարա այլադ · խո-
տոց սրտաբաց, տեղլին է եայլադ ։

Լերտէ գաւկա կեօրիւրսէն գաչ օրտ-
տան · էլէ ույուպ աթմա սէնի փարատան ։
Սէնաէն պեօյիւք քիմսէ իլէ եարըշմա ·



էլին

էլին կիւնիւն գավկաալընա գարըշմա։
Պիր իշ իշլէ քիմ սէնինլէ կիթսին օլ․
իշլթէ տօղրու ամէլ, իշլթէ տօղրու եօլ։
Սեօյլէր իքէն ախընէր իքէն տաւըրլան․
Ճանաւարտըր նէ ինսանտըր նէ հայվան։
Օ խըրա պիր տիր գուտուրմագլա տաւըլ-
մագ․ չալթընգ․ փաթընգ տախի եաւըլմագ․
Տաւըլանըն աքլը Փիքրի տաղըլըր․
տէլի ինէքտէն նի՞ ճէ սիւտ սաղըլըր․
Պիր իւզինէ պագ քի նէ հալ իւզրէ տիր․
հէր թարաֆը ղայրի ահվալ իւզրէ տիր․
Իւզի կեօզի՝ սէսի սեօզի թէրս տեօնէր․
զէրրէ Փիքրի վար իսէ օ տա սեօնէր․
Սեօյլէմէք տէյնէմէք պիլմէզ պաղըրըր․
իթ կիպի իւրէր՝ էշէքճէ անկըրըր։
Վ․ իմի սարհօշ տուր պու խուլգըն եա խու-
մար․ այըգ օլ տուր՝ քիմ ճիհանտէն կեօզ
իւմէր։ Վ․ իմիսի սարխօշ տուր պու խուլգըն
եա խումար․ պեօյլէ իքէն ճիւմլէսի
ճէննէթ ումար։

Օլ քիշի քիմ պու ճիհանտէն իւմտու
կեօզ․ պուլտու րահէթ եագաալըն օնա նէ
սեօզ։ Փէք սագըն էլ գայպէթինտէն քէս
տիլին․ ալմա պօյնունա կիւնահըն պու էլին
Պիր քիշինին քիմ տիլի գայպէթտէ տիր․
օլ տիլ ուճուննան պաշը միհնէթտէ տիր։


Ս՝էր

Մէրտիսէն քէնտի այպըն գըւ նազար ·
սանմա էլ այպընտան էյ տօստ նէ զարար ։
Կարնընա մալընա կիրմէսին հարամ ·
քի օլասըն ալլահըն գուլըու թամամ ։
Սէր հարամ կիրիրսէ էյ տօստ մալընա ·
ախըր օլ մալ եա ըլթէ եա չալընա ։
Հարամ մալ կիւվէսի տիր կիրսէ մալա ·
եօզ օյուր ճիւմլէսի վայ կէլիր հալա ։
Բ.խմ քի խուզ գօյա այագ լար ալթընա ·
ալսան ազ տըր օնու խուզ պին ալթընա ։
Իսթէր իսէն օլասըն էմսան թամամ ·
տատըլը չիրին սէօյլէ խալգըլա քէլամ ։
Սէօյլէր իսէն տօղրու սէօզ չիրին քէլամ ։
քեամիլ ինսանըն մուհագգագ վէսսէլամ ։
Պիր գ՛չ կիւն էօմր իչին տիւնեա իւզին
տէ՝ նէ պու մինէթ սանքի տէրեա իւզին
տէ ։ Բ.խմ քի խալգա տայըմ էյլէր էյլէյէ
պու տիւնեաատէ սանքի պէյլէր էյլէյէ ։

## Ա.Ւ.Ր.Տ.

Տպեցաւ Գրքոյկս ողորմութբն այ
'ի Թուին Հայոց ՌՄԾԶ · և կատարե_
ցաւ 'ի փետրվարի ժԶ ։

30/III